



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ



ԱՄՏԵԼԺՈՒԹԻՒՆՆԵՐ



891.99
Խ-89



500
0
C

891.99

10-89

02 FEB 2011

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

[Handwritten signature]

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Մն. Մարտիրոսանցի

PRINTED IN RUSSIA

23.04.2013

32274

Дозволено Цензурою. Тифлисъ 15-го Октября 1903 г.



3786-74



J. P. ...

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Handwritten text in a cursive script, likely Georgian, located on the left page.

ბრჭბრ

Ն Ա Ր Ե Ր Գ Ը Ն Ք

Լեռներ, ներշնչւած դարձեալ ձեզանով,
Թընդում է հոգիս աշխուժով լըցւած
Եւ ջերմ ըղձերըս, բախտից հալածւած,
Ձեզ մօտ են թըռչում յախուռն երամով:

Ձե՛զ, ձեզ վերըստին, ամպամած լեռներ,
Կեանքի արխրութեան ամպերի տակից
Ես ձայն եմ տալիս և ծանրաթախիժ
Հոգուս ձայները ձեզ բերում նըւէր:

Քեզ մօտ եմ գալիս, իմ հին արամութիւն,
Վեհափառ դայեակ մանուկ օրերիս,
Այնժամ էլ շէիր ինձ հանդիստ տալիս՝
Սըրտիս ականջին լսօսելով թաքուն...

Ո՛վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ
Հազար ցաւերով, հազար ձեւերով,
Ոգևորութեան հըզօր թեւերով
Քեզ մօտ եմ գալիս, հայրենիք իմ հէք:

Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով
Քս ծաղիկներին ծաղիկ աւելցնեմ,
Այլ դառն հեծութեան հառաչանքներով
Այդ անդընդախոր ձորերըդ լըցնեմ:

Ձորեր, այ ձորեր, սեւ, լայնաբերան,
Սըրտիս այս խորունկ վերքերի նրման,
Աստծու հարւածի հետքերն էք դուք էլ,
Ձեզ մօտ եմ գալիս, ուզում եմ երգել:

Դուք էլ խօսեցէք, դուք էլ պատմեցէք,
Ձեր անդունդներով եկէք շափեցէք,
Դուք էլ էք, տեսնեմ, այնքան մեծ ու խոր,
Հոգուս անյատակ թախիժն է ինչ որ...

1890.

Գ Ո Ւ Թ Ը Ն Ի Ե Ր Գ Ը

Արի, գութան, վարի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Աւր շուռ տուր, խոփիդ դուրբան,
Օրհնեալ է Աստուծ, հօրուէ՛լ:

Քաշիր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշիր՝ քաշինք, վար անենք.
Ճիպարին արա, քըշիր, հօտաղ,
Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատէրը գանգատ գընաց,
Քեօխւէն կըգայ, կըծեծի,
Տէրատէրն օրհնեց, անվարձ մընաց,
Գըբարկանայ, կանիծի:

էն օրն եկան թօշի արին,
Հարկ են ուզում տէրութեան.
Ինչ տամ կուին ու բէգեարին...
Վարի, վարի, իմ գութան:

Ձեռքս պակաս, ուժքս հատած,
Հագար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տուն լիքը մանուկներ:

Արի, դուժան, վնասի, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առ շուռ տուր, խփիլիղ դուրբան,
Օրհնեալ է Ասուած, հօրուէ՛լ:

1887.

Հ Ի Ն Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Կանաչ, վիթխարի ընկուղենու տակ,
Իրենց հասակի կարգով, ծալալատակ,
Միատին բազմած,
Մի շրջան կազմած,
Քէֆ էին անում
Եւ ուրախանում
Մեր հըսկայ պապերն ու մեր հայրերը՝
Գիւղի տէրերը:

Մենք, առոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ,
Երեք դասընկեր,
Նըրանց առաջին զըլխարաց կանգնած,
Ձեռքներըս խոնարհ սըրտներիս զըրած,
Զի՛լ, ուժեղ ձայնով նըրանց ըսպասում
Տաղ էինք ասում:

Երբ զըւարթաձայն մեր երգը լըռեց,
Մըռայլ թամազէն բեխերն ոլորեց,
Նըրա հետ վերցըին լիք բաժակները
Բոլոր մեծերը
Ու մեզ օրհնեցին.—Ապրէք, երեսէք,
Բայց մեզ պէս չապրէք...

ժամանակ անցաւ, նրանք էլ անցան,
Զըւարթ երգերըս վըշտալի դարձան.
Եւ ես յիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս
Ինչու ասացին.—Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք...

Խաղաղութիւնն ձեզ, մեր անբախտ պապեր.
Ձեզ տանջող ցար մեզ էլ է պատել:
Այժըմ, ամբողջեան թէ քէֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեր դաւակնելին՝
Ձեր խօսքն ենք ասում.—Ապրէք, երեխէք,
Բայց մեզ պէս չապրէք...

1887.

Է՛Յ, ԸՍՏՂԵՐ

Է՛յ, ասողներ, ասողներ,
Երկրնքի աչքեր,
Որ այդպէս վառ-վառ
Ժըպտում էք պայծառ.
Ժըպտում էիք դուք,
Երբ ես, դեռ մանուկ,
Աշխոյժ ու կայտառ,
Ձեզ նըման պայծառ
Թըրվըռում էի
Ու ցաւ շունէի:
Ժըպտում էք այսօր,
Երբ թոյլ ու անզօր,
Կորած յոյսերիս
Կըսկիծն եմ լալիս...
Կըժըպտաք նաև
Ձիրիմիս վերև...

1890.

Հ Ա Մ Ե Ր Գ

Վրտակը ժայռից ներքև է թըռչում,
Թափ առած ընկնում քարերի գլխին,
Ջարկում աւաղին, շաշում է, ճըշում,
Ճըշում անհանգիստ, փըրփուրը բերնին:

Ինչպէս ծերունին, ձայնով պառաւած,
Ձայնակցում է ժիր թոռնիկի երգին,
Այնպէս է ծերուկ անտառը կամաց
Արձագանք տալի ջրրի աղմուկին:

Սակայն բընութեան զըւարթ համերգի
Ունկընդիրն անխօս, յաւիտենական,
Ժայռը մըտախոհ իր մըռայլ մըաքի
Ետեից ընկած լըսում է նըրան:

1890.

Մ Ի Ո Ր Ո Ն Ի Ր

Մի որոնիր՝ մի ժամանակ
Արհամարածդ՝ այս կըրծքի տակ,
Հառաչանքով դուրս թըռաւ նա
Ու գատարկ է տեղը հիմա...

Էլ մի կանչիր, մի լար իդուր.
Քո արցունքից միայն տըխուր
Հին հին յուշեր պիտի դարթեն,
Եւ ի՛նչ օգուտ... ո՛ւշ է արդէն...

1890.

ԱՐԻ, ԵՍ ԵՐԱՆԻ

ԱՐԻ, ԵՍ ԵՐԱՆԻ
Կայծակ լինէի,
Որոտ-ճայթիւնով
Մըռայլ ամպերից
Ժայթքէի ըմբոստ
Ջարկէի ուժգին,
Պատռէի խաւար
Կամարը երկնի,
Յոյց տայի մարդուն
Գաղանիքը վերին,
Որ տեսնէր՝ այնտեղ
Ի՞նչ բան կայ անհղ,
Կամ ո՞վ է նրստած
Եւ ո՞ւր է Աստուած...

1891.

ՍԱՐԵՐՈՒՄ

Մուժը իջաւ, գետինն առաւ
Քօշաքարայ սարերում,
Գաղաթների տեսքը կորաւ
Ու խոր թաղեց խաւարում:

Երկինքն ամպած, ախուր ու սև
Լաց է լինում միայլար,
Հեռո՛ւ-հեռու լիբան հաե
Խաղում վայլակն անդադար:

Ահա վայլեց և մօտիկից,
Լուսափայլեց սար ու ձոր,
Ոլորեցիով, սարի տակից
Գետը վազում է պըղտոր:

Մենակ, անքուն հովին անհա
Կանգնած իրեն արխաջում,
Արթուն աչքով հըսկում է նա,
Գողից երկիւղ է քաշում:

3786-74



Փայլակն ահա փայլեց կըրկին,
Նըրա կարմիր լուսի տակ,
Բինից հեռու, երևացին
Երկու մարդու կերպարանք...

Ամպը, գոռաց ու տըրաքեց,
Եւ անձրերը սաստկացաւ,
Հովիւն—«հէյ հէյ...» աղաղակեց,
Չունը թեից վեր կացաւ...

1891.

Ո Ւ Ր Ո Ւ

Դո՛ւ ես, իմ սիրո՛ւն,
Այն չըքնաղ ուրուն,
Որ զըրկում է ինձ
Գիշերը քընից:

Դո՛ւ ես գըրկարաց
Յայտնըւում յանկարծ,
Ուզում ես գըրկել
Ու, յանկարծ, մէկ էլ
Խաւարի միջում
Սահում ես, կորչում...

Դո՛ւ ես ծիծաղով
Կամ ծանօթ ձայնով
Մեր սիրած երգի՝
Իմ լուռ սենեկի
Մօտից հեռանում
Գիշերւայ մըթնում...

Ասա՛, իմ սիրո՛ւն,
Դո՛ւ ես այն ուրուն,
Որ զըրկում է ինձ
Գիշերը քընից...

1891.

ԻՄ ՍԷՐԸ

Ես սիրելի եմ վարդը տըժգոյն
Սիրուց տանջւած այտերի,
Մեղամտով խաղաղութիւն
Զոյգ սևորակ աչքերի:

Ես պահել եմ սըրտիս խորքում
Մի լուռ գաղանիք սիրային,
Եւ այն երբէք, ոչ մի երգում
Յայանելու չեմ աշխարհին:

Բայց ե պահել անկարող եմ,
Օ, դըժւար է համբերել,
Չ'ասել՝ ինչով բողբուռ եմ,
Չ'ասել՝ ինչպէս եմ սիրել:

1892.

ԿԸՐՕՏ

Սըրտիս թագուհի,
Կարօտելի եմ քեզ.
Ա՛խ, ի՛նչ կըլինի
Յանկարծ յայտնուես
Եւ, թէկուզ իսկոյն,
Դարձեալ շրքանաս,
Ինչպէս գիշերան
Կարճատև երազ,
Միայն թէ տեսնեմ
Պատկերը մէկ էլ,
Միայն թէ ասեմ՝
Ո՛հ եմ կարօտել:

1892.

ՎԼՏ ՕՐԵՐ

Յուրա է, իմ ընկեր, ու հողմ ահագին.
Սև թևերը լայն վըռած մեր գրվածին
Որոտում է խուլ երկինքը խաւար.
Դէս ու դէն ցըրւած ամպերն հողմավար
Փընտրում են, սսես, մի տեղ-օթևան,
Մսլորւած մարդու մըտքերի նըման:

Սյս խաւար, ճընչող, ցուրտ մըթնօրրտում
Հանգիստ չեն, ընկեր, նաև իմ հողում
Իմ վեհ ցընորքներն, իմ տենչերն աննենգ.
Նոյնպէս հալածւած՝ նըրանք էլ երբէք
Չեն կարողանում գըրանել ապաստան,
Երկընքի ցըրւած ամպերի նըման:

1892.

ԻՄ ԵՐԳԸ

Ինձ մի խընդրիր, ես չեմ երգի
Իմ տըխրութիւնն ահագին,
Աղեկըտուր նորա ձայնից
Կըխորտակի քո հողին...
Ո՛չ, քեզ համար այսպիսի երգ
Երգելու չեմ ես երբէք:

Ես երգեցի սարի վըրա
Ու չորացան խոտ ու վարդ,
Անապատ է այնտեղ հիմա,
Ս՛հ, ամայի անապատ:
Հաւաչանքից այրւած սարում
Էլ ծաղիկ չի դալարում:

Բոյր ու զեփուռ ես կուզէի
Եւ արշալոյս ոսկեփառ,
Որ մի պայծառ երգ հիւսէի
Ու երգէի քեզ համար...
Բայց իմ սիրալը բըռնած են դեռ
Հուր հաւաչանք, սև գիշեր:

1892.

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ւ Ը Մ Պ

Վաղուց թողած բարձր ու կանաչ
Գահը իրենց հանգըստութեան,
Երկու սև ամպ հողմի առաջ
Գընում էին հալածական:

Հողմը սակայն չար հոսանքով
Բաժանել չէր կարողանում,
Որքան նըրանց լայն երկընքով
Իէս ու զէն էր քըշում, տանում:

Եւ անդադար գընում էին
Քըշւած հողմի կատաղութեամբ,
Իրար կըպած ու միասին
Երկու սև ամպ, երկու սև ամպ...

1894.

Ը Յ Վ Ը Զ Ո Վ Ս Կ Ո Ւ Ն Կ Ը Ր Ի Ը Ռ Զ Ե Ւ

Ելած՝ ովկիանի անգուսպ ալիքներ
Ծանրը յորձանքով զարկելով դէպ վեր
Լեռնանում էին գոռալով ահեղ,
Եւ մըրրիկն ուժգին շընչում էր այնտեղ
Անեղը ու անվերջ
Տարածութեան մէջ:

«Կանգնեցէք», գոչեց վըրձինը ձեռքին
Կախարդ ծերունին յուզւած տարերքին.
Եւ լուռ, հընադանդ հանձարի ձայնին,
Մութ ալիքները, փոթորկի ժամին,
Կըտաւի վըրա
Կանգնած են ահա:

1894.

Ժ Պ Տ ՈՒ Ն Ա Չ Ք Ե Ր

Դու մի հաւատալ ժըպտուն աչքերին,
Չատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ,
Բուսած կորըստեան անդունդի ծայրին
Միամիտ մարդկանց քարչելու համար:

Ահա պօէտն էլ, պատրանքով հարբած,
Գերեց մի անգամ ժըպտուն աչքերի,
Ու սրբան տանջեց, տառապեց խարած,
Ու սրբան սըրտում գանգատներ ունի...

Դու շատ մի խարելը ժըպտուն աչքերից,
Չատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ,
Ծըլում են սըրտի աւերակներից
Տըխուր յատակը ծածկելու համար:

Ահա պօէտն էլ՝ տառապած մի մարդ
Ու սըրտում այնքան գանգատներ ունի,
Բայց յաճախ այնպէս ժըպտում է զըլարթ,
Ասես թէ քեզնից բախտաւոր լինի:

1894.

Ե Թ Է Մ Ի Օ Ր

Եթէ մի օր, աննշ ընկեր,
Դաս այցելու իմ շիրմին
Ու նորարոյս վառ ծաղիկներ
Տեսնես փըռած շորս կողմին,

Դու չըկարծես թէ հասարակ
Ծաղիկներ են ոտքիդ տակ,
Կամ թէ դարունն է այն բերել,
Իմ նոր տունը դարդարել:

Նրանք չերգած իմ երգերն են,
Որ սրտումըս ես տարայ,
Նըրանք սիրոյ այն խօսքերն են,
Որ դեռ չասած ես մեռայ:

Նրանք իմ ջերմ համբոյրներն են,
Այն աշխարհից ուղարկած,
Որի ճամբէն քո առաջն
Գերեզմանով է փակւած...

1894.

ԱՆԳՆՐՁ ՃԱՄԲՈՐԳՆԵՐ

Իմ անցած կեանքն ու հին տարին,
Երկու անգոր ծերի նրման,
Զըրոյց տալով զընում էին
Դէպի աշխարհն յաւերժական:

Մինն ասում էր.— Ես ունէի
Թարմ ու բուրեան ծաղիկներ,
Ու բոլորը մարդկանց տըլի
Գարնան զըրկովն առատաբեր:

Միւսն ասում էր.— Ես ունէի
Չատ ըզգացմունք ու կորով,
Ես էլ ամբողջ նըրանց տըլի
Սիրանըէր երգերով:

Մինն ասում էր.— Ես թողեցի
Ձըմեռ ու սեւ էն հովտում:
Միւսն ասում էր.— Ես թախժալի
Մի սիրտ անյոյս ու տըրտում:

Մինը ասաւ.— Բայց կըծաղկի
էն հովիտը նորից նոր:
Միւսը այստեղ ոչինչ չասաւ
Ու զընում էր զըլլահկոր...

Այսպէս իմ կեանքն ու հին տարին,
Երկու անգոր ծերի նրման,
Զըրոյց տալով զընում էին
Դէպի աշխարհն յաւերժական:

1897.

ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ

Տանջում եմ անքուն գիշերն անկողնում,
Տանջում յուսահատ, վաստակած, տրկար,
Ու մըտքերն հոգիս հանգիստ չեն թողնում,
Ու գիշերը մոռցի, գիշերը երկար:

Ա՛խ, մի ժամանակ, և դեռ նոր էր այն,
Մայրական գիրկ էր աշխարհն ինձ համար,
Հըրճւանքը սըրտիս չէր թըլում ունայն,
Ոչ գիշերն այսպէս տաղտկալի, երկար:

Է՛հ, անցաւ, գընաց. և՛ ցընորք, և՛ սէր,
Եւ ոյժ, և՛ եռանդ—կորաւ՝ ինչ որ կար,
Եկան սև օրեր ու ծանրը հոգսեր
Ու դարձրին այսպէս գիշերը երկար:

Տանջում եմ անքուն այժմ անկողնում,
Եւ յուսակըտուր, յոգնած, ուժասպառ
Նայում եմ, նայում, դեռ չի լուսանում.
Ա՛խ, այս գիշերներն ի՛նչքան են երկար:

1897.

ՏՐՏՄՈՒԹԵԸՆ ՍԸՂՄՈՍՆԵՐԻՑ

Ասուած, ինչպէս ծուխ օրերըս անցան,
Ոսկերքըս, ինչպէս խըռիւ, չորացան,
Սիրտըս ցամաքեց, ընկայ խոտի պէս,
Ճամբէս մոռացայ ահագին վըշտէս:

Հացըս նախատինքն եղաւ օտարի,
Հանգիստըս ճամբում հալածանքների,
Լըսեցի ցերեկն աղաղակ ու բօթ,
Գիշերը լացի մինչև առաւօտ:

Տըքնեցի, ինչպէս բու աւերակում,
Ինչպէս միայնակ ճընճղուկ տանիքում...
Ասուած, տանջանքից ուժերըս հատան,
Մի՛թէ չըհասաւ ժամը փըրկութեան:

1898.

Տ Ր Տ Մ Ո Ւ Թ Ե Ը Ն Ս Ը Ղ Մ Ո Ս Ն Ե Ր Ի Յ

Տէր, մինչև երբ մեր աչքերը Քեզ մընան.
Մեր գոյժն հասաւ հեռո՛ւ-հեռու աղբերին,
Աշխարհ լըցւեց մեր աղաղակ, մեր կական,
Ու չի անցել մեր տանջանքը տակաւին:

Ինչո՞ւ, Աստուծ. որբերն արդեօք հայրական
Գութըդ կօրհնեն կոտորածի այս ձորում,
Թէ տարագիր պանդուխտները կը պատմեն
Ողորմութիւնդ օտար-օտար ասիերում:

Մի՞թէ, Աստուծ, դեռ բաւական չըտեսար
Այսքան աներ, վիշտ ու ցաւեր, հեծութիւն,
Մի՞թէ, Աստուծ, հաճելի չեն քեզ համար
Սղօթք ու սէք, կեանք ու տաղեր զըւարթուն:

1898.

Տ Խ Ո Ւ Ր Գ Ի Շ Ե Ր

Տըխո՛ւր գիշեր, տըրտա՛ւմ գիշեր.
Վիշտս ու ես ենք արթուն մենակ
Եւ ուզում ենք մի լաւ յիշել,
Թէ որտեղից իրար զըտանք:

— Ասո՛ւ, իմ վիշտ, իմ սե թախի՛ծ,
Այ անբաժան կեանքիս ընկեր.
Դու ո՞ր օրից կամ սրտեղից,
Ի՞նչ գէպքով ես ինձ հետ ընկել...

Ու գալի՛ս են սե.սե յուշեր...
Տըխո՛ւր գիշեր, տըրտա՛ւմ գիշեր...

1898.

Ի Ն Չ Ո՞ Ի Ա Յ Դ Պ Է Ս

— Ինչո՞ւ այդպէս ինձ մոռացար,

Ասաւ աղջիկն ինձ մի օր:

— Ինչո՞ւ այդպէս մեզ մոռացար,

Գանգատեցին սար ու ձոր:

— Ո՞հ, մի հարցնէք, հին ընկերներ,

Ինչու էլ չեմ երգում ձեզ.

Չաս եմ փոխել այն օրից վեր,

Այնպէս մի ցաւ ունիմ ես...

— Ի՞նչ է ցաւըդ, մի ճար անենք,

Ասաւ աղջիկն անձնընէք.

— Ի՞նչ է ցաւըդ, տնւր, մենք տանենք,

Ասին սարերն ու ձորեր:

— Ո՞հ, չէ, սիրուն, էլ ոչ մի սէք

ձար չի անիլ իմ սըրտին,

Դուք էլ, անուշ սար ու ձորեր,

Չէք դիմանալ էս դարդին:

Ա՛խ, իմ դարդը... Բայց ս՞նց անեմ,

Որ իմ դարդը իմանաք.

Սիրաբա խորն է, թէ բաց անեմ,

Սիրաբա խո՛րն է, լեզուս՝ փակ...

1900.

Մ Ե Ր Կ Ե Լ Խ Ո Ր Գ Կ Ե Ր Ի Ն

Երանի՛ր էր ձեզ, գովւած երգիչներ.
Գուք երգում էիք վաղ առաւօտեան,
Երբոր երազներն ապրում էին դեռ,
Ոսկի երազներն հայի վըրկուլթեան:

Ձեր թարմ երգերում կար մի հայրենիք,
Խըրոխտ, վհապանծ, թէպէտե գերի,
Եւ ձեր քընարի ձայներն երջանիկ
Լիքը հըրճանքով գալոց օրերի:

Ա՛խ, նա յօշոտեց մեր աչքի առջև
Եւ մեր ըզգայուն սըրտերն իրեն հետ,
Ոսկի երազներ, միրաժի նըման,
Մեր անապատում չըբացան անհետ:

Եւ մենք խորտակւած մեր կեանքի ծէգից,
Ենյոյս ու դալուկ, ճակատներըս ցած,
Ընկնում է քընար մեր մատող ձեռքից,
Ընկնում են սըրտից եւ երգ, եւ Աստուած:

1902.

Ը Ն Կ Ե Ր Ի Ս

Իմ վեհ անշերի, շըքնաղ վըշտերի,
Վառ երազների մըտերիմ ընկեր,
Գու էլ ինձ նըման՝ պանդուխտ ու գերի,
Անդուսպ կարօտով ձըգտում ես միշտ Վեր:

Այնտե՛ղ, մեր հոգու սուրբ հայրենիքում,
Խաղաղ օրերի պայծառ լուսի տակ
Ապրում է սէրը, ժըպիտը ծաղկում,
Ուրախ երգերը թընդում ներդաշնակ...

Բայց, ա՛խ, նա այնքան, այնքան է հեռու.
Ու՛ մինչև այնտեղ կըհասնենք մենք դեռ,
Այնքան ենք լալու, այնքան տանջելու,
Իմ տանջանքների մըտերիմ ընկեր:

1902.

ԳՈՒՆ ԳՈՒՆ ԺԱՄԲԵՆ

Դու քո ճամբէն գընա, քոյրիկ,
Եւ թող լինի նա պայծառ,
Ինձ մի ժըպտար, ինձ մի սիրիք,
Ես ընկեր չեմ քեզ համար:

Ելած կեանքի ամեն ճամբից,
Կարօտներով անմեկին,
Ազահ, անվերջ ու անհանգիստ
Թափառում է իմ հողին:

Մի ձեռք չըկայ, մի գիրկ չըկայ՝
Պահի նըրան իրեն մէջ,
Խենթ, խելագար գընում է նա
Ձըգտումներովն իր անվերջ:

Եւ ս'իլ գիտէ՝ դեռևս անմեղ
Քանի հողի կըտանջի,
Եւ ս'իլ գիտէ՝ ինչ մութ, ասեղ
Անպատում կըհանգչի...

Դու քո ճամբէն գընա, քոյրիկ,
Եւ երբ լինինք մենք հեռու,
Աղօթք արա, որ միւս անգամ
Ձըհանդիպենք իրարու:

1902.

Պ Ա Ն Գ Ո Ւ Խ Տ Ե Մ, Գ Ո Յ Ր Ի Կ

Պանդուխտ եմ, քոյրիկ, մանուկ օրերից.
Գընում եմ գէպի մի անյայտ երկիր՝
Կըտըրւած կեանքի ամեն կապերից,
Մենակ, տարագիր:

Հալածում են ինձ անցած օրերը,
Ներկայ ժամերը հանգիստ չեն տալի,
Յողնած են վաղուց իմ թոյլ ոտները
Ու սիրտս աւելի:

Բայց գընում եմ ես հալածւած նորից,
Ամեն վայելքից ու բախտից հեռու,
Նոյնիսկ հայրենի հողից ու ջրից,
Ինչպէս եղջերու:

Եւ դու, հանդիպած իմ դըժար ճամբում՝
Ասում ես՝ արդէն բախտաւոր եմ ես.
Իզուր եմ փախչում, իզուր գանգատում
Ու տանջւում այսպէս...

Ո՛վ դու միամիտ: Բայց, երկինք վրկայ,
Չեմ եղիլ երբէք ես այդքան ըստօր,
Որ կարենայի այս գաժան բանտում
Լինել բախտաւոր:

Չեմ եղիլ, քոյրիկ. բոլոր օրերը
Տառապանք բերին, կորուստ ու կըսկիծ,
Եւ կեանքի հաճոյքն, և կընոջ սէրը
Ընկան իմ սըրտից:

Ես էլ վիրաւոր գընում եմ փախած՝
Անյայտ օրերի խաւարի ընդդէմ,
Ամենքից զըզւած, ամենքին թողած,
Քեզ էլ կըլծողնեմ...

Ու՛ ինչպէս սե օձն իր հուլը անդին
Հաւատում է միայն խաւար երկընքին,
Էն սե օձի պէս՝ ես էլ կըգընամ
Ու սե գիշերին սիրաբո կըբանամ:

ԼԵԳԵՆԴՆԵՐ

ՇՈՒՆՆ ՈՒ ԿԵՏՈՒՆ

I

Ժամանակով Կատուն ճոն էր,
Զունն էլ գլխին գրգռիկ շունէր,
Միայն, գիտեմ ոչ՝ որդիանց որդի
ձանկել էր մի գառան մորթի:
Եկաւ մի օր, ձմեռնամբարին,
Կատուի կուշար տարաւ մորթին:

— Բար՛ աջողում, ուստա Փիսօ,
Գլուխըս մըրսեց, ի սէր Ասծոյ,
Ա՛ն էս մորթին ու ինձ համար
Մի գրգռիկ կարի գլխիս յարմար:
Վարձիդ համար միամիտ մընն,
Համա-համա շատ շուշանայ:

— Աչքիս վըրայ, քեռի Քուշի.
Մի գրգռիկ ա, հօ մի քուրք չի.
Քու թանգագին խաթեր համար
Ուրբաթ օրը համեցէք տար:
Փողի մասին աւելնորդ ա,
Մեր մէջ խօսալն էլ ամօթ ա.

Ինչ մեծ բան ա, տօ հէր օրհնած,
Միանն, միանն մի գդակի վարձ:

Ուրբաթ օրը քեռի Քուշին
Ուտից առաջ բաց-բաց կուճին
Թափ թափ տալով՝ ծանդըր ու մեծ
Ուտա Կատի շէմքում կանգնեց:
— Ուտէն սւր ա... փափախս սւր ա...
— Մի քիչ կնցի, հրէս կերեայ:

II

Ուտէն եկա քուրքը հագին,
Չանը տեսա, բեզի տակին
Իրեն-իրեն քիչ փընթփընթաց,
Ու մուշտարու վըրայ թընդաց.
— Յուրաք տարսու... վահ, տընաշէն,

Չես թող անում մի շունչ քաշեն.
Ջեշտ բան հօ չի, հըլա նոր եմ
Յըրցամ տըւել, թէ որ կարեմ:

— Գէ հէր օրհնած, էտէնց ասա,
Էդ բարկանալդ էլ ընչիս ա:
Փող եմ տըւել, վախտին կարի,
Թէ չէ՛ ասն էգուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
Համ խօսում ես, վըրէս գոռում,
Համ, համ, համ, համ,
Քանի՛, ախպէր, գընամ ու գամ...

Ասա Քուշին ու ներացած
Վերադարձաւ գըլուխը բաց:

III

Մին էլ եկաւ, դարձեալ չըկար.
Էս անգամը դիպան իրար...
Էլ անպատիւ, պետուը խօսքեր,
Էլ հին ու նոր, էլ հէրն ու մէր,
Էլ գող Փիսօ՛, էլ քաշալ Չո՛ւն...
Բանը հասաւ դիւանբաշուն:
Չունը մինչև գընաց, եկաւ,
Ուտա Կատուն կոտըրն ընկաւ,
Գըլուխն առաւ ու մի գիշեր,
Հայդէ, կորաւ. էն կորչիլին էր...

IV

Էն օրւանից մինչև օրս էլ
Չունն էս բանը չի մոռացել.
Մըտքում հըլա դեռ պահում ա.
Որտեղ Կատին պատահում ա,
Վեր ա թըւում, վըրայ վաղում,
Իրեն մորթին ետ ա ուզում,
Իսկ սեւերես Կատուն յանկարծ
Ետ ա դառնում ու բարկացած
Փըշտացնում ա. մըթամ նոր եմ
Յըրցամ տըւել, թէ որ կարեմ:

Ա Խ Թ Ա Մ Ա Ր

Ծիծաղախիտ Վանայ ծովի
Փոքրիկ գիւղից առափնեայ
Ծովն է՝ մըսնում դադազողի
Ամեն զիշեր մի տըղայ:

Ծովն է մըսնում, առանց նաւակ,
Բազուկներով առնացի
Ջուրը ճողփում, լող է ապի
Գէպի կըզղին զիմացի:

Խաւար կըզղուց պարզ ու պայծառ
Մի լոյս կանչում է նըրան,
Մի վառ փարոս նըրա համար,
Չըմուտրի իր ճամբան:

Սիրուն Թամարն ամեն զիշեր
Այնպէս կըրակ է անում,
Եւ ըսպասում է անհամբեր
Այնտեղ՝ մօտիկ դարանում:

✽
* *

Ծըփում է ծովն ալեծածան,
Ծըփում է սիրտը արդի.
Գոռում է ծովն անեղածայն,
Նա կըռւում է կատաղի:

Եւ Թամարը սըրտաաըրտի
Արդէն լըսում է մօտիկ
Ջըրի ճողփիւն, ու ողջ մարմնով
Սիրուց այրւում է սաստիկ:

Լըռեց: Ծովի լսաւար փիլին
Կանգնեց սե-սե մի ըստեր...
Ահա և նա... իրար գըտան...
Կասկածաւոր լուռ զիշեր...

Միայն ալիքը Վանայ ծովի
Մեղմ զիպչում են փեքքին,
Նըրհըրելով հեռանում են
Չըշունջներով անմեկին:

Նըրանք ասես փըսփըսում են...
Ու աստղերը կամարից

Ակնարկելով բամբասում են
Լիրը, անամօթ Թամարից...

Բամբասում են կուսի սըրտում...
Փամ է արդէն... ու կըրկին
Մինն ալեկոծ ծովն է մըանում,
Միւսն աղօթում եղերքին...

*
* *

Բայց միանգամ շարկամ մարդիկ
Նըրանց գաղտնիքն իմացան,
Լոյսը հանգցրին սև ու սաստիկ
Մի մութ գիշեր դիւական:

Մոլորեցաւ խաւար ծովում
Լուղորդ տըղան սիրահար,
Ու բերում է հողմը, բերում
Հառաչանքներն— «Ա՛խ, Թամար...»

Մօտ է ձայնը. խօլ խաւարում,
Փայտերի տակ սեպացած,
Ուր ամեհի ծովն է գոռում,

Մերթ կորչում է խըլացած
Ու մերթ լըսում ուժասպառ,
«Ա՛խ, Թամար...»

*
* *

Առաւօտեան ծովը ծըփաց,
Ափը ձրգեց մի դիակ,
Նըրա շուրթին, սպաղ, կարկամած,
Ասես, մեռած ժամանակ
Սառել էին երկու բառ.
«Ա՛խ, Թամար...»

Այն օրանից սըրա համար
Կըզզին կոչեց «Ախթամար»:

1891.

ԸՆԲԵՆՑ ՎԵՃԵՌՆԵՐԵՆԵՐ

Մի օր Չրդջիկն ու ձայն եկան
Թէ՛ կէ գառնանք վաճառական:
Ասին ու խելք խելքի տըւին,
Հաւան կացան, պայման դըրին.
Բայց՝ արի տես... որ փող չունեն:
Չատ միտք արին, թէ ինչ անեն.
Վերջը եկան Փըշի մօտը,
Ընկան նըրա ձեռն ու ստը,
Ու մուհակով,
Չահով, կարգով,
Փող վեր առան բաւականին,
Ինչքան պէտք էր իրենց բանին:
Չիղջը մընաց, տընպահ դառաւ,
ձայը բոլորը փողերն առաւ,
Առաւ, նըստեց նաւի միջին,
Հասաւ Մըսըր, Չինուճաշին,
Փարս, Հընդըստան,
Արարըստան...
Է՛լ թանգագին քիրմանի շալ,
Է՛լ մարգարիտ, զըմրուխտ ու լալ,

Հընդու խուրճա, փըստա, բաղամ,
Եւ... ս՛ր մէկի անուընը տամ.
Ինչ որ տեսաւ, աչքը սիրեց,
Բօլ-բօլ առաւ, նաւը լըցրեց.
Նաւը լըցրեց հաղար բարով
Ու ետ՝ եկած ճանապարհով
Ուրախ-ուրախ տուն էր գալի:
ձամբին ծովում սարսափելի
Ալեկոծում, մըրրիկ ելաւ,
Երկինք հանեց ալիք ու նա
Ու էնտեղից թողեց ներքե.
Ներքե՛ բացեց որկորը սե՛
Ողջ կըլանեց անդունդըն անյազ:
Մեր սովգաքեար ձայը մենակ—
Ո՛վ իմանայ՝ ում էր աըւած
Իրեն օրում մի կտոր հաց,
Ծովում առաջն եկաւ էն օր—
Ազատեցաւ մերկ ու տըկլոր:
Ազատեցաւ—փառք իր Ասծուն,
Բայց ի՛նչ սըրտով խեղճը գայ տուն.
Գո՛ւ—ի՛նչ ասի պարտքատէրին,
Ո՞նց երեայ իր ընկերին...
Ընկերն էնտեղ՝ դուռը կըտրած,
Աչքը ճամբին, վիզը ծըռած,
Համբում է օրն օրի վըրայ
Թէ՛ մեր ձայը երբ պիտի գայ...
Երկար նայեց,

ձամբէն պահեց,
Չատ լաւ ու վատ երազ տեսաւ,
Մինչև պարտքի օրը հասաւ
Ու՛ մուրհակի թուղթը ձեռին,
Փուշը արնկուկէ կըտար ծէրին:
— Է՛յ, բարեկամ, ի՛նչ բանի էք.
Էլ չէք ասում թէ պարտք ունէք...
Գործ բըռնեցիր, հօրս ողորմի,
Ետ արէք դէ փողըս հիմի:
Թուղթ էք արել՝ վախտ իմացէք,
Ամօթ, արուս, ահ ունեցէք...
Թալան հօ չի... մեղք եմ ես էլ...
Ախպէր, էսպէս բան էք տեսել.
Ոսկի տայ մարդ իրեն ձեռով,
Չըկարենայ առնել զօսով...
Սրանից ետոյ դէ արի դու
Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու...»
Գողգոթում էր ողջ թառակում,
Հայհոյում էր, խայտառակում.
Ամեն մարդ էլ, ով որ լըսում,
Հէնց մի բերան էն էր ասում.
—Ա՛յ ամօթ ձեզ, Չըղջիկ ու ձայ.
Ի՛նչ ենք լըսում.—վայ, վայ, վայ, վայ.
Անունները վաճառական
Ու էս տեսակ խայտառակ բան...
Վայ, վայ, վայ, վայ,
Չըղջիկ ու ձայ...

Չըղջիկն էսպէս միշտ լըսելիս
Սիրտը բերնով դուրս էր գալիս:
Բարկանում էր իրեն մըտքում,
Անիծում էր, չըքում, թըքում.
—Ա՛յ քու տունը քանդուի, ա՛ ձայ,
Ա՛յ դու դառնաս զըրողի փայ.
Էս ի՛նչ բան էր, որ դու արիր,
Գըլուխս էս ի՛նչ փորձանք բերիր...
Ու խընդրում էր ամեն անգամ.
—Մի նեղանար, Փուշ բարեկամ,
Չատ ես կացել,
Կայց մի քիչ էլ.
Թուղթ ստացայ երէկ ձայից,
Թէ դուրս եկայ Արարիայից.
Որտեղ որ է՛ շուտով կըզայ,
Դեռ մի բան էլ աւել կըտայ...»
—Ես չեմ ուզում աւելն, ախպէր,
Կանխիկ համրած իմ փողը բեր.
Չահ էք գըրել,
Վախտ էք գըրել.
Ինչ գըրած ա, էն եմ ասում,
Չեղնից աւել բան չեմ ուզում:»
—Չէ՛, աղա Փուշ,
Թէ վաղ, թէ ուշ,
Փողն իր կարգին, շահն իր կարգին,
Իսկ պատիւը... ես իմ հողին...
Ես յոյս ունիմ... ասենք պարտ ենք...

Բայց չէ՛ ատար մենք էլ մարդ ենք...
25, քու արածն ու մտանայ,
Իր Աստուածն էլ նա կ'ուրանայ...»

Խեղճը էսպէս լեզու ածաւ,
Չատ յոյս տըւաւ, շատ խոստացաւ,
Չատ սուտ ասաւ պարտքատէրին,
Չատ ըսպատեց իր ընկերին.
Բայց ընկերը չըկա՛յ, չըկա՛յ:
— Էս ի՛նչ ցաւ էր, Աստուած վըկայ.
Ի՛նչ իմ բանն էր՝ մըտայ մէջը,
Որ խայտառակ լինեմ վերջը...
Ի՛նչպէս պըրծնեմ էս կըրակից,
էս ահագին պարտքի տակից,
էլ ի՛նչ ասեմ,
Ո՞նց ըսպասեմ.
Նա կըր կըզայ, ի՛նչ իմանամ,
Ո՞ր ջուրն ընկնեմ... ո՛ւմ մօտ գընամ...»
Չատ միտք արաւ,
Դէս դէն թըրաւ,
Ինչ որ ունէր տանը, հագին,
Ողջ հաւաքեց, տըւաւ պարտքին,
Յիփ մերկացաւ,
էլ չըպըրծաւ:
Վերջը տեսաւ, որ ճար չեղաւ,
Թեկը առաւ, ինքն էլ փախաւ,
Փախաւ, կորաւ, որ էլ էնպէս

Դատարկ, սընանկ ու սեւերես,
Ոչ պատահի պարտքատէրին,
Ոչ երկայ լոյս աշխարհին:

Այնուհետեւ, իր նամուսից,
2ըղջիկը մերկ, փախած լուսից,
Յերեկները դէս դէն թագչում,
Գիշերն է միշտ մըթնում թըռչում,
Որ չերկայ իր թայ-թուշին,
Ոչ պարտքատէր աղա-Փուշին:
Ճայն էլ ծովում,
Ճըչում, ծըւում,
Ջուրն է մըանում,
Դուրս է պըրծնում,
Թեկն տալիս,
Ման է գալիս,
Թէ մի գուցէ բախտը բանի,
Կորուստն էլ ետ ջըրից հանի:
Իսկ Փուշն, արդէն յոյսը հատած,
Ճանկ ու ատամ սուր պատարաստած,
Կողքովն ու որ անց է կենում՝
Քաշում է փէշն ու հարցընում,
Թէ չե՛ն տեսել մէկն ու մէկին,
էն լիբը ճային կամ 2ըղջիկին,
Ու էն օրից մինչև օրս էլ
Մէկը մէկին դեռ չեն տեսել:

ԱՆԻԺՆԺ ՀԱՐՍԸ

Վաղ ժամանակ մի հայ շէնում
Մի յարգևոր հարսն է լինում:
Նըրա բերնից՝ կեսուր-կեսառ
Չէին լըսել մի շունչ, մի բառ,
Չէին տեսել շուրթը մի օր...
Էսպէս խոնարհ ու յարգևոր:
Մի օր մենակ օդում նըստած,
Իր ճոխ մաղերն արձակ թափած,
Եղատ, անփոյթ սանրում, հիւսում,
Հեան էլ ձէնով երգ էր ասում:

«Աշխարհը բանա,
Մէջը անբախա
Ես մի գերի անխընդում.
Սիրուն շորեր,
Ջահիլ օրեր
Ի՞նչ եմ անում էս բանում:

Երնէկ ծըտին,
ձիւղբի միջին

Ծըլւըլում է, թըրթըում,
Թըռչում՝ սիրած
Ընկերն առած,
Ազնա, կանաչ արտերում:

Ա՛խ, սև ըլի,
Չըբէի, փըլի
Ծընւած օրը աղջըկայ,
Յաւ ու խընդում
Փակւած սըրտում,
Ծիծաղ շըկայ, «ախ» շըկայ...»

Մին էլ յանկարծ բացեց դուռը
Ու ներս մըտաւ ձեր կեսուրը:
—Յօ, պօ, պօ, պօ, կանչեց խեղճը:
Գետին, պատուի, մըտնեմ մէջը...
—Յօպօպ դառնաս,
Անամօթ հարս:
Մի տես, մի տես,
Թէ լըրբի պէս
Գըլուխը բաց,
Աղատ նըստած՝
Ո՛նց է կանչում,
Չի ամանչում...
Լեղուղ լալկի,
Մաղըգ թաղբի,

Գլխիդ կըպչի
Սանրը միջի:

Առաւ-չասաւ,
Մին էլ տեսաւ՝
Սանրը գլխին
Հարսն առաջին
Յօպօպ դառաւ,
Երգիկից թըռաւ,
Ու վերացաւ,
Վե՛ր, հեռացաւ:

Էն էր ու էն.
Խեղճն էն օրէն
Հանդերն ընկած՝
Յօպօպ մընաց.
Միշտ էլ էն հին
Սանրը գլխին,
Զալլիկ-մալլիկ,
Լեզուն լալիկ,
Անխօս ու լուռ,
Մոլոր, արխուր:

Բայց երբ յանկարծ
Միտն է գալիս,
Որ գլխարաց,
Երգ ասելիս՝

Իր կեսուրը
Բացեց դուռը,
Վեր է թըռչում
Սըրաատըրով
Ու դեռ ճըչում.
— Յօ-պօպ... Յօ-պօպ...

1898.

ԱՐԾԻՐՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

Եղաւ՝ մի անգամ անտառի միջին
Արծիւն ու Կաղնին այսպէս վիճեցին,
Թէ՛ սրն իրենցից շատ տարի կապրի,
Որն է գիմացկունն ու պինդ աւելի:
Արծիւն ասաւ՝ ես. Կաղնին էլ թէ՛ ես:
Երկուսն էլ յամառ ու հըպարտ այսպէս՝
Մեծ-մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,
Վերջը այս տեսակ պայման կապեցին:
Ժամանակ դըրին հինգհարիւր տարի
Արքան հաւքերի, արքան անտառի,
Որ թէ՛ որոշած այն օրին հասնեն,
Այն օրը մին էլ դան իրար տեսնեն:

Ու Արծիւն խկոյն Կաղնուց հեռացաւ,
Հըզօր թևերը շարժեց, վերացաւ.
Դէպի ամպերը, դէպի ժայռերը,
Ուր անց է կացնում իր լաւ օրերը:
Կաղնին էլ փրոկեց ճիւղերն երկաթի,
Խո՛ւր ու խոր մըրկեց ճանկերն արմատի
Եւ այնպէս հուժկու կանգնեց անտառում,
Որ վայր չընկնի էլ հինգհարիւր տարում:

Դարեր անց կացան: Եւ ահա մի օր
Արծիւը եկաւ ծերացած, անզօր,
Ծըւօցը կըտրած, տըկար, հեալով,
Թոյլ-թոյլ թևերը հազիւ քարշ տալով
Տեղ հասաւ մի կերպ, նայեց դէս ու դէն,
Տեսաւ, որ Կաղնին ընկել էր արդէն.
Ճիւղերը թէ՛կ դեռ թարմ ու կանաչ,
Ընկել էր ահեղ փոթորիկի առաջ:
— Հէ՛յ, կանչեց. գոռոզ, պարծենկոտ Կաղնի,
Դէ լաւ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.
Հինգհարիւր տարուց մի ժամ էլ դեռ կայ,
Ընկել ես արդէն, անկոտորում հըսկայ:
— Հինգհարիւր տարի ապրել եմ կանգնած,
Այգքան էլ կապրեմ դեռ այսպէս թիկնած,
Մինչև լըրանայ մի հազար տարին:
Պատասխան տըւաւ ընկած վիթխարին:

„ՊՕՂՈՍ - ՊԵՏՐՈՍ“

Վաղճւց, երբ մօտ էր երկրին երկինքը
Ու լըսում էր դեռ մարդկանց Տէր-Խնքը,
Էն լաւ ժամանակ երկու մանուկներ
Ունէին մի շար, մի անսիրտ խորթ մէր:
— Կորէք, վընացէք, աշխատանք արէք,
Աշխատանք արէք ու եկէք կերէք.
Խնչ էք վեր թափել անգործ ու անբան,
Հասած արդերք էք հինգ-վեց տարեկան...
Այսպէս բարկացաւ մի օր խորթ մէրը,
Ճիւղտներ արւաւ, զըրկեց հորթերը:
Անհանգիստ հորթեր, ամառւան շոգ օր.
Կէտ արին, փախան, ընկան սար ու ձոր:
Նըրանց ետեից՝ լալով, հեալով,
Փոքրիկ որբերը՝ քարէքար գալով
Վաղ էին տալիս անտառի միջում,
Վաղ էին տալիս ու իրար կանչում.
— Պօղոս, գտա՛ր:
— 2էէ:
— Պետրոս, գտա՛ր:
— 2էէ:
— Վնյ-վնյ, վնյ-վնյ,
Վնյ-վնյ, վնյ-վնյ...
Վնյ-վնյ, վնյ-վնյ...

Չատ օր ման եկան խեղճերն յոգնեցին,
Եկան՝ խորթ մօրը լալով պատմեցին.
— Նանի, նյ նանի, կորան հորթերը...
— Վնյ, դետինն անցնէք, ճըշաց խորթ մէրը,
Թող գուք կորչէիք հորթերի տեղակ
Անտակ ձորի մէջ, անժած քարի տակ:
Մի արջ պատահէր, մի գազան, մի գէյ,
Որ չէի տեսել ձեր շուքը մէկ էլ...
Գէ, ետ գընացէք, գընացէք, կորէք,
Մինչև չըզըտնէք հորթերը բերէք՝
Աչքիս չերեաք, նյ աչքիս փըշեր,
Թէ չէ կըսպանեմ ես ձեզ էս գիշեր...
Ու ճիւղտն էլ ետ իրենց թաթերին,
Յոգնած ու սոված, արցունքն այտերին,
Փոքրիկ որբերը՝ անտառի միջում
Գիշերւան կիտին լալիս են, կանչում.
— Պօղոս, գտա՛ր:
— 2էէ:
— Պետրոս, գտա՛ր:
— 2էէ:
— Վնյ-վնյ, վնյ-վնյ,
Վնյ-վնյ, վնյ-վնյ:
Անտէր հորթերը չըկան ու չըկան:
Ճարները կըտրած՝ խեղճերը եկան,
Լալով չօքեցին.

—Տէր Ասուած, ասին,
Ի՞նչ կըլինի գըթաս՝
Գոնէ թիւեր տաս,
Թիւեր տաս՝ թըռչենք,
Թըռչենք ու կորչենք,
Որ էլ չըտեսնի մեզ մեր խորթ մէրը,
Մինչև որ գըտնենք կորած հորթերը...
Հէնց ասին-չասին անմեղ բերանով,
Ասուած որոտաց իր գըթոս ձայնով.
—Ահա ձեզ թիւեր, սիրուն երեխէք,
Թըռչուններ դառէք, թըռած ման եղէք,
Որ էլ չըտեսնի ձեզ ձեր խորթ մէրը,
Մինչև որ գըտնէք կորած հորթերը:
Գիշերը քնեցէք ծառերի ճիւղին,
Ծեղն ու ծըղօար արէք անկողին,
Ապրուստ էլ կերէք իմ լի սեղանից,
Երբոր դատարկուն հզար ձեր տանից...
Այսպէս վերեցի հէնց կանչեց Ասուած,
Փոքրիկ որբերը փոխեցին յանկարծ
Ու թիւեր առան,
Թըռչուններ դառան:
Ու թիւեր առած,
Թըռչուններ դառած
Դեռ մինչև էսօր,
Ընկած սար ու ձոր,

Ծըռում են, մընչում,
Մէկ մէկու կանչում.
—Պողոս, գտա՛ր:
—Չէ՛ք:
—Պետրոս, գտա՛ր:
—Չէ՛ք:
—Վնյ-վնյ, վնյ-վնյ,
Վնյ-վնյ, վնյ-վնյ:

1898.

ԼՈՒՍԱՆՈՐԶԻ ԿԱՆԹԵՂԸ

Կէս գիշերին կանթեղը վառ
Կախ է ընկած երկընթից,
Լուսաւորչի կանթեղն անմար
Հայոց մըթնած երկընթից:

Կախ է ընկած առանց պարան
Արողածի կատարին,
Ու սեղանից հըսկայական
Լոյս է տալի աշխարհին:

Լոյս է տալի երկա՛ր դարեր,
Ու վառոււմ են միշտ անշէջ
Սուրբի մաքուր արցունքները
Իւզի տեղակ նսրա մէջ:

Ոչ մարդկային ձեռ կը հասնի
էն ահաւոր բարձունքին,
Եւ ոչ քամին կը հանգցնի՝
Վիշապ-քամին ահագին:

Երբ պատում է մութ խաւարը
Չընաշխարհիկ մեր երկրին,
Երբ տիրում է ահն ու վախը
Թոյլ, կասկածոտ սըրտերին,

Ով անմեղ է, լիքը սիրով
Ու հաւատով անսասան,
Ով նայում է վառ յոյսերով
Գէտլի Հայոց ապագան,

Նա կը տեսնի այն մըշտավառ
Ջահը կախած երկընթից,
Ասես՝ Ասծոյ աչքը պայծառ
Հըսկում է ցած երկընթից:

1902.

Փ Ե Ր Ի Ա Ն Ը

I

Քարձրագահ Արուլն ու Մըթին սարեր
Մէջը մէջքի տըւած կանգնել զեհափառ,
Իրենց ուսերին, Ջաւախքից էլ վեր՝
Բըռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Ասում են՝ այնտեղ, արծըւի նըման,
Ծիծղուն, կապուտակ երկընքի ծոցում,
Նըստում էր էն սէգ սարերի արքան
Իրեն Փարւանայ ճերմակ ամբոցում:

Փարւանայ արքան մի ազջիկ ունէր.
Ու ոչ մի սրսկան դեռ իրեն օրում
Այնքան գեղեցիկ եղնիկ չէր տեսել
Իր սրսն անելիս Մըթին սարերում:

Աշխոյժ մանկութեամբ զարգարում էր նա
Ծերութեան օրերն ու սարերն իր հօր,
Ու ապրում էր ծեր արքան Փարւանայ
Իրեն այն քընքուշ ծաղկով բախտաւոր:

Մեծ բախար սակայն առաջին էր՝ դեռ:
Եկաւ այն օրն էլ հասաւ երջանիկ,
Ու զըրկեց արքան ուրախ գեսպաններ
Ամեն մի ամրոց, ամեն արքունիք:

--Ո՛րտեղ է, ասաւ, էն քաջը, թէ կայ,
Իմ շընաշխարհիկ զըստերն արժանի,
Թող անի իր ձին, իր գէնքն ու զըրահ,
Գոյ, ցոյց տայ իրեն, իր բախտը տանի...

II

Հագած, կապած գէնք ու զըրահ,
Զիանք հեծած ամենի,
Ահա եկել, հաւաքել են
Կըտրիճները Կովկասի,
Ծեր Փարւանայ թագաւորի
Ապարանքի յանդիման
Կաղմ ու պատրաստ սպասում են
Մօտիկ ժամին մըրցութեան:
Ըստսում է ողջ աշխարհը՝
Եկած, կիտւած Փարւանա,
Թէ ո՞ր կըտրիճն արդեօք պիտի
էն սիրունին տիրանայ:

Հընչեց փողը: Ահա փունջ-փունջ
Գըրանիկներ, նաժիշաներ,

Ահա աղջիկն իր նաղելի
Ու թագաւորն ալեհեր:
Հայրը ինչպէս մըռույլ մի ամալ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամալ ու լուսին իրար վարւած՝
Գուրս են գալի միասին:
Հառաչում է ողջ աշխարհը...
Կըտրիճները քարացած՝
Երազների մէջ են ընկնում՝
Էս աշխարհից վերացած:

— Նայիր, դըստրիկ, իշխանազուն
Այս քաջերին լայնալանջ,
Այժմ պիտի հանդէս դուրս գան,
Պայքար մըտնեն քո առաջ.
Մէկը իրեն ուժը ցոյց տայ,
Միւսը շընորհքն իր բաղկի,
Որը ճարպիկ ձիարշաւը,
Որն էլ թափը իր վազբի:
Իսկ երբ կըռուեն առնի դադար,
Յայտնի լինին քաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջևից
Կըտրիճները պայազատ,
Ընարիբ, դարկիբ ձեռքիդ խնձորն
Անյաղթներից անյաղթին,

Որ ողջ աշխարհ մայիլ մընայ
Անդուզական քո բախտին:

— Ասա արքան, ձեռքը ձրկեց,
Նըշան արւաւ պայքարին,
Այն ինչ՝ աղջիկն առաջ եկաւ՝
Կարմիր խնձորն իր ձեռին:
— Գուցէ, հայրիկ, տկար լաւին
Յաղթ է մի վէս տըմարդի,
Բայց չի կարող լինել երբէք
Նա սիրելին իմ սըրտի...
— Է՛յ, Փարանայ շըքնաղ փէրի,
Ի՞նչն է հաւան քո սըրտին,—
Խռնըում են կըտրիճները,
Խընդըում կըրկին ու կըրկին:—
Գմնձ ես ուզում, օսկի՛, արծաթ,
Անգին քարեր ու գոհմը,
Ա՞ստղ ես ուզում, էլ երկընքից
Վէր կըրերեն քեզ համար:
— Ինչին են պէտք օսկին, արծաթ
Եւ կամ աստղը երկընքի,
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Սէր-ընկերից իմ կեանքի:

Ես նրանից հնւր եմ ուզում,
Անշէջ հուրը սըրբազան,
Ով կըբերի անշէջ հուրը,
Նա է ընտրած իմ փեսան...

Ասաւ աղջիկն, իրար անցան
Կըտրիճները քաջարի,
Ձիանք հեծած թըւան հապճեպ
Գէպի շարս կողմն աշխարհի.
Թըւան, շուտով գըտնեն, բերեն
Անշէջ հուրը աղջըկան.
Բայց... տարիք են գալիս, գնում,
Նըբանք շըկան ու շըկան:

III

—Հայրիկ, ինչո՞ւ ետ շըգարձան
էն քաջերը սիրտաննչ.
Մի՞թէ, հայրիկ, ինձ մոռացան,
էլ չեն բերիլ հուրն անշէջ:

—Ո՛չ, իմ գըտարիկ, կըզան անշուշտ
Ու կը բերեն էս տարի:
Կըսիւներով արիւնըուշտ
Լիքն է ճամբէն քաջերի:

Ո՛վ իմանայ, պէտք է անցնեն
Մութ աշխարքից, սև ջըբից.
Ո՛վ իմանայ, պէտք է փախցնեն
Եօթ գըլխանի գեերից:

Անց է կենում դարձեալ տարին:
Նայում է կոյսն ամեն օր.
—Ո՛ւր է, հայրիկ, երբ կըզայ նա,
Սարից թըւած ձիաւոր:

Միշտ երազում ետ տեսնում եմ
էն հերոսին ապագայ,
հուր կարօտով թըւած իմ գէմ,
Լուսանում է... ու շըկայ:

—Կըզայ, գտարիկ իմ թանգագին,
Տեշտ չի բերում հուրն անշէջ.
Չատ-չատ անկամ բերող հոգին
Ինքն է այրում նըբա մէջ...

Անց է կենում դարձեալ տարին:
Նայում է կոյսն ամեն օր:
Ոչ մի սարից, ոչ մի ճամբում
Ձի երևում ձիաւոր:

—Հայրիկ, հայրիկ, մի՞թէ շըկայ
էս աշխարքում անշէջ հուր,

Թառամում է սիրարս ահա,
Պագ է այս կեանքն ու տըխուր...

Էլ չի խօսում. մույլ, տըրտում,
Լուռ է արքան արևոյ,
Սե-սե ցաւերն իրեն սըրտում՝
Միտք է անում գլխակոյր:

IV

Այսպէս անցան շատ տարիներ:
Տըխուր աղջիկն արքայի
Նայեց, նայեց սարերն ի վեր,
Ճամբաներին ամայի,
Յոյսը հատու... ու լաց եղաւ.
Այնքան արաւ լաց ու կոծ,
Որ լիճ կըտրեց արատաւորը,
Ծածկեց քաղաքն ու ամրոց.
Ծածկեց, կտրան, ինքն էլ հետը...
Այժմ այնտեղ տըրտմաշուր
Խոր Փարւանայ լիճն է ծըփում,
Յըսանկ, ինչպէս արատաւոր,
Ու այն վըճիտ ջըրերի տակ
Յոյց են տալի մինչ այսօր
Ծեր արքայի ճերմակ ամրոցն
Ու շէնքերը վառաւոր:

* * *

Ասում են, այն թիթեռները,
Որ գիշերուայ խաւարում,
Որտեղ ճըրագ, որտեղ կըրակ,
Որտեղ լոյս է հէնց վառում,
Հաւաքում են, շուրջը սլատում,
Մէջն են ընկնում խելագար,
Ասում են, թէ՛ այն Փարւանայ
Ջահիլներն են սիրաւառ:
Ըշտապելուց թե են առել,
Դարձել թեթե թիթեռներ,
Ու տակալին հուր տեսնելիս՝
Մէջն են ընկնում անհամբեր.
Ջանք է անում ամեն մինը
Զուտով տանի, տիրանայ...
Ու այրում են, այրում անվերջ
Կըտրիճները Փարւանայ:

1902.

ՊՕԷՄՆԵՐ

У А Р О

Մ Ա Ր Օ

I

Մեր գիւղն այն է, որ հըպարտ,
Լեռների մէջ միգապատ,
Խոր ձորերի քարափին՝
Ձեռքը տըւած ճակատին՝
Միտք է անում տըխրադէմ.
Ի՛նչ է ուղում—չըզիտեմ...

Պաս չենք այնտեղ մենք ուտում
Ու ջերմեռանդ աղօթում,
Ժամ ենք գընում ամեն օր.
Բայց միշտ ցաւեր նորանոր,
Միշտ մի աղէտ, մի վընաս
Գալիս են մեզ անպակաս:

Ահա պատմեմ ձեզ մի դէպք,
Մի պատմութիւն, որ երբէք
Յիշատակով սըզալի
Սըրտիս հանգիստ չի տալի:

Մեր գիւղից վեր մինչ այսօր
 Կայ ուռենի մի սըգւոր:
 Մեծ անտառից նա դատւած,
 Մարդու կայնից ազատւած՝
 Կանգնած է դեռ ու շողին
 Հով է տալի մըշակին:
 Իսկ նըրանից քիչ հեռու
 Չարածըճի մի առու
 Դուրս է փախչում անտառից,
 Կարկաշելով փըրփըրալից՝
 Խաղում կանաչ մարդերին:
 Այն առահում կէս օրին,
 Երբոր տալից նեղանում,
 Դընում էինք լողանում:
 Խաղում էինք, վաղվըղում
 Գոյն-գոյն, մանրիկ աւաղում.
 Ու մեր ճիշը մանկական
 Միանալով լեռնական
 Գիծ վըտակի աղմուկին՝
 Լուռ ու խաղաղ այն հովաին,
 Աշխոյժ կեանք էր միշտ տալի:
 Ա՛խ, ս՛րբան էր գիւր գալի,
 Երբ մեր արկլոր խըմբակով
 Վաղում էինք աղմուկով

Թիթ հռնիկի հասից,
 Որ թռչում էր թըփերից,
 Ու միշտ, յողնած ժամանակ,
 Այն մենաւոր ծառի տակ
 Նըստում տըխուր մի քարի,
 Գերեզմանին Մարօի...



Մարօ, անբախտ, վաղամեռ
 Դու մանկութեան իմ ընկեր,
 Ո՛րքան ենք մենք խաղացել,
 Իրար սիրել ու ծեծել...

Ժիր էր Մարօն, գիւրեկան,
 Նոր էր իննը տարեկան,
 Նըրանց տունը երբ մի օր
 Եկան երկու եկաւոր:
 Ու Մարօի մայրիկը
 Երբոր բերաւ, դրաւ լիքը
 Խոնչէն նըրանց առաջին,
 —Ձնօբհակալ ենք, ասացին.
 Տաշաները լի հաց լինի,
 Դուռները միշտ բաց լինի.
 Հաց չենք ուղում ձեզանից,
 Հող աւէք մեզ ձեր տանից...

Այն ժամանակ Մարօի
Հայրիկն առաւ արաղի
Լիքը բաժակն ու ասաց.
— Կամքըդ լինի, Տէր Աստուած...
Նըշանեցին Մարօին,
Տըւին չորան Կարօին:

IV

Չորան Կարօն սարերի
Մի հովիւ էր վիթխարի.
Բոյ-բուսաթիւն նայելիս
Մարդու զարզանդ էր գալիս.
Բայց զոքանչը անսահման
Սիրով սիրում էր նըրան:
Չատ էր սիրում և Մարօն,
— Լան է, ասում էր, Կարօն.
Բերում է ինձ ամեն օր
Չամիչ, կանֆետ ու խընձոր...

V

Մին էլ Կարօն աղմուկով
Եկաւ դուռնով-թըմբուկով.
Ու Մարօին դուգեցին,
Երեսին քօղ ձըգեցին,
Հինա գրբին ձեռքերը...
Եկաւ խաչով տէրատէրը,

Տարաւ ժամում կանգնեցրեց.
— Տէր ես, որդեանկ, հարցըրեց:
— Տէր եմ, ասաւ մեր Կարօն,
Լուռ կանգնած էր միշտ: Մարօն.
Հայրն էլ եկաւ ու ծէսին
Այսպէս օրհնեց իր փեսին.
— Ջողացիդ միշտ հերթ լինի,
Մէջքըդ ամուր բերդ լինի...
Իսկ երբ հընչեց «տարան հա՞ն»,
Նըրան փեսի տուն տարան:
Պըտակեցին Մարօին,
Տըւին չորան Կարօին:

VI

Թէ գըրբացի չար Չանքով,
Գիր ու կապով, բըժժանքով
Մանուկ սիրաբ կըտրեցին,
Կամ թէ նըրա հանդերձին
էն անհոգի չար Չադուն
Քըսեց գայլի ճըրագուն...
Այդ շիմացաւ ոչ ոք պարզ,
Միայն փոքրիկ նորահարս
Մարօն ատեց իր մարդուն,
Փախաւ, եկաւ ևտ հօր տուն:
Եկաւ լացեց նա վշտոտ.
— Ես չեմ գնալ նըրա մօտ.

Ես սիրում եմ մայրիկին,
Ես չեմ ուզում լինել կին...

VII

Հայրիկն այնժամ բարկացաւ,
Ծեծեց նրբան ու ասաւ.
— Գնւրս իմ ամանից, սեւերես,
Ետ շընայես դէպի մեզ,
Ոտ շըղնես էլ տունըս,
Մըրոտեցիր անունըս...»
Լալով, ծածկած իր դէմքը,
Թողեց Մարօն հօր շէմքը:

VIII

Ու հալածւած իր հօրից,
Փախած շորան Կարօից,
Սոված, պատռած շորերով,
Կորչում էր նա օրերով:
Կուչ էր գալի խըղճալի
Օջաղի շուրջ օտարի
Կամ թափառում մեն մենակ
Անտառներում շարունակ:

IX

Եյսպէս տարիք անց կացան.
Դիմաց սարից մի շորան

Չայն էր տալի մի օր մեզ,
Թէ՛ իմացէք, որ էսպէս
Կարմիր շորով մի խիղան
Ընկաւ ձորը—մի կածան...»

Դուրս թափւեցանք մենք գիւղից,
Հեռու կանգնած երկիւղից՝
Տեսանք՝ անհզ էն ձորում
Ոնց էր լալիս ու գոռում
Մարօի հայրն ալետր,
Մայրը ճըչում սըգաւոր:
Չատ լաց եղաւ և Կարօն.
Մեռան, գընաց մեր Մարօն:

X

Սակայն անբախտ նըրա գին
Պապի կողքին շըզըրին:
Գիւղից հեռու մինչ այսօր
Կայ ուռենի մի սըզուր:
Էն մենաւոր ծառի տակ
Փոս փորեցին մի խորին,
Առանց ժամ ու պատարագ
Մէջը գըրին Մարօին,
Էն լեռ քարն էլ տաշեցին,
Բերին վըրէն քաշեցին:

XI

Չատ հմ տեսել, երբ սըգւոր
Մայրը մենակ, սեաշոր,
Կորանալով էն քարին՝
Չայն էր տալի Մարօին...
Խունկ էր ծըխում, մոմ վառում,
Որ դիշերան խաւարում
Փայլփրլում էր մեն մենակ
Հեռւից երկար ժամանակ:

1887.

Ա Ն Ո Ւ Շ

Ն Ա Խ Ե Բ Գ Ա Ն Գ

(Համբարձման գիշերը)

Բաղձած լուսնի նուրբ շողերին,
Հովի թևին՝ թըռչելով՝
Փէրինները սարի գլխին
Հաւաքւեցին գիշերով:

«Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Ձրքնաղագեղ ոգիներ,
Եկէ՛ք, ջահել սիրահարի
Սէրը սղբանք վաղամեռ:

Օխան աղբիւրից ջուր է առել
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ:

Ջուրն ու ծաղիկ աստղունք վըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափագ սրբտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սէրին...

Ափս՛ս, Ան՛նչ, սարի ծաղիկ,
Ափս՛ս իզիթ քու հարին,

Ափսոս ըսյիդ թելիկ-մելիկ,
Ափսոս էդ ծով աչքերին...»

Ու նրանց հետ ցօղ-արցունքով
Լըցւած սըրտերն ու աչքեր՝
Սարի ծաղկունք տըխուր սիւգով
Հառաչեցին էն գիշեր:

«Վուշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրիկ,
Վո՛ւշ քու սէրին, քու հարին,
Վուշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ իգիթ,
Վո՛ւշ քու սիրած սարերին...»

Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ ստերի
Չըքնաղագեղ ոգիներ...»
Ու փէրիններն այսպէս տըխուր
Երգում էին ողջ գիշեր:

Կանչում էին հըրաշալի
Հնչիւններով դիւթական,
Ու հէնց շողաց ցօլքն արևի՝
Անտես, անհետ չըքացան:

Խոր սուղեցին ակն աղբիւրի,
Մըտան կաղնին հաստարուն,
Ու լեռնային վըտակների
Ալիքները պաղպաջուն:

ԱՌ ԱՁԲՆ ԵՐԳ

I

Կանչում է կըրկին, կանչում անդադար
Այն չըքնաղ երկրի կարօտը անքուն,
Ու՛ թեքնն ահա փըռած տիրաբար՝
Թըռչում է հօգիս, թըռչում դէպի տուն:
Ուր որ հայրենի օջաղի առաջ
Վաղո՛ւց կարօտով ըսպասում են ինձ,
Ու ձըմբան երկար գիշերը նըստած՝
Խօսում են Լօուու հին-հին քաջերից:
Դէպ այն սարերը, որ վէս, վիթխարի,
Հարբած շարքերով ըըռնած շուրջպարի,
Հըսկայ շուրջպարի ըըռնած երկընքում,
Հըրճուում են, ասես այն մեծ հարսանքում
Պերճ Արագածի նազելի դըստեր,
Որ Դե-Ալ, Դե-Բէթ և այլ հսկաներ,
Խօլ-խօլ հըսկաներ հընոց աշխարհի,
Փախցըրին բերին անառիկ Լօուի: *)

*) Առասպելն ասում է թէ՛ Դե-Ալը (Դուլ սարը), Դե-բէթը (Գերեզ
գետը) և ուրիշ դեկեր՝ յափշտակել են Արագածի աղջիկը, բերել են Լօուի:

II

Է՛յ հին ծանօթներ, է՛յ կանաչ սարեր,
 Ահա ձեզ տեսայ ու միտըս ընկան,
 Առաջըս եկան երջանիկ օրեր,
 Միրելի դէմքեր, որ հիմի չըկան:
 Անցել են, անց որ ծաղկունքը պէս-պէս,
 Որ անցած գարնան կային ձեր լանջում,
 Անցել ձեր գըլխի հէրւան ձիւնի պէս,
 Բայց եկել եմ ես՝ նըրանց եմ կանչում:
 Ողջո՛յն ձեզ, կեանքիս անդրանիկ յուշեր,
 Որբացած հողիս սղջունում է ձեզ,
 Թըռչուն կարօտով փընարում ձոր ու լեռ,
 Դիւթական ձայնով կանչում է հանդէս:
 Դո՛ւրս եկէք կըրկին շերմից, խաւարից,
 Դո՛ւրս եկէք տեսնեմ, շօշափեմ, լըսեմ.
 Կեանքով շընչեցէ՛ք, ապրեցէ՛ք նորից,
 Լըցրէք պօկտի հաճոյքը վըսեմ...

III

Եւ մութ այրերից մամուռ ժայռերի,
 Թաուտ ծըմակի լըսին խորքերից
 Մանուկ հատակիս հընչուն ծիծաղի
 Արձագանդն ահա լըսում եմ նորից:
 Թընդում է գըւարթ աղմուկը բինի,
 Բարձրանում է ծուխն իմ ծանօթ ուրթից,

Ու բոլորն ահա նորից կենդանի
 Ելնում են աշխոյժ վաղորդեան մութից,
 Ու թարմ, ցօղապաա լեռների լանջում...
 Սո՛ւս... ահանջ արա,—հովիւն է կանչում...

IV

—Աղջի, անասունձ, նըստիր վըրանում,
 Ի՞նչ ես դուրս գալի, խելքամաղ անում,
 Աշուղ ես շինել, չեմ հանգըստանում,
 Խաղեր կապելով,
 Չօլեր չափելով,
 Ոչխարըս անտէր,
 Ընկել եմ հանդեր:

Աման, էրեցիր սիրաբու քու սիրով,
 Ոտըս կապեցիր թել-թել մաղերով,
 Էլ չեմ դիմանալ կըփախցնեմ զօրով,
 Այ սարի աղջիկ,
 Այ սիրուն աղջիկ,
 Այ դու կարմրաթուշ
 Թուխամաղ Անուշ:

Քու հէլն ու մէրը թէ որ ինձ չըսան,
 Արին կըթափեմ ես գետի նըման,
 Սարերը կընկնեմ կորչեմ անգիւման,
 Այ սե աչքերով,
 Այ ծով աչքերով,

Ունըրը կամար
Աղջիկ, քեզ համար:

V

Երգում է Սարօն, ու չի կարենում
Աղջիկը հանգիստ նըստել վըրանում.
— Էն սիլ էր, նանի, որ կանչում էր մեզ.
Դու չես իմանում. ականջ դիր, տե՛ս...
— Հերիք է, Աննչ, ներս արի գագէն,
Քանի՛ դուրս թըռչես, նայես դէս ու դէն,
Տեսնողն էլ կասի— ի՛նչ աղջիկ է սա,
Հագար մարդի մօտ կերթայ կըխօսայ:
— Մըտիկ տուր, նանի, էն սարի լանջին,
Ի՛նչքան աւուկ է տալի կանանչին.
Նանի, թող գընամ քաղեմ ու հիւսեմ,
էն սարի լանջին «Ջան գիւլում» ասեմ:
— Հանգիստ կաց, Աննչ, դու հասած աղջիկ՝
Ի՛նչ ունիս ջահել շորանների մօտ,
Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, աղջի, ամօթ է, ամօթ:
— Ա՛խ, սիրտըս, նանի, չը գիտեմ ընչի՛
Մին լաց է լինում սեակնամձ, տըխուր,
Մին թե է առնում, ուզում է թըռչի,
Չըգիտեմ՝ թէ ուր, չըգիտեմ՝ թէ ուր...
Նանի ջան, նանի, ես ի՛նչպէս անեմ,
Ի՞նչ անի անքուն անհանգիստ բալէդ...

Նանի ջան, նանի, կուժը թող առնեմ,
Աղբուրը գընամ աղջիկների հետ...»

VI

Կըժերն ուսած՝ թըլըռալով
Ջուրն են իջնում աղջիկներ,
Խընդում իրար ուսի տալով,
Երգը գընգում սարն ի վեր:

— Ամպի տակից ջուր է գալի,
Դօշ է տալի, փըփըրում.
էն սում եարն է նըստած լալի
Հօնդուր-հօնդուր էն սարում:

Ա՛յ պաղ ջըրեր, դուլալ ջըրեր,
Որ գալիս էք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,
Եարս էլ խըմեց էդ ջըրից:

Եարար խըմեց, եարար հովցաւ
Վառւած սիրտը էն եարի,
Եարար հովցաւ, եարար անցաւ
Անքուն ցաւը ջիգեարի...

— Աղջի, քու եարն եկաւ անցաւ,
Վառւած, տարւած քու սիրով,
էրւած ջիգեարն եկաւ անցաւ,
Չըհովցաւ պաղ ջըրով...

Ամպի տակից ջուր է գալի,
Գօշ է տալի, փրփրփրում.
Ա՛խ, իմ աղիզ ետրն է լալի
Հօնգուր հօնգուր էն սարում:

VII

Ու պառաւ նանի սըրտի մէջ յանկարծ
Ձայն տըւաւ թարուն մի խաւար կասկած.
— Էն երբ էր՝ Անուշն իր կուժը առաւ,
Աղբիւրը գընաց ու ետ չըգառաւ...
Ամպերն եկել են սարերը պատել,
Ձորերը լըցւել, իրար փաթաթւել,
Հաղար շար ու շառ, հաղար հարամի,
Հաղար ջահիլներ վըխտում են հիմի...
Ու ելաւ տեղից պառաւը յանկարծ՝
— Ո՛ւր կորար, Անուշ, սյ մաղըգ կարած...
Ու ձորի գըլխին, ձեռքը ճակատին,
Կանչում է, կանչում անաս դաւակին.
— Աղջի՛ր, սեասի՛րա, քու ահը կըտրի,
Աղջիկը մենակ ձո՛րը կըմըտնի՛.
Ամպը կոխել է, աշխարքը մըթնել,
Ի՛նչ ետ կորցըրել՝ շեռ կարում գըտնել.
Աղջի, հէ՛յ Անուշ, սյ աղջի՛ր, Անուշ...
Ծընկանը դարկում, հառաչում է «փուշ»...
Ու ձորի գըլխին մոլորած կանգնած
Նայում է ներքե սիրտը սեակնած:

Ամպերն եկել են սարերը պատել,
Ձորերը լըցւել, իրար փաթաթւել,
Հաղար շար ու շառ, հաղար հարամի,
Հաղար ջահիլներ վըխտում են հիմի:

VIII

— Թո՛ղ, կանչում են ինձ... մայրս կիմանայ...
— 2է, Անուշ, քիչ էլ, մի քիչ էլ մընա...
— 2է, թող ետ գընամ... ա՛խ, ի՛նչ խենթ եմ ետ.
Դու ինձ շեռ սիրում, շեռ սիրում ինձ պէս,
Հէնց ետ եմ մենակ լալիս ու տանջում,
Դու սարի լանջին խաղեր ետ կանչում:
Վաղո՛ւց, վաղուց ետ դու ինձ մոռացել...
Ետ երբ եմ եկել էստեղ քարացել
Ու մընում եմ քեզ, մընում, անիրաւ,
Էնքան մընացի՛ աչքըս ջուր դառաւ:
Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պէս,
Մընում էր ետրին,
Ու չեկաւ նա տես.
Խեղճը դողալով՝
Անյոյս կըոացաւ,
Դարդից չորացաւ,
Ուռենի դարձաւ.
Ջըրերի վըրայ
Գըլուխը կախած

Դեռ դողում է նա
Ու լալիս կամաց
Ու ամբողջ տարին
Մի միտք է անում,
Թէ եարը եարին
Ո՞նց է մոռանում...

—Ա՛խ, Ան՛ւշ, Ան՛ւշ, էդ ի՛նչ ես ասում.

Բա դու չե՛ս լքում.

Է՛ն՝ որ լսնջերին խաղեր եմ ասում,

Ո՞ւմ հետ եմ խօսում.

Է՛ն՝ որ գիշերով շքու եմ փրշում,

Է՛ն՝ ո՞ւմ եմ կանչում.

Է՛ն, որ մոլորած նըստած եմ մընում,

Ո՞ւմ հետ եմ լինում.

Է՛ն, որ հառաչում ու ախ եմ քաշում,

Է՛ն՝ ո՞ւմ եմ յիշում...

Ա՛խ, Ան՛ւշ, Ան՛ւշ, անասունձ Անուշ...

Արբեցած, անուժ,

Հառաչեց հովին ու սրբտին ընկաւ,

Հալեցաւ, հանգաւ...

IX

—Ան՛ւշ, այ աղջի՛ր, Ան՛ւշ, տուն արի,
Կանչում է մայրը, հառաչում, կանչում:

—Գալիս եմ, գալի՛ս, գալիս եմ, նանի՛ր,
Ձորից աղջրկայ ձայնն է զօղանջում:

Ու մաղերն անկարգ տըւած թիկունքով

Ու ցըրւած շիկնած այտերի վըրան,

Դուրս եկաւ թեթեւ ամպերի տակից

Անուշը՝ փախած եղնիկի նըման:

Նա կուժը դատարկ ետ բերաւ կըրկին,

Իսկ ուսին տարած ուսաշոր չըկայ,

Թողել է այն էլ ջըրի եղերքին:

Ա՛խ, անհոգութիւն ջահիլ աղջրկայ...

—Նանի, վախեցայ, գանգատում է նա,

Եւ ուղում է լալ, շի կարողանում.

Նանի, ներբեւում ես մարդիկ տեսայ,

Կարծեցի՛ թուրքեր էին լողանում...

Անիծում է ծեր մայրը բարկացած

Իրեն մոռացկոտ, վախկոտ Անուշին,

Ու անէծք տալով իջնում է նա ցած՝

Դատարկ ետ բերած հին կուժը ուսին:

Ե Բ Կ Բ Ո Բ Գ Ե Բ Գ

X

(Համբարձունսն առաւօտը)

Համբարձումն եկաւ, ծաղկունքը արան
Ջուգել են հանդեր նախուն զորգերով,
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով:

«Համբարձում, հայլա,
Եայլա ջան, հայլա,
Սև սարեր, հայլա,
Եայլա ջան, հայլա:

Երգ ու բոյր խառնած,
Թե-թեի բրնձած
Ջուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղիկ հետ խաղում,
Ինչպէս թիթեռներ:
Համբարձում, հայլա,
Եայլա ջան, հայլա,
Լաւ օրեր, հայլա,
Եայլա ջան, հայլա:

Եկաւ համբարձում
Ծաղկով զարդարւած,
Մեր բախտին հարցում.
—Ո՞վ է մեզ գըրւած:
Ա՛յ ջան տղայ, շորան տղայ, սլմն ես դու:
Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:
Համբարձում, հայլա,
Եայլա ջան, հայլա,
Հուր սըրտեր, հայլա,
Եայլա ջան, հայլա:

Թընդում են երգեր, խընդում են սըրտեր,
Ու շուրջ բոլորած վիճակ են հանում.
Ենում է մէկին իր երազն ու սէր,
Միւսի մուրազը սըրտումն է մընում:

XI

Պըտոյտ է տալի վիճակը նորից
Քուշուշքը գըլխին ծաղիկ ծաղկամէր,
Թընդում «ջան գիւլում» մատաղ սըրտերից,
Հետը գըրգըւում էն ծաղկոտ սարեր:

«Ա՛յ թուխ մազաւոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգեարին գիւլա գիւլչի
Քեզ սիրի ով որ աղջիկ:

Ո՞հ, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկաւ,
Սևաբնիտ քուրիկ, նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր...
Ու ողջ մընացին մոլորւած, ապուշ:

—Սուտ բան է, քոյրիկ, դու մի հաւատար,
Լսկ պատահական մի շար խօսք է սա.
Միրաբդ մի կոտրիր սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գիւլում ասա:
—Ա՛խ, չէ, ես գիտեմ, ես բախտ չի ունեմ.
Ես երբէք, երբէք բախտ չեմ ունեցել.

Ես միշտ էլ էսպէս անբախտ կըլինեմ.
Մանուկ օրից են դեռ ինձ անիծել:
Ասում են՝ մի օր, ես օրօրոցում՝
Մի պառաւ դաւրիչ մեր դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուղում,
Իմ նանը նըրան բաժին չի տալի:
— Կորի, ասում է, կորի մեր գըռնից,
Երեխաս ճաքեց, հեռացիր, գընա՛...»
Ու դաւրիչն այնտեղ անիծում է ինձ,
Թէ՛ գըրա օրը լացով անց կենայ...
Ա՛խ, այն դաւրիչի անէծքին անգութ
Ու այս վիճակին աեղեակ է Ասուած,
Սիրաբոս էլ միշտ վա՛հ, սիրաբոս էլ միշտ մա՛ւթ,
Ինչ կայ, չըգլտեմ, իմ առջև պահած...
— Մի աըբամիր, Անուշ, մի լինիր յամառ.
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դաւրիչ, մի անէծք յիմար,
Ու լալիս ես դու այդպէս սըրտածա՛ր...
Հանգիստ կաց, քոյրիկ, մի վախիր այդքան,
Կեանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Այդ քո նորահաս մատաղ կուսութեան
Առաջն դեռ կան երջանիկ օրեր:
Սուտ բան է, քոյրիկ, դու մի հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտդ մի կտորիք սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գիւլում ասա:

(Խումբը երգում է)

Աղջի բախտաւոր,
Երնէ՛կ քու սէրին,
Քու սարի սովոր
Սե-սե աչքերին:

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Սէր-օրեր, եայլա,
Եայլա ջան, եայլա:

Մեռնեմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,
Ոարի պէս մէջքիդ
Կանգնած եար ունեւ:

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Սար-եարեր, եայլա
Եայլա ջան, եայլա:

ԵՐԲՈՐԳ ԵՐԳ

XII

Զըմբան մի գիշեր կար մի հարսանիք,
Հըրճում էր անդուսպ ամբօխը գիւղի.

Գիւզն էին իջել հովիւ պատանիրք
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
Ու պարից յետոյ լայն հըրապարակ
Բաց արին մէջ տեղն արձակ գըլխատան,
Ջուռնաշին վըշեց կոխի եղանակ,
Ահել ու ջահել իրարով անցան:
Հարմյ են տալի—քաշի՛ հա, քաշի՛...»
Ու դուրս քաշեցին գոռով երկուսին.
Մինը մեր Սարօն, իսկ միւսն Անուշի
Անդրանիկ եղբայր դառնարած Մօսին:
Ողջ գիւզը կանգնեց պարըստի նըման,
Ջուկեց, լածանեց երկու բանակի,
Ամեն մի բանակն ընտրեց վահլեան,
Կանգնեց թիկունքին արդերանց մէկի:
Գոռում են, գոռում երկու բանակից.
—Սըրտապլինդ կացէք, մի վախէք, տըղերք,
Իսկ նորեկ հարսի փարզի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:
Ու տաքանում են տըղերքը սաստիկ,
Փէշերը հաւաք խըրում են գօտին,
Գետին են դարկում ձեռքերը հաստիկ,
Իրար են հասնում թափով մոլեզին...
Ազաթ կայ սակայն էն մութ ձորերում,
Ու միշտ հընադանդ հընոց ազաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի դարկիլ ընկեր իգիթին:
Ու իրար բըռնած Սարօն ու Մօսին

Քաշում են, ընկնում խողապարկուկի.
Ընկնում են գետին, ելնում միասին,
Դըժւար է իբրև յաղթել մէկ մէկի:
Իգուր է գոռում ամբոխը հարբած,
Ջուր սըրտատըրով նայում աղջիկներ,
Եւ դուր է Անուշն, իր շունչը կըտրած,
Սառել ու կանգնել, ինչպէս մի պատկեր:
Անուշը կանգնած... Սարօն նըկատեց,
Թունդ առաւ սիրտը ու դարկեց արագ.
Աշքերի առջև մըլարը պատեց,
Մոռացաւ ընկեր, ազաթ ու աշխարք:
Ու մինչդեռ Մօսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն,
Ուժ արաւ Սարօն, ծընկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու շոքեց վըբէն:
Ամբոխը թափեց հարա-հըրոցով,
Վեր թըւցբեց ջահել վահլեաններին
Եւ՝ ուրախութեան աղմուկ-դոռոցով
Յաղթողին փեսի թախտի մօտ բերին:
Յընձութեան ձայնից, ծափերի դարկից
Չարժում են գոգում պատեր ու օճորք,
Իսկ նորեկ հարսի փարզի քամակից
Նայում են կանգնած հարսն ու աղջըկերք:

XIII

Վերկայաւ Մօսին, իրեն կըտրատում,
—Թող գնայ, գոռում է, որ բըռնենք նորից,

Թէ չէ նամարդը, արևս եմ երդուում,
էլ չի պըրծնելու երբէք իմ ձեռից.
Վէր չի գցել ինձ... ինձ խարել է նա...
Մէյրան բաց արէք, թող մին էլ մէջ գայ...»
Ու ամեն կողմից ուրախ հըրհըռում,
Թունալի ծաղըսով կանչում են, գոռում.

— 2էլաւ, էդ չէլաւ,
Վէր չի գըցել դեռ,
Մօսին թօլ էլաւ—
Խողապարկուկ էր...
Հն, հն, հն, տըղերք,
Չատ էլ լաւ կանի,
Մէջքը թնփ տըւէք,
Թող մին էլ բըռնի.
Հն, հն, հն, տըղերք,
Մէջքը թնփ տըւէք...

XIV

Եւ աղմըկալի հարսանքի տանից
Գուրս եկաւ Մօսին սաստիկ վիրաւոր.
Արին է կաթում սեակնած սըրտից,
Գընում է ըշասպ, քայլերը մոլոր:
— Ամօթ քեզ, Մօսի, թնք ու նախատինք,
Ամօթ քեզ նըման գոված իգիթին,
Մի անունդ յիշիր, մի բոյլդ մըտիկ.
Գեռ քու թիկունքը չէր անսել գետին:

Ի՛նչպէս վէր ընկար դ՛ու սարի նըման,
Երբոր նայում էր ողջ գիւղը կանգնած...
Դ՛ու... կուճ գաս տակին Սարօի ծընկան,
Նըրանից յետոյ երեսս կանանց...
Եկած էր էս բանն իսկի քու գըլխին...
Ծաղըատեղ դառար բովանդակ գեղին...
Դէ մեռիր էլի, գետինը մըտիր,
Տանը վեր ընկիր՝ իլիկ պըարտիր»...

XV

— Վնյ, վնյ, Մօսի ջան, ինձ մի սպանիր.
Սըրանից յետոյ չեմ սիրել նըրան...
Վախենում եմ ես... դամէդ տեղը գիր...
Սիրտըս դողում է տերևի նըման... »
Խընդբում էր լալով եղբօր առաջին
Անգօր ու դալուկ իր քոյրը չորած,
Մօսին՝ փայլկըտուն խանչալը ձեռին՝
Ուզում էր մորթել նըրան աչքը բաց:
— Դէ իմ անունով երգւիր, անըզգում,
Որ էլ Սարօին դու չես սիրելու,
Թէ չէ՝ տեսնում ես խանչալը հանած՝
Մինչև դաստակը սիրտդ եմ լըրելու:
— Քու ռաի հոգն եմ, Մօսի ջան, Մօսի,
Դու քու եսիրին երդում ես տալիս...
Ես էլ Սարօին չեմ սիրում՝ ասի,
Տեսնում ես չորած ի՛նչպէս եմ լալիս...
— Դու խաբում ես ինձ, սուտլիկ, խաբերայ.

Ձեռ սիրում ասիր. էն ինչ է հապա,
էն ինչ է հապա, որ տեղն ենք մըտնում
Հեկեկում ես դու գիշերւայ մըթնում.
էն ինչ է հապա, որ դու երազում
«Սարօ ջան, Սարօ, Սարօ» ես ասում...
—Մօսի ջան, Մօսի, գլխովդ շուռ գամ.
Ինձ մի սպանիր, ինձ թող էս անգամ.
էլ չեմ սիրիլ ես, երբ դու չես ուզում,
էլ չեմ կանչիլ ես նըրան երազում...
Ինձ մի ըսպանիր, դամէդ տար հեռու...
Քու քոյրը չեմ ես... իմ Մօսին չես գնւ...

XVI

Ու էն հարսանքից թըշնամի դարձան
Ախպէր տըղերքը էս դէպքի համար.
Ընկեր, բարեկամ գընացին, եկան,
Կըրկին հաշտութեան չեղաւ մի հընար:
Անկտարում Մօսին էլ սը Մօսին էր,
Որ՝ աչքը դեռ բաց, էս լուս աշխարքում,
Իրեն հարադատ քըրոջը տեսնէր
Նամարդ ընկերի—Սարօի գըրկում:
Գուցէ գիշերս էլ՝ իր հերսից անքուն՝
Ուզում է ջահել քըրոջն ըսպանի,
Սարօի անունն ու սէրը թաքուն
Խանչալի ծայրով սըրտիցը հանի:
Ով գիտի՝ գուցէ հէնց այս գիշեր էլ
Իգիթ ոստիններն, անհաշտ ու յամառ,

Մէկմէկու հօտից ոչխար են քըշել,
Մէկմէկից վըրէժ առնելու համար.
Կարող է նոյնպէս պատահել յանկարծ.
Որ մէկի գէղը, արդիւնքը հընձի,
Գիշերւայ ժամին, հըրով բըռնկած,
Երկնահաս բոցով աստղերը խանձի:

ՁՈՐՈՐԳ ԵՐԳ

XVII

Ամպերը դանդաղ ուղտերի նըման
Նոր են ջուր խըմած ձորից բարձրանում.
Քարոտ թիկունքից Ձաթ ինդաղ լերան
Նոր է արեը պըռունգը հանում.
Գիւզում աղմուկով իրար են անցնում,
Կըտեր ծայրերին կանաչք հաւաքւած,
Տըղերքը գէպի քարավին են վազում
Հըրացանների կիտերից բըռնած:

XVIII

Եկաւ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վըրդովւած տըղերանց միջին,
Մատը գէպի ձոր մեկնելով հանգարտ
Այսպէս նա պատմեց զօռ տալով չիբխին:
—էս գիշեր, կէսը կըլնէր գիշերւայ,

Գեո շէի կըպցըել աշքըս տեղի մէջ.
Քունս էլ է կորել, ջսնս էլ էն վաղւայ,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
Հն, հալալ կէսը կըլնէր գիշերւայ,
Չունը վերկացաւ էս կըռան վրայ.
Հէյ հէյ կանչեցի, ձէն արւող շէլաւ.
Չունը գազագեց, շունը վեր կալաւ...
Հէյ գիտի, ասի ինքըս իմ միջում,
Ինչ է մընացել առաջւան տըղից.
Քընում էի վաղ մենակ արխաջում,
Մի ձէն լրսելիս վեր թըռչում տեղից...
էն էի ասում, քընել շէի գեո.
Կը լինէր դառը գիշերւան կէսը,
Երկու մարդկային սե կերպարանքներ
Չան առջև փախած՝ ցած իջան գէսը...
էս որ լըսեցին, գէս ու գէն ցըրւած
Տըղերքը ճեպով ձորը ներս մըտան,
Ու մըտի տակին, ճամբիցը ծըռւած,
Երկու մարդու թարմ սանատեղ գըտան:

XIX

Ամբողջ մի ամիս խումբը գինավառ
Սարեր ու ձորեր սանատակ տըւեց,
Չորան Սարոյին գըտնելու համար,
Որ սարիցն իջաւ Անուշին փախցրեց:
Մի ամսից յետոյ տըղերքն եկան տուն,
Գովելով նըրա արարքը ճարպիկ.

— հալալ է տըղին, այ իգիթ ու թ իւն,
Ահա թ է ինչպէս կը փախցնեն աղջիկ:
Մենակ Անուշի եղբայրը—Մօսին
Մընաց հանդերում. երդում կերաւ նա,
Ուր որ էլ լինին՝ նըրանց միտսին
Գըտնի՝ կոտորի, սիրտը հովսնայ:

XX

— Աղջի, Վարդիշաղ, թ է հոգիդ սիրես,
Մի գարիդ գըցիր, տես ինչ է ասում.
Աշքըս խաւարի, տեսիլք դառնամ ես,—
Տեսիլք եմ տեսել գիշերս երազում:
Մի մութ ձորի մէջ, մի նեղ ձորի մէջ
Անբախտ Սարօի ոչխարը կանգնած,
Լեզու էր առել ու խաղ էր կանչում,
Ու խաղ էր կանչում ձէն ձէնի տըւած...
Մի գարիդ գըցիր, թ է որդով խընդաս,
էս երազն իսկի ես լաւ չեմ փորձել.
Ողորմած Ասաւած, Քու դուռը բանաս,
Քու ոտի հոգն ենք—Գու ես ըստեղծել...
Անբան դառները մութ ձորի միջին
Խաղ էին կանչում ու ձէնով լալի,
Սարօի նանն էլ նըրանց առաջին
Աղլուխ էր առել ու սլար էր գալի...
— Աղջի, Մանիշակ, վատ բան ես տեսել,
Գարիս էլ, ահա, էնպէս դուրս եկաւ.
էս շարն, էս բարին... Սարօն է էս էլ.

Տես, ահա, Սարօն սև ճամբէն ընկաւ...
Աստուած խընայի ջահել—ջիւանին,
Աստուած խընայի իր նաչար նանին...

XXI

Ու ման է գալի սարերը ընկած
Սարօն փախցրած եղջիւրի նըման,
Օրհասն առաջին, գընդակն ետևից,
Հանդերը դըժոխք, ընկերը դուշման:
Եւ երբ երեկոն հանդարտիկ ու լուռ
Սարերից իջնում, խաւարն է պատում,
Նրա բայաթին սղբում է տըխուր,
Ընկեր սարերին խօսում, գանդատում:

«Բարձրը սարեր, այ սարեր,
Ձէն եմ տալի «վայ», սարեր,
Դուք էլ ինձ հետ ձէն տըւէք,
Իմ գարդերի թայ սարեր:

Որս եմ՝ բուժ էս ձեզ արած,
Ձեր ձորերին, ձեզ արած,
Գուզեմ կորչեմ անգիւման,
էս աշխարքից բէգարած:

Կորչեմ բէգար գատարկուն,
Քար-սարէսար գատարկուն,

Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար-քուն:

Ա՛խ կը մեռնեմ՝ ամա նա
Վայ թէ յանկարծ իմանայ,
Ես աղատեմ էս ցաւից,
Աչքը լալով նա մընայ:

ՏՐՆԳԵՐՈՒԹ ԵՐԳ

XXII

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարեան,
Ու խօսք չեն գըտնում ասեն անարգած,
Տարած-հարերած, անբախտ աղջըկան:
Աստուած խընայեց՝ կուպիտ եղբայրը
Հեռու հանդերից գեռ տուն չէր դարձել,
Իսկ խոժոռագէմ, ալեօր հայրը
Սկսաւ փըրփըրած թըքել, անիծել:
—Դուքս գընա, կորի, այ իբր, անըզգամ,
Սև ու սուգ լինի թագ ու պըսակըզ.
Կորի՛, չերևաս աչքիս միւս անգամ,
Դետինը մըտնի երկար հասակըզ:
Տեսնոր, որ նըրան ատում է Մօսին,
Ձեն ուզում, տեսար, նըրան հէրն ու մէրզ,
Դու քանի գըլուխ ունիս քո ուսին,

Որ վեր ես կենում փախչում նրբա հետ»:
Խոնրւած գիւղացիք կըտուրից իջան
Մեղմնու կոպիտ բարկութիւնը հօր,
Յայտնըեց նոյնպէս գիւղի քահանան,
Մի պատկառելի հըսկայ ալետր:
— Գնւրս գընացէք, գնւրս, գոչեց տէրաէրը,
Անուշը թողէք ուղիղն ինձ ասի,
Թողէք նա յայտնի իր միտքն ու սէրը,
Նըրանից յետոյ բանը կը պարզի:
Մի լար, իմ աղջիկ, ինձ խոստովանիր,
Մերմւծ ես նըրան, քու կամքով փախար...
Եթէ սիրում ես՝ էլ դարդ մի անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ...
— Ի՞նչ են հաւաչում... էն սով էր, մի տես,
Որ դուրսը յանկարծ աղմըկեց էսպէս...
Ո՞վ է ըսպանել... Մօսի՞ն... սւմ... սւր...
— Անսւշ, հէյ Անսւշ... ջուր հասցըրէք, ջսւր...»

XXIII

Ինչպէս մի հեղեղ վեր կենար յանկարծ,
Երկընքի մըթնած ամպերից իջնէր.
Ինչպէս փոթորիկ սաստիկ սըընթաց,
Գիւղից սըլացան մի խումբ կըտրիճներ:
Յաւից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թըռչում են, ասես ահից հալածւած,
Ու նըրանց առջև ահռելի բացւում,
Թըշշում է ձորը արիւնով լըցւած:

Գիւղը դատարկեց մի աղընթարթում,
Քարափի զըլխին կանգնած անհամբեր,
Լսւո, սըրտաաըրով ախնջ են գընում,
Նայում են ներքև... ձայն չի գալի դեռ.
Գերեզն է միայն անդընդում՝ յուզւած՝
Խըլածայն ողբով սուրում դէպի ցած:

XXIV

Ու մարդոտպանը դուրս եկաւ ձորից,
Դէմքը այլալլած, քայլածքը մոխր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եւ կերպարանքը փոխւած է բուրբ:
Առանց նայելու մարդկանց երեսին,
Առանց խօսելու, սեակնած, դաժան,
Մօտեցաւ սրահին, կախ տըւաւ սընին
Սե հըրացանը, սե օձի նըման:
Պապանձեց նոյնպէս ամբոխը մեխւած,
Ոչ ոք ծըպըտալ չի համարձակում,
Մենակ մի հողի անդուսպ կատաղած՝
Հարմյ է կանչում, երեսը պոկում:
Մեռած շորանի պառաւ նանն է նա՝
Յաւից խեղագար բառաչում, լալիս.
Տարարմխտ ծընող, վաղում է ահա,
Չսրիցն է տըխուր պոռոցը գալիս:

Մըգաւոր կանաչք նորա ետեից
 Հարայ կանչելով ձորը վաղեցին,
 Իրենց կտրցրածն էլ յիշելով նորից՝
 Գիակի շուրջը կարգով շարւեցին:
 Իգիթին վայել սըրտառուչ ողբով
 Լաց ու կոծ արին ձէն ձէնի տըւած,
 Տըղերքն էլ մըթին, լուռ ու գըլխակոր,
 Մընացին մօտիկ քարերին նըստած:
 Ողբացին անշունչ գիակի վըրա
 Անտէր մընացած ոչխարի մասին,
 Անտէրա անէծքով յիշեցին նըրա
 Անճար մընացած խեղճ կարի մասին.
 Եւ նըրա մասին, որ ընկերները
 Հանգեր գընալիս Սարօ կը կանչեն,
 Որ սարից փախած սոված շըները
 Կըտերը սլիտի ոռնան, կըլանչեն:
 Որ հով սարերի սովորած նանը
 Էլ սար չի գընալ առանց Սարօի,
 Սև շորեր հագած կը նըստի ասնը՝
 Անցած օրերը միտք կը բերի:
 Եւ ամեն մի խօսք, մի յիշողութիւն
 Կըտրատում էին սիրտը ծեր նանի,
 Եւ աղաչում էր նա մեռած որդուն
 Մի անգամ խօսի, աչքը բաց անի:
 —Ընչի՞ չես խօսում, ընչի՞ չես նայում,

Իմ օր ու արև, կեանք ու ջան՝ որդի,
 Գու իմ գերեզմանն ընչի՞ ես խըլում,
 Թըշնամի որդի, դաւաճան որդի...
 Բայց չէին բացւում աչքերը փակւած,
 Չուրթերը սառել, չորացել էին,
 Նըրանց արանքից տտամները բաց,
 Սիպտակ շարքերով երևում էին:
 Եւ նա կատաղած՝ յանդուգն անէծքով
 Ծառս եղաւ դուշման երկընքի գիմաց,
 Եւ հայհոյում էր, և կուրծքը ծեծում,
 Եւ լալիս էին ձէն ձէնի տըւած...
 Գիշերը իջաւ, սաստկացաւ մութը
 Եւ նըւաղեցին ձայները տըրտում,
 Յոգնեցին, հանգան... Ծերուկ Գերեզը
 Մըգում էր մենակ խաւար անդընդում:

XXVIII

Եւ մի քանի ընկեր տըղերք
 Ձորում, գետի եզերքին,
 Փոս փորեցին ու սըրտաբեկ
 Հողին արւին հովի գին:
 Ծառ ու ծաղիկ՝ սըւսըւալով
 Բոլը խընկեցին գիւրեկան,
 Ծեր Գե-բեզն էլ ահեզ ձայնով
 Երգեց վըսեմ շարական:
 Ու տըղերքը տըլտուր ու լուռ
 Վերադարձան գէպի տուն,

Էլ մի լացացնի,
Ես շատ եմ լացել...

Տե՛ս, կը խըռովեմ,
Լաց կըլեմ ես է՛լ...
Ձեմ խօսիլ քեզ հե՛տ...
Ձեմ սիրիլ քեզ է՛լ...»

XXX

Անլըսելի վըշվըշում է
Պըղտոր ջուրը Դերեգի,
Նըրա ափին կանաչում է
Մենակ շիրիմն իգիթի:
Նըրա շուրջը հեգ սիրուհին
Թընդացնում է ողբ ու լաց,
Ձայն է տալիս իր Սարօին
Ու պըտըաւում մոլորած:
Եւ հոսում է գիշեր-ցերեկ
Արցունքն անբախտ աղջըկայ,
Բայց իր սիրած տըղան երբէք
Չըկայ, չըկայ ու չըկայ...
Վըշվըշում է գետը—վ՛սւշ, վ՛սւշ,
Ու յորձանք է տալիս յորդ,
Ու կանչում է՝ «Արի՛, Ան՛սւշ,
Արի՛, տանեմ եարիդ մօտ...»

—Ան՛սւշ, մյ աղջի, Ան՛սւշ, տուն արի...
Կանչում է մայրը վերեկից, կանչում.
Լուռ են ձորերը, լուռ են ահակի,
Դուշման Դերեգն է պղտոր մըսընչում:

Վուշ-վ՛սւշ, Ան՛սւշ, վուշ-վ՛սւշ, քուրիկ,
Վ՛սւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վ՛սւշ, Սարօ, վուշ-վ՛սւշ, իգիթ,
Վ՛սւշ քու սիրած սարերին...

XXXI

Համբարձման գիշեր, էն գիւթիչ գիշեր,
Կայ հըրաշալի, երջանիկ վայրկեան.
Բացում են սոկի երկընքի դըռներ,
Ներքե պապանձում, լըռում ամեն բան,
Եւ Ասուածային անհաս խորհըրդով
Լըցւում բովանդակ նըրա սուրբ գըթով:

Այն վեհ վայրկենին չըքնաղ գիշերի՛
Երկընքի անհոն, հեռու խորքերից,
Անմուրաղ մեռած սիրահարների
Ատղերը թըռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարօտով մի հեղ համբուրում
Աշխարքից հեռու, լազուր կամարում:



Ձորում թողած մի սև բլուր,
Մի գերեզման անանուն:

ՎԵՅԵՐՈՐԳ ԵՐԳ

XXIX

Գարունը եկաւ, հաւքերը եկան,
Սարեր ու ձորեր ծաղիկներ հագան.
Մի աղջիկ եկաւ, մի մենակ քաղւոր,
Գետի եզերքին շըրջում է մոլոր,
Չըրջում է մոլոր, խընդում ու լալիս,
Երգեր է ասում ու ման է գալիս:

—Սիրուն աղջիկ, ի՞նչ ես լալիս
էդպէս մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
էս ձորերում ամեն օր:
Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում՝
Մայիս կը գայ, մի քիչ կայ,
Թէ լալիս ես՝ ետրդ ես ուզում,
Ա՛խ, նա գընաց, նա գընաց...
Արտասուելով, լալով էդպէս
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ իզուր հանգընում ես
Ջահել կրակն աչքերիդ:
Նըրա անբախտ հողի վըրա

Պաղ ջուր ածա աղբիւրի,
Դու էլ գընա նոր սէր արա,
էսպէս է կարգն աշխարհի:

—Չնորհակալ եմ, անցւոր ախպէր,
Ասուած պահի քու եարին.
Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...
Ուրախ սըրտով դուք ձեր սէրը
Վայելեցէք անթառամ.
Ինձ արցունք է տըւել Տէրը,
Ես պիտի լամ, պիտի լամ...

Ու ման է գալիս,
Երգում ու լալիս:
Երգերը անկապ, երգերը տըխուր,
Արցունքի նման հոսում են իզուր.
Բայց լալիս է նա ու երգեր ասում,
Ու միշտ այն անմիտ տըտունջն է խօսուս,
Թէ ինչպէս յանկարծ աշխարքը փոխեց,
Ինչպէս դատարկեց կեանքում ամեն բան,
Սարերը մնացին որբ ու անչորան,
Թէ ինչպէս յանկարծ նա գընաց հեռու,
էլ չի դառնալով, էլ չի դառնալով...

«Ետ դա՛ւ, ետ, իգի՛թ,
Ետ դա՛ւ, անիրա՛ւ,
Գարօտած ետրիդ
Աչքը ջուր դառաւ:

Ոչխարդ էն սարով
Չուռ տուր, տուն արի,
Փախիր դիշերով
Ու թարուն արի...

Ա՛խ, էն կանանչ սարի լանջին
Ո՞վ է քրնած էն տըղէն,
Վըրէն քաշած սև ետփընջին,
Կուռը հանած էն տըղէն...
Ջան, իմ եարն է, ջանին մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,
Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մո՛ւշ, անուշ մըրափել:

Վեր կաց, վեր, իգիթ,
Վեր կաց, անիրան,
Ոչխարդ բեր կիթ,
Օրը ճաշ դառաւ...
Արի, ջան, արի,
Քու գալուն մեռնեմ,
Թուխ չոբան, արի,
Կարօտըս առնեմ...

Տեսէք, տեսէք, դափ ու դուռնով
Խնչ հարսնիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ, թօն ու ձիւնով
Ձի են խաղում, չափ տալի...
Աղջի, աղջի, մըրաիկ արէք,

էս ի՛նչ տեսիլք ես տեսայ.
Ով էր տեսել էսպէս հարսնիք —
Ոչ հարս ունեն, ոչ փեսայ...

Բերում են հըրէն,
Աման, մեր տան դէմ...
Վէր դըրէք, վըրէն
Հիւսերըս քանդեմ...
Ես էլ եմ գալիս,
էդ սուր էք տանում...
Ինձ էլ թաղեցէք
Իր գերեզմանում...

Ա՛խ, չէ, աման, ասում են դա
Մի դիակ է լուռ, հոտած,
Արիւնը շոր դէմքի վըրա,
Աչքերն անթանթ, սիպտակած:
Նա սիրուն էր, անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս էր ցօղոտ-չաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի, ջան իգիթ,
Արի, անիրան,
Կարօտած ետրիդ
Աչքը ջուր դառաւ:
էլ մի ուշացնի,
Ես շատ եմ կացել,

ԼՕՌԵՅԻ ՍԱՔՕՆ

ԼՕՌԵՑԻ ՍԱՔՕՆ

I

Այն Լօռու ձորն է, ուր հանդիպակաց
ժայռերը՝ խորունկ նօթերը կլիտած՝
Դէմու դէմ կանգնած, յամառ ու անթարթ՝
հայեացքով իրար նայում են հանդարտ:

Նըրանց ոտքերում՝ գաղաղած գալի՝
Գալարում է գիժ Դե-Ֆեզը մոլի,
Խելադար թըռչում քարերի գըլխով,
Փըրփուր է թըքում անդուսլ երախով,
Թըքում ու զարկում ժեռուտ ափերին,
Փընտրում է ծաղկած ափերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.

—Վա՛շ-վի՛շշ, վա՛շ-վի՛շշ...

Մութ անձաներից, հաղար ձևերով,
Քաշքերն անհանգիստ՝ հըտպիտ ձայներով
Դեի հառաչքին արձագանգ տալի,
Ծաղրում են նըրա գոռոցն ահռելի
Ու կըրկնում գիժ-գիժ.

—Վա՛շ-վի՛շշ, վա՛շ-վի՛շշ...

Գիշերը լուսնի երկշոտ շողերը
Հէնց որ մըտնում են այն խաւար ձորը՝

Ալիքները հետ խաղում գողալով,
Անյայտ ու մըռայլ մի կեանքի գալով՝
Ոգի է առնում ամեն բան այնտեղ,
Չընչում է, ապրում և մութն և ասեղ:

Այս տախտի վըրայ աղօթում մի վանք,
Այն ժայռի գըլխին հըսկում է մի բերդ,
Մութ աշտարակից, ինչպէս զարհուրանք,
Բուրի կըսինչն է տարածում մերթ-մերթ,
Իսկ քարի գըլխից, լուռ մարդու նըման,
Նայում է ձորին մի հին խաշարձան:

II

Այն ձորի միջին ասա մի տընակ:
Այնտեղ այս գիշեր Սաքօն է մենակ:
Հովիւ է Սաքօն, ունի մի ընկեր.
Սատանի նըման՝ նա էլ այս գիշեր
Գընացել է տուն: Սարերի շորան —
Գիւղիցը հեռու, հաղար ու մի բան.
Ով գիտի՝ պարկում շընալի՞ր շըկար,
Ա՞ղ էր հարկաւոր ոչխարի համար,
Ուզեց զոքանչի ձըւածի՞ղ ուտել,
Թէ նըշանածին շատ էր կարօտել —
Ոչխարը թողել՝ գընացել է տուն:
Այն ինչ՝ համկալը հէնց առաւօտը
Դէպի սարերը քըչեց իր հօտը:
Ու Սաքօն անքուն,

Թաց տըրեխները հանել է, քերել,
Գուլպան բուխարու վըրա կախ արել
Ու թինկը տըւել,
Մեն-մենակ թըթւել:

III

Թէկուղ և մենակ լինի փարախում,
Աժդահա Սաքօն ընչի՞ց է վախում:
Հապա մի նայիր հըսկայ հասակին,
Ո՞նց է մեկնըւել: Ասես ասագին
Կաղնըրի լինի անտառում ընկած:
Իսկ եթէ տեղից վեր կացաւ յանկարծ,
Գըլուխը մխած մահակը ձեռին՝
Ձէն արաւ, կանչեց գալում շըներին
Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպէս սար,
Այնժամ կիմանաս, թէ ընչի համար
Թէ գող, թէ գազան, հէնց դատարկ վախից,
Հեռու են փախչում նըրա փարախից:

Ու իրեն նըման իրեն ընկերներ
Ապրում են սիրով երեսուց իվեր:
Աստծու գիշերը գալիս են հանդէն,
Փէտ են հաւաքում, վառում են օդէն,
Չըհուն ու պըկուն խառնում են իրար,
Ածում են, խաղում, խընդում միալար...

Բայց խուլ ու խաւար օդում այս զիշեր
Մենակ է Սաքօն ու չունի ընկեր:
Բուխարու կողքին լուռ թինկը արւած
Մըտածում է նա... ու մին էլ, յանկարծ,
Որտեղից որակզ, էն ձորի միջին,
Միան եկան տատի զըրոյցները հին...
Միան եկան ու մեր Սաքօն ակամայ
Սկսու մըտածել չարքերի վըրա,
Թէ ինչպէս ուրախ խըմբով, միասին,
Ծուռը սաներով, զիշերւան կիսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած,
Երևում են միշտ միայնակ մարդկանց...
Կամ ինչպէս քաջքերն այրերի մըթնից,
Երբ նայում է մարդ քարափի զըլիսից
Կամ թէ ուշացած անցնում է ձորով,
Խարում են, կանչում ծանօթ ձայներով,
Ու մարդկանց նըման խընճոյք են սարքում,
Զուռնայ են ածում, թըմբուկ են դարկում...
Ու տատի խօսքերն անցեալի հեռից
Ուրւաձայն, երկշոտ հընչեցին նորից.

— Կասեն՝ Սաքօ, մեզ մօտ արի,
Արի մեզ մօտ հարսանիք.
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Սիրուն-ջահել հարսն-աղջիկ:

Ինձ մօտ արի՝ ձրւածեղ անեմ...
Ինձ մօտ արի՝ բըլիթ տամ...
Ես քու հօքիրն... ես քու նանն եմ...
Ես էլ աղիզ բարեկամ...

Սաքօ, Սաքօ, մեզ մօտ արի.
Էս աղջիկը, տե՛ս, ինչ լաւն ա...
Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի,
Տարա նի նա՛... Տարա նա նա՛...»

Ու խօլ պատկերներ, տըզիզ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,
Ծանրաշարժ եկան Սաքօի դիմաց
Երևութք եղան, անցնում են կամաց,
Խաւար ու դանդաղ, ըսուերների պէս,
Չար ժըպիտներով ժանտ ու սեւերես...

Սըրնթաց պախրա թէ գայլ զիշատիչ
Չեշտակի անցաւ փարախի մօտով,
Այժ ետմը յանկարծ մօտակայ ժայռից
Անդունդը մի քար գըլտրեց ոտով,
Գիշերւան հովից տերեւն էր դողում,
Երկշոտ մուկիկը վաղեց պուճախում,
Թէ ոչխարների թոյլ մընչոցն էր այն,—
Սաքօին թըւաց, թէ մի ոտնաձայն

Եկաւ ու կանգնեց փարախի վրրա,
Կանգնեց ու լրուեց...

Ականջ դրրաւ նա...

V

—Ո՞վ հող թափեց բուխուրակից...
էն սօվ նայեց լիսածակից...
էս սօվ կըտրից անցաւ թեթեւ,
Չունչ է քաշում գըրան ետե...
Ո՞վ ես էհէյ... Ի՞նչ ես անում.
Ի՞նչ ես լրուել, ձէն չես հանում...»

Պատասխան չըկայ. լրուութեան միջում
Չորագետն է միայն մըրափած վըշում:
—Հա՛, իմացայ, Գէւօն կըլինի.
Իմ շան ահից սօվ սիրտ կանի...
Վախեցնում է... հա՛, հա՛, հա՛, հա՛...
—Գէւօ՛...»

Ձէն-ձուն չըկայ:

Միայն ահաւոր լրուութեան միջում
Չորագետն է խուլ, մըրափած վըշում:
Եւ սօվ կըլինի դարթուն այս ժամին.
Քընած է աշխարհ, քընած է քամին.
Անբուն չարքերը չեն միայն քընած,
Վըխում են ուրախ՝ ձորերը բընած,
Խաւարում կազմած դիւական հանդէս
Վազում, վազվըզում սաւերնիւրի պէս,

Մինչև որ մենակ մի մարդ կըզտնեն,
ձիշով-քըրքիջով... փարախը մըտնեն...

Աչքերը հանգչող կըրակին յառած՝
Ծանրը է շընչում հովին ահառած,
Ու վայրի հոգին լեռնական մարդու
Ալեկոծում է կասկածն ահարկու:

—Չէ, քամին էր էն... էն գիլի շըւար...
էն աստղեր էին աչքերի տեղակ,
Որ լիսածակից ներս էին ընկել...»
Ուզում է վերեւ մըտիկ տայ մէկ էլ՝
Ու սիրտ չի անում:
Ականջ է դընում...

Գալիս են կըրկին թեթեւ, կամացուկ
Գըռան ետեից փըսփըսում ծածուկ.
—էստեղ է նա,
հա՛, հա՛, հա՛, հա՛.
Տես-տես, տես-տես.

Նայիր էսպէ՛ս,
Մըտիկ արա՛,
հա՛, հա՛, հա՛, հա՛...»

Սաքօն շարժեց վըշաքաղած,
Գէպի շէմքը նայեց, դողաց...
Չըրը՛խկ... յանկարծ դուռը բացեց,
Թուրք կանանցով տունը լըցեց,
Տունը լըցեց թուրք կանանցով,
ձիշ-գոռոցով, հըրհըռոցով...

Ահսելի ձոր է: Մի կըտոր լուսին
 նայում է գաղտուկ, թագչում ամսերում:
 Էն մութ, ահաւոր գիշերւայ կիտին
 վաղում է Սաքօն Լօուու ձորերում:

Չարքերը ընկած նըրա ետեից,
 հերարձակ խըմբով, ճիշտ աղաղակով՝
 հասնում են մէջքին, բըռնում են թեից,
 Ձարկում են, դարկում օձի մըտաւիով...
 Քաջքերն էլ այրից զուռնա—զըհօլով
 ձըչում են, կանչում ծանօթ ձայներով:

—Սաքօ, Սաքօ, մեզ մօտ արի,
 Արի մեզ մօտ հարսանիք,
 Տե՛ս՝ ինչ ուրախ պար ենք գալի՝
 Սիրո՛ւն, ջահել հարսն-աղջիկ:

—Ինձ մօտ արի՝ ձըւածեղ անեմ...
 Ինձ մօտ արի՝ բըլիթ տամ...
 Ես քու հօքիրն... ես քու նանն եմ
 Ես էլ աղիղ բարեկամ...

Սաքօ, Սաքօ, մեզ մօտ արի.
 Էս աղջիկը, տե՛ս, ինչ լաւն ա...
 Տե՛ս, ինչ ուրախ պար ենք գալի.
 Տարա նի նա՛... տարա՛ նա նա՛...
 Տարա՛ նա նա՛... տարա՛ նա նա՛...

Այն ինչ Դերեղից ալքեր են թըռչում,
 Ալիքներն հընում, ալիքներն ուռչում,
 Լուարի միջին ծըփում են կայտառ՝
 —Բըռնեցէք, փախա՛ւ Սաքօն խելաղար...»

ԴԵՊԻ ԱՆՅՈՒՆԸ

Գ Է Պ Ի Ա Ն Հ Ո Ի Ն Ը

I

Հընչում էր վըրվիրուն վըտակն արծաթի,
Արևը խաղում պայծառ կապոյտում...
Առանց հոգսերի ու առանց վըշտի
Խաղում էինք մենք այն երազ հովտում,
Ու թընդում էր հեշտ ծիծաղն ինձ ծաղրող.
—Չես կարող, չէ, չես կարող...

Չէի կարենում բըռնել ես նըրան:
Ճերմակին տալով՝ ծառերի ետև
Ծածկըում էր նա աչքէս անգուման,
Կըրկին յայանըում ճապուկ ու թեթև,
Ու թընդում էր միշտ ծիծաղն ինձ ծաղրող.
—Չես կարող, չէ, չես կարող...

Մին էլ ես ճարպիկ մի շարժում արի,
Բըռնեցի նըրան: Յանկարծ նա ճըշտց,
Զեռքումըս դարձաւ ճերմակ աղանի,
Ու թեին արաւ, ու թըռաւ, գընաց.
Գընաց ճախըելով այն երազ հովտում,
Սուղեց, չըքացաւ պայծառ կապոյտում...

Վեր թըռայ քընից, գուրսը նայիցի-
 Արևը ուրախ դարկել էր սարին,
 Բընութ իւնն անհոգ, թարմ ու նազելի
 Զուգում էր, ժըպտում մանուկ արևին:
 Գիշերն անցել էր. բայց իր ետևից
 Մըռայլ էր թողել գեռ ցած՝ հովիտում:
 Այդպէս տակաւին անցած երազից
 Խաւար մի բան կար նըստած իմ սըրտում:
 Թէկուզ երազին չես էլ հաւատում,
 Բայց օտար տեղում, քո տանից հեռու,
 Միբաղդ մի յամառ կասկած է մըտնում,
 Թէ՛ մի մահագոյժ սև բօթ է գալու...
 Յասմիկն երազում ազանի դառաւ,
 Աղանի դառաւ՝ իմ ձեռքից թըռաւ...
 Լոկ երանգ էր այս: Բայց երազն ի՞նչ է:
 Երազ, թէ իրօք—այդ միթէ մի՞նչ չէ,
 Երազն էլ երբօր կարող է կանչել,
 Կարող է յուզել, խընդացնել, տանջել...
 Յասմիկն ապրում էր—Յասմիկը մեռաւ...
 Երազը եկաւ—երազը թըռաւ...
 Կեանքը երազ է, երազն էլ մի կեանք:
 Երկունսն էլ անցուր, երկունսն էլ պատրանք:
 Եւ թէ հաստատուն մի բան կայ անմահ,
 Արդեօք իմաստուն հողին չի՞ միայն նա,
 Որ թէ յարթ ըմնի և թէ երազում

Ապրում է, տեսնում, ըզգում ու յուզում...

Ու... գիր է գալիս ահա իմ տանից,
 Թէ՛ կինըս հիւանդ—ըսպասում է ինձ...

Տո՛ւն, աո՛ւն, դէպի տուն
 Թըռչում եմ արթուն,
 Որպէս երազում:
 Զուրջըս ամեն բան
 Զտապ, ինձ նըման,
 Անցնում է, վազում:

Զըշմած գըլխիս մէջ
 Գալիս են անվերջ
 Ու ձընչում իրար
 Զանազան դէպքեր,
 Յուշեր ու մըտքեր,
 Գայժ առ ու խաւար...

Տեսնում եմ նըրան՝
 Կանգնած է գարնան
 Զողերի միջին,
 Ու ժըպտում է ինձ
 Իր պատահանից՝
 Ծաղիկը լանջին...

Տեսնում եմ մեռած,
Ծաղկով դարդարած,
Գրքած դադարում.
Տըխրալի մի օր,
Արտասուք, սրզուր,
Սևեր ու թագում...

Տո՛ւն, տո՛ւն, դէպի տուն.
Ու միւս իրիկուն
Մեր տան դէմ ելայ,
Մի սև-սև զանգւած՝
Կուտակւած, կանգնած
Մեր գըռանն ահա...

Պըտոյտ է գալիս
Աշխարքը գըլխիս,
Երկինքը մըթնում...
Ողջ կանգնած են լուռ,
Ու ներսից արխուր
Չայնել են թընդում...

IV

«Յնամիկ ջան, եկա՛ւ... դէ վեր կանց... վեր կանց...»
Դուրս հոսեց գէմըս տըրտում ու յողնած
Նըրս մօր ձայնը... խունկի ծըխի տակ
Աչքովըս ընկաւ դադարը ճերմակ,
Ու շուրջըս մըթնեց: Տեղըս կորցըրի...

Մարդից, արևից, աշխարքից հեռի,
Մի անտակ ձորում, սե՛ ու խոր ջըրում
Տարւում էի ես, խեղդում, շարշարում.
Բարձր էին ավերն, ողորկ ու դըժար,
Մի թուփ շը կար գէթ բռնելու համար,
Չը կար կենդանի ձայն, ըստե՛ր, նըշան,
Որ կարենայի կանչել օգնութեան...

V

հն՛, հն՛, հն՛, հն՛, հն՛, դըւարթ քըրքիջով
Մի ծիծաղ անցաւ փողոցի միջով:
Ես ուշքի եկայ, աչքըս բաց արի,
Տեսայ աշխարքը ու լոյսն արևի,
Տեսայ՝ նըստոտած մարդիկ շըշընջում,
Անտարբեր թեքւած՝ իրար ականջում
Խօսում են ուրիշ բաների վըրտ,
Ու ոմանք ժըպտո՛ւմ, ժըպտում աշկարա...
Իսկ կողքիս նըստած ալեօր մի մարդ
Խըրատում էր ինձ միայլար, հանդարտ.
—Մի լար, սիրելիս, երեխայ չես դու,
Ինչքան էլ որ լաս—իզուր ես լալու.
Քու ձայնը երբէք էլ չի լըսիլ նա,
Ոչ կը հասկանայ, ոչ էլ ես կը գայ:
Այսպէս կամեցաւ Աստուած, երևի,
Որ նըրս օրը շուտով խաւարի...
Մենք հողեղէններս՝ անձար ու շընչին,
Ի՛նչ ենք Աստուծոյ կամքի առաջին...

Բաց է այս ճամբէն ամենքին համար.
Ծեր, երիտասարդ, մեղաւոր, արդար,—
Ամենք, ամենքը, այստեղ ինչ որ կան,
Այսօր թէ էգուց ամենքը կերթան.
Ով որ կը մընայ,
Թող նա պարծենայ:

VI

Ես լըսում էի... Ու յանկարծ ես էլ
Ուզեցի հաշուել հըղօր մահի հետ.
Անճար, ահամայ սկսայ մըտածել,
Թէ մահը լաւ է, միայն մենք՝ տգէտ,
Մենք խեղճ, կարճամիտ, ու չենք հասկանում՝
Ինչպէս է գալիս և ուր է տանում,
Թէ՛ և՛ կեանք, և՛ մահ—անցաւոր, ունայն
Մի մեծ յաւերժի ձեերն են միայն,
Ինչպէս որ ասա «երէկն» ու «այսօր»:
Այսօրն ինչ է որ,—մի երէկ է նոր,
Այսօրն էլ կանցնի, երէկ կը դառնայ,
Եւ սակայն կըրկին միենոյն է նա:
Եւ այսպէս անվերջ այսօր ու երէկ
Փոփոխում են միայն, միշտ մընում է մէկ—
Մէկ մեծ ժամանակ: Այսպէս և հոգին
Փոփոխում է միայն կեղևն արտաբին—
Մարմինն՝ այսօրուան օրին նըմանակ,
Իսկ ինքը անվերջ, ինչպէս ժամանակ:
Կամ ևս սիրուն,—հոսանուտ մի գետ,

Որ հազար ալիք ու ծըվանք ունի.
Գալիս են ալիք, անցնում են անհետ,
Անցնում են դէպի անդունդն օվկիանի,
Ուր ամեն ալիք, ուր ամեն մի կաթ
Ապրում է դարձեալ անվերջ, անընդհատ...

Այսպէս փոխելով հոսում է, գընում,
Գընում անհունի անճառ սահմանում,
Գէպի գերադանց վիճակն երջանիկ,
Ակն երջանկութեան, սիրոյ հայրենիք,
Ուր չը կան մարդիկ և ոչ ըզգացում,
Ուր ողջին մի մեծ կեանք է միացնում...

Եւ ի՛նչ է սիրոյ իմաստը վերին,
Ի՛նչ երջանկութեան խորհուրդը խորին,—
Հալել, միանալ,
Իրեն մոռանալ...



Եւ անշուշտ մի օր, հանդերձեալ կեանքում,
Երկրում թէ այլուր, վերև՝ երկընքում,
էն անյայտ ճամբով, որով նա գնաց,
Ես էլ կը թըռչեմ՝ աշխարհը թողած,
Ու կըզգամ նըբան, կապրեմ նըբա հետ
Մի ուրիշ անվերջ կեանքով երկնաւէտ...

VII

Բայց ես միշտ թարուն մի յոյս ունէի,
Թէ կարող էր նա լինել... կենդանի...

Մի տեղ մի անգամ այդպէս է եղել.
Տարել են մէկին, ուղիւ են թաղել,
Չիրմի փոսի մէջ դարձնել է յանկարծ:
Կարող էր և մեղ լինել պատահած...

VIII

—Ո՛չ, ո՛չ, նա գընաց, էլ ետ չի գալու,
Եւ այդպէս դու միշտ մեղք ես մընալու:
Թէկուզ և հազնես երկաթի տըրեխ,
Փընտրես՝ կանչելով աշխարհ բովանդակ,
Էլ չես հանդիպիլ նըրան ոչ մի տեղ,
Ոչ մի աշխարհում, ոչ մի ժամանակ...
Այն պաղ դիակն էլ, որ տեսնում ես դեռ,
Այն էլ հողի տակ կը ծածկեն հիմա,
Կըզմն, կըզմն տարիքն անտարրեր,
Ու նա կը փըթի, նա հող կը դառնայ.
Անունն էլ ապրող աշխարհի համար
Դատարկ մի հնչիւն, անխորհուրդ մի բառ...
Այն էլ կը կտրչի, ինչպէս որ չը կայ
Անունն ու հեռքը էն հին աղջըկայ,
Որ ձեզնից առաջ հազար տարիներ
Նոյնպէս սիրահար ու ժըպիտ ունէր:
Եւ ի՛նչ է մարդը, և ի՛նչ իրեն կեանք.—
Եղծական ձևեր, ձայներ, շարժումներ.
Յաւերժականը չունի կերպարանք,
Նա լուռ է, անշարժ, հաստատ, աներեր...

Անողոր մի ձայն այսպէս ինձ կանչում,
Տանջում էր հողիս, խորտակում, ճընչում:
Ճիգ էի անում նըրան լըռեցնել,
Սիրարս էլ հետը պոկել, հեռացնել
Ու գըտնել մի ձայն, մի հընչիւն, մի բառ,
Որ կեանքի, յոյսի նըշոյլ ունենար...
Ուղեցի «Ասուած» մին աղաղակել,
Բայց չէ՞ որ նա էր այն մահն ուղարկել:

IX

Մի անհուն ցաւի մըրմուռի նըման
Ծաւալում էին զանգերը թաղման,
Ու ժամի ծըխտո կամարների տակ
Կանգնած էր արդէն տըխուր պատարագ.
Տըխուր պատարագ, տըխուր մեղեդիք,
Տըխուր աղօթքներ ու տըխուր մարդիկ,
Մէջ տեղը ճերմակ դագաղը նրա
Դըրած սեւսօղ սեղանի վըրա,
Ու նա դագաղում, ասես թէ քընած,
Հարսնական ճերմակ շորով պճնըւած,
Անփոյթ, անդգնյ կեանքին ու մահան,
Իր դագաղն ածած վարդերի նըման...
Այստեղ՝ բռնըւած մի նոր տագնապով՝
Ուղեցի գըտնել մըտքի մի թափով,
Թէ ի՛նչ էր արդեօք, այն ի՛նչ էր լինում,
Ի՛նչ էր պատահել, նա ո՛ր էր գընում...
Եւ իսկոյն, ասես, դիպայ մի քարի:

Մըտքերըս հատան: Առանց մըտքերի
Կանգնած էի ես խորտակած ու պաղ:
Լուռ էր: Հողևոր երգերը մենակ
Ծառաբուս էին վըսեմ ու խաղաղ:
Ես լըսում էի, լըսում շարունակ:

«Այս անցաւոր երկրի վըրա
Լըցան օրերն պանդըխտութեան,
Երկնասըլայ գընում է նա,
Հագած մարմին անապական,
Անմահացած մահկանացուն՝
Միանալու իր Ասարծուն:

Այնտեղ, Վերին Երուսաղէմ,
Օթեանում հըրեշտակաց,
Ուր որ Ենովք ու Եղիաս,
Աղանակերպ կան ծերացած,
Այն աշխարհում անտըխրական
Արգարքն ասըրում են յաւիտեան:

Եօթնաստեղեան լոյս խորանում,
Ուր ցաւ չը կայ, ոչ հեծութիւն,
Ընտրեալ հողիքն ուրախանում,
Խայտում են միշտ անվերջ, անհուն
Բերկրանքներով յարազըւարճ,
Աստծոյ գըւարթ աչքի առաջ:

Այնտեղ նըրանք, միշտ բախտաւոր,
Նայում են չօր լոյս երեսին,

Նըրա առջև պաղատաւոր
Նըրանց համար, որ թողեցին.
Ու իջնում են, մըխիթարում
Մեզ տըրտմալի այս աշխարհում...»

Թոված, կախարդած, տարած այն երգին,
Վերացաւ, թըռաւ իմ վշտոտ հողին
Դէպի երջանիկ մի ուրիշ աշխարհ,
Անյայտ ու հեռու, անծանօթ, օտար...
Եւ այն աշխարհը հըրաշալի էր.
Ոչ սուգ կար այնտեղ, ոչ վայելք, ոչ սէր,
Ոչ կարելի էր կորցընել մի բան
Եւ ոչ ունենալ քաղց ագահութեան.
Որպէս գերեզման և ունայնութիւն՝
Լուռ էր ու դատարկ, անփառք ու անհուն.
Որպէս հայեացքը մեռելի աչքի՝
Մի միտք ունէր միշտ առանց յուզմունքի,
Հողեղէն մարդուն անյայտ խորհըրդով
Յաւիտեան սառած, խաղաղ, անվըրդով...
Ու անշարժ կանգնած, դալուկ ու լըուկ,
Սաւերններ էին, անմարմին մարդիկ,
Տըժգոյն, անարև, աղօտ լուսի մէջ
Աղօթում էին անձայն ու անվերջ,
Աղօթքն էլ սակայն ոչինչ չէր խընդրում.
Ոչ ազատութիւն, ոչ մահ, ոչ խընդում...

Յանկարծ լըռութիւնն ինձ ուշքի բերաւ,
Աչքիս առջևից հըրաշքը թըռաւ:
Պատարագն արդէն վերջացրել էին:
Դագաղը շարժեց, թընդաց ասադին
Սասանիչ երգը մահւան սարսափի,
Այն լացն ու կոծը, օրհնեբքը մահի,
Որով մեռելին հրաժեշտ են տալիս
Դէպի գերեզման ճամբու ղընելիս,
Երբ ծառս է լինում վիշտը մայրական
Դէպ գահն Արարչի—յըրկողը մահւան,
Արձակում ցասկոտ իր ճիշը յետին
Ու թոյլ, յուսահատ ընկնում է գետին:

Դուրս եկանք դուռը: Նայեցի վերև:
Վերևն, ինչպէս միշտ, փայլում էր արև.
Բոլորն աշխարհում կարգին ու հանդարտ,
Ու ինչպէս երէկ՝ այնպէս ամեն մարդ...
Բայց երկինքն այնքան պայծառ էր այնօր,
Եւ պայծառութիւնն այնքան էր սըրտում,
Տըրամութիւնն այնքան խոր, հանդիսաւոր,
Որ թըռում էր ինձ, թէ ջինջ կապոյտում՝
Վերջին հըրաժեշտ տալով աշխարհին՝
ձախրում էր նըրա հեռացող հոգին...

Ու մըտքովս անցաւ յանկարծ ակամայ,
Թէ արդեօք նըրա աչքերը անմահ
Նայում են ներքև, տեսնում են ինձ էլ,
Թէ օնց եմ ցաւիս տակին կորացել...
Եւ կամ սրն է նա. այն շնորհ է պայծառ,
Որ ղըւարթ խաղով, աշխոյժ ու կայտառ
Կորչում է, մըտնում թուխպ ամպի ետև,
Ազատ, երկնաշու այն ամպն է թեթև,
Թէ այն աղաւնին, որ հիմա թըռաւ,
Անփոյթ ճախրելով՝ ջինջ օդում կորաւ...

Յանդճւզըն մըտքեր, սըր էք սըլանում,
Ի՞նչ էք որոնում այն մութ սահմանում:
Ահա մեր կեանքի սահմանը վերջին,
Այս սև ու տըխուր թումբերը շընչին...
Լճու գերեզմաններ. քանի՞ սըզաւոր
Ձեր եղբրքներին կանգնել են մի օր,
Այս դատարկ կեանքին, անհաստատ բախտին
Անէծքներ տալով բեկեկ, հեռացել,
Երբ որ սիրածի դագաղը մըթին
Վիհ են իջեցրել ու ղէմքը ծածկել...
Եւ սըքան ըղձեր, սըրտեր ու ղզացմունք
Թաղած են, մարած ձեր լուս փոսերում.
Ահա ե՛ մի նոր բարձրացած սև թումբ,
Դեռ թաց է հողը, դեռ խոնկ է բուրում,
Իսկ մենք ուզում ենք ուրիշին թաղել,

Որ ապրում էր դեռ երկու օր առաջ...
Եւ անշուշտ մի օր սըրա շիրիմն էլ
Կը ծածկի նոյնպէս մամուռը կանաչ,
Կանի հաւասար քարին ու հողին,
Ինչպէս դըրացու անկողինը հին:
Նըրանից յետոյ դէ եկ՝ իմացիւր,
Թէ ով է թաղած քու ոտի տակին,
Ի՞նչ ցեղից էր նա, ի՞նչ ձիւքեր ունէր.
Անահ հերոս էր, գեղանի մի կլին,
Անհոգ մի ջահիլ, անկըշտում ագահ,
Եղբատ, թէ հարսուտ.— ձայն, նըշան չը կայ...

XIII

Եւ... իջնում էր նա ընդմիշտ իմ աչքից,
Կեանքից, արևից, այս լոյս աշխարհից...
Կորացայ, վերջին համբոյրըս տըւի,
Ու այն համբոյրով դագաղում դըրի
Խընդում, սէր, ըզձեր, ամեն, ամեն բան...
Ինձ ետ քաշեցին, մի կողմը տարան:
Իսկոյն հետեց խուլ գըրգըռոցը,
Քարով ու հողով լըցըին այն փոսը,
Դագաղն էլ, ինքն էլ ծածկեցին յանկարծ.
Ատես թէ բընաւ աշխարհ չէր եկած,
Եւ այսուհետեւ երբէք, յաւիտեան
Էլ չի տեսնելու արևը նըրան...
Յուղարկներն այնժամ մօտ եկան մի-մի.
— Է՛հ, Աստած նըրա հոգուն ողորմի.

Մի օր էլ մենք ենք այսպէս գընալու,
Ո՛վ է աշխարբիս վըրա մընալու.
Կեանքն էլ է դատարկ, մարդն էլ է դատարկ,
Անցաւոր են ողջ—բախտ, վայելք ու փառք...
Ասացին՝ հանգիստ հոգոց հանելով,
Ու դարձեալ հանգիստ դրոյց անելով
Գընացին իրենց տըները անհոգ:
Չուրջըս նայեցի, չէր լալիս ոչ ոք.
Երկինքն էլ այնպէս պայծառ ու հանդարտ.
Եւ ինչպէս երէկ, այնպէս ամեն մարդ...

XIV

Եկաւ գիշերը: Իմ յողնած հոգուն
Իջաւ տանջալի մի խաղաղութիւն:
Վայր ընկայ, ինչպէս ուժաթափ մի բան,
Որ զգում է միայն կարօտ հանգըստեան,
Բայց ճըզնում է դեռ, աշխատում ունայն,
Ուղում է յիշել, թէ ի՞նչ բան էր այն.
Մի խառն երանգ էր, մի աշխարհ ուրիշ,
Գինու մի քէֆ էր, ծաղը՞ր, թէ պատիժ...

Մըրափը սակայն ծանրը ու դանդաղ
Չօքեց ինձ վըրա՝ սև թեւերը կախ,
Միտքըս իր թելը կըտրեց ու թըռաւ,
Անհուն, խաւարչտին քառտում կորաւ.
Մահ, մեռել, շիրիմ— թեթև հեռացան,
Ու հեռանալով՝ փոխեցին, դարձան
Ամպեր, ըստեքներ, կէտեր երեքուն,

Գողացին, հանդան, ու մըթնեց հեռուն...
Կարճատև մի քուն եկաւ ինձ վըրա,
Եւ ես միւս անգամ երազում տեսայ.

XV

Հընչում էր փըրփըուն վըտակն արծաթի,
Արևը խաղում պայծառ կապոյտում.
Առանց կորուստի ու առանց վըշտի
Կանգնած էի ես այն երազ հովտում:

Ձուրջըս շուշաններ, անվերջ շուշաններ,
Լիքն էր անտառը անուշ բուրմունքով,
Եւ եղեմական ներդաշնակ ձայներ
Փառք էին տալի թովչական երգով.

«Փանք անպատում մըլիթարչին,
Փանք խորհուրդին անմահութեան.
Նա է կըրում յոյսը վերջին
Ու շողն անչէջ, արարչական.
Փանք խորհուրդին անմահութեան:

Նա գընում է բարձր ու անվերջ
Դէպի անհունն ու յաւիտեան,
Վիշտը հանգչում է նըրա մէջ,
Ապրում սէրը անապական.
Փանք խորհուրդին անմահութեան...»

Ու լըսում եմ ես այն խաղաղ օդում
Քընքոյշ ու զըւարթ ձայնը սիրելի,
Անյայտ ու անտես կանչում է նա ինձ,
Կանչում գերազանց մի ուրիշ կեանքի.

«Արի ինձ հետ, իմ թըւնա,
Ես քեզ տանեմ մի աշխարհ,
Ուր չը կայ մահ, անջատում,
Ու սէրն անվերջ, անհատնում...»

Արի, թըուր, գընանք ինձ հետ,
Անցան, անհոգ, անյո՛ւշ, անհե՛տ...»

1894.



ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԻԹԸ

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹԸ

I

Առիւծ-Մըհերը, զարմով զիւցազուն,
Քառասուն տարի իշխում էր Սասուն.
Իշխում էր անհղ՝ ու նըրա օրով
Հաւքն էլ չէր անցնում Սասմայ սարերով:
Սասմայ սարերից շնա ու շառ հեռու
Թընդում էր նըրա հըռչակն անարկու,
Խօսում էր իր փառքն, արաքքն անվեհեր.
Հազար բերան էր—մի Առիւծ Մըհեր:

II

Էսպէս, անաւոր առիւծի նըման,
Սասմայ սարերում նըստած էր իշխան
Քառասուն տարի: Քառասուն տարում
«Ա՛խ» չէր քաշել նա դեռ իրեն օրում.
Քայց հիմի, երբ որ եկաւ ծերացաւ,
էն անահ սիրտը ներս սողաց մի ցաւ:
Սկըսեց մըտածել զիւցազուն ծերը.
—Հասել են կեանքիս աշնան օրերը,
Չուտով սե հողին ես կերթամ գերի,
Կանցնի ծըխի պէս փառքը Մըհերի,

Կանցնեն կ' անուն, կ' սարսափ, կ' ահ,
Իմ անաէր ու որբ աշխարքի վրբա
Ոտի կը կանգնեն հաղար քաջ ու զև...
Մի ժառանգ շունիմ՝ իմ անցման ետև
Իմ թուրը կտպի, Սասուն պահպանի...
Ու դարդ էր անում հրեկան ծերունի:

III

Մի օր էլ էն զորշ յօնքերը կիտած
Երբ միտք էր անում՝ երկրնքից յանկարծ
Մի հուր-հրբեղէն յայտնուեց քաջին,
Ոտները ամպտա կանգնեց առաջին:
—Ողջս՛ն երկնամերձ Սասմայ հրեկային.
Քու ձայնը հասաւ Ասարծու դահին,
Ու շուտով նա քեզ մի գաւակ կըտայ:
Բայց լաւ իմանաս, լեռների արքայ,
Որ օրը, որ քեզ ժառանգ է արևի,
էն օր կը մեռնէք քու կինն էլ, դու էլ:
—Իր կամքը լինի, ասաւ Մըհերը.
Մենք մահլինն ենք միշտ ու մահը մերը,
Բայց որ աշխարքում ժառանգ ունենանք,
Մենք էլ նըրանով անմեռ կը մընանք:
Հըրեշտակն այստեղ ցոլացաւ նորից,
Ու էս երջանիկ պետման օրից
Երբ իննը ամիս, իննը ժամն անցաւ,
Աւիւծ Մըհերը գաւակ ունեցաւ:

Դաւիթ անւանեց իրեն կորիւնին,
Կանչեց իր եղբայր Չէնով Օհանին,
Երկիրն ու որդին աւանդեց նըրան,
Ու կինն էլ, ինքն էլ էն օրը մեռան:

IV

էս դարում Մըսըր անյաղթ ու հրօր
Մըսրա-Մելիքն էր նըստած թագաւոր.
Հէնց որ իմացաւ էլ Մըհեր շը կայ,
Վեր կացաւ կըռուով Սասունի վրբա:
Չէնով Օհանը անից սարսափած՝
Թըշնամու առաջն ելաւ գըլխարաց,
Ազաշանք արաւ, ընկաւ ոտները.
—Դու եղիր, ասաւ, մեր գըլխի տէրը,
Ու քու շըւարքում՝ քանի որ մենք կանք,
Քու ծառան լինենք, քու լսարջը միշտ տանք,
Միայն մեր երկիր քարութանդ շանես
Ու քաղցըր աչքով մեզ մըտիկ անես:
—Չէ, ասաւ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով,
Որ էգուց-էլօր, ինչ էլ որ անեմ,
Ոչ մի սասունցի թուր չառնի իմ գէմ:
Ու գընաց Օհան՝ բոլոր բովանդակ
Սասունը բերաւ, քաշեց թըրի տակ.
Մենակ Դաւիթը, ինչ արին, շարին,
Մօտ չեկաւ գուշման Մելիքի թըրին:

Եկան քաշեցին՝ թէ դօռով տանեն,
Թափ տըւաւ, մարդկանց զըցեց զէս ու զէն,
Փոքրիկ ճըկոյթը մի քարի առաւ,
Ապառաժ քարից կըրակ դուրս թըռաւ:
—Պէտք է ըստանեմ էս փոքրիկ ծուռին,
Ասա թագաւորն իրեն մեծերին:
—Թագաւոր, ասին, դու էտքան հըլօր,
Թըրիգ տակին է ողջ Սասունն էսօր,
Ի՞նչ պէտք է անի քեզ մի երեխայ,
Թէկուզ իր տեղով հէնց կըրակ դառնայ:
—Դուք զիտէք, ասա Մըսրայ թագաւոր,
Բայց թէ իմ զըլխին փորձանք զայ մի օր,
էս օրը վըկայ,
Սըրանից կը գայ:

V

էս որ պատահեց, մեր Դաւիթ հըսկան
Մի մանուկ էր դեռ եօթ-ութ տարեկան.
Մանուկ եմ ասում, բայց էնքան ուժեղ,
Որ նըրա համար թէ մարդ, թէ մըժեղ:
Բայց հընուց խօսք է, մեծ իմաստ ունի,
Թէ՛ խաշը՝ տէրը զօրաւոր կանի:
Վայ անտէր որբին աշխարքի վըրա,
Թէկուզ Աւիւծի կորիւն լինի նա:
Ձէնով Օհանին ունէր մի չար կին:
Մին-երկու լըսեց, մի օր էլ կարգին

Իրեն մարդու հետ սկըսաւ կըռելի.
—Ես մենակ հողի, հողար ցաւի տէր,
Ի՞նչ ես ուրիշի եթիմը բերել,
Նըստեցրել զըլխիս պարապ հացակեր...
Հողեմ զըլուխը... ես գերի հօ շեմ,
Ամենքի քէֆի ետեից թըռչեմ...
Մի կուռ կորցըրո՛ւ, կարգիլը մի բանի,
Գընա իր համար աշխատանք անի...
Ու հետն սկըսաւ ողբալ ու կոծել,
Իր օրը սըղալ, իր բախտն անիծել,
Թէ անբախտ հղաւ աշխարքի միջում,
Ոչ մի տէր ունի, ոչ մարդն է խըղճում...
Ու գընաց Օհան երեխի ոտի
Մի զոյգ ոտնաման բերաւ երկաթի,
Երկաթի մի կուռ շալակին դըրած,
Ու արաւ Սասմայ քաղքի դառնարած:

VI

Քըչեց գառները մեր հովիւ հըսկան,
Ելաւ Սասունի սարերն աննըման.
—է՛յ ջան, սարեր,
Սասման սարեր...
Որ կանչեց, նըրա ձէնից ահաւոր
Դըղորդ-զըմբղըմբոցն ընկաւ սար ու ձոր,
Վայրի գաղաններ ըններից փախան,
Քարէքար ընկան, գատարկուն հղան:

Դաւիթը ընկաւ նըրանց ետեւից,
Որին մի սարից, որին մի ձորից—
Աղէս, նապաստակ, դայլ, եղնիկ բըռնեց,
Հաւաքեց, բերաւ գառներին խառնեց,
Իրիկւան քըշեց ողջ Սասմայ քաղաք:
Կաղկամձ ու ոռնոց, աղմուկ, աղաղակ.
Քաղքըցիք յանկարծ մին էլ էն տեսան,
Գալիս են հըրէս անհամար գաղան.

—Վայ, հարայ, փախէք...»

Մեծեր, երեխք

Սըրտաճաք եղած,

Գործները թողած,

Որը տուն ընկաւ, որը ժամ, խանութ,
Ու ամուր փակեց դուռն ու լուսամուտ:
Դաւիթը եկաւ կանգնեց մէյդանում.

—Վահ, էս մարդիկը ի՞նչ վաղ են քընում.

Հէյ ուլատէր, հէյ գառնատէր,

Ելէք, շուտով բացէք գըռներ.

Ով մինն ունէր—տասն եմ բերել,

Ով տասն ունէր—քըսանն արել...

Չուտով ելէք, եկէք տարէք,

Ձեր գառն ու ուլ գոմերն արէք:

Տեսաւ՝ չեն գալի, դուռ չեն բաց անում,
Ինքն էլ մեկնըւեց քաղքի մէյդանում,
Գըլուխը գըրաւ մի քարի՝ մընաց
Ու մուշ-մուշ քընեց մինչև լուսարաց:

Լուսին իշխաններ ելան միասին,
Գընացին՝ Ձէնով Օհանին ասին.
—Ամա՛ն, քեզ մատաղ, այ Օհան ախպէր,
Մեր գառն ու մեր ուլ թող մընան անտէր,
Միայն սըրանից ազատ արա մեզ.
Ոչ գառն է ջոկում, ոչ գայլն ու աղէս,
էս քաղքի գըլխին փորձանք կը բերի,
Գայլերոց կանի, կըտայ՝ կաւերի:

VII

Ելաւ՝ Դաւիթ մօտ գընաց Օհանը.
—Հ՞ը, Դաւիթ, ասաւ, սնց է քու բանը:
—Հօրեղբայր Օհան, շատ է գըժար բան.
էն կարմիր, անպոչ գառները որ կան,
Խելօք են, ամա պոշաւոր գառներ
Ցըրւեցին, փախան ողջ սարերն ի վեր,
էնքան վաղեցի, որ ելաւ հողիտ,
էլ իսկի տըրեխ չըմընաց հագիտ:
—Դաւիթ ջան, ասաւ, էդ շատ է գըժար.
Նեա-աղեղ եմ ես շինել քեզ համար,
Նեա-աղեղըդ առ, գընա որս արա,
Ման արի ազատ սարերի վըրա:
Նեա աղեղն առաւ Դաւիթ Օհանից,
Հեռացաւ քաղքից, քաղքի սահմանից
Ու գառաւ որսկան: Գընաց մի կորկում
Լոր էր ըսպանում, ճընճղուկ էր դարկում,

Մըթանը գընում իրեն հօր ծանօթ
Աղբատ, անորդի մի ծեր կընկայ մօտ,
Վիշապի նըման, երկա՛ր, ահագին
Մեկնըւում, քընում կըրակի կողքին:
Մի օր էլ՝ երբոր իր որսից դարձաւ,
Պառաւը վըրէն սաստիկ բարկացաւ.
—Վա՛յ Դաւիթ, ասաւ, մահըս տանի քեզ,
Դո՛ւ պէտք է էն հօր դաւակը լինե՛ս:
Ձեռից ու ոտից ընկած մի ծեր կին—
Ես եմ ու էն արտն Աստըծու տակին,
Ինչո՛ւ ես գընում տափում, արբորում,
Իմ ամբողջ սարւան սպըռուսար կըտըում:
Թէ որսկան ես դու—նետ աղեղըդ ա՛ռ,
Ծըծմակայ գըլսից մինչև Սեղանսար
Քու հէրը ձեռին մի աշխարհ ունէք,
Որսով մէջը լի որսի սար ունէք,
Եղնիկ կայ էնտեղ, այծեամ ու պախրա.
Կարմիկ ես—գընա էնտեղ որս արա:
—Ի՞նչ ես, այ պառաւ, էլ ինձ անիծում,
Ես ջահիլ եմ դեռ, ես նոր եմ լըսում.
Ո՞րտեղ է հապա սարը մեր որսի...
—Գընա՛, հօրեղբայրդ—Օհանը կասի:

VIII

Հօրեղբօր շէմքում միւս օրը ծէգին
Դաւիթը կանգնեց աղեղը ձեռքին:

—Հօրեղբայր Օհան, ինչո՛ւ չես ասել,
Իմ հէրը որսի սար է ունեցել,
Այժեամ կայ էնտեղ, եղջերու, կըխտար.
Վեր կաց, հօրեղբայր, տար ինձ որսասար:
—Վա՛յ, կանչեց Օհան, էդ քու խօսքը չէք,
Էդ ով քեզ ասաւ, լեզուն պապանձէր:
էն սարը, որդի, գընաց մեր ձեռից,
էն սարի որսն էլ գընաց էն սարից,
էլ չըկան այժեամ, եղջերու, կըխտար:
Քանի լուսեղէն քու հէրը դեռ կար,
է՛յ գիտի օրեր—ս՛րտեղ էք կորել,
Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել...
Քու հէրը մեռաւ, Աստած խըռովեց,
Մըսրայ Թագաւոր զօրքեր ժողովեց,
Եկաւ մեր երկիր բարութանդ արաւ,
էս սարի որսն էլ թալանեց, տարաւ,
Եղնիկը գընաց, եղջերուն գընաց...
Մեր գիրն էլ հալրաթ էսպէս էր գրած,
Անցել է, որդի, քու բանին գընա,
Մըսրայ Թագաւոր ձէնըդ կիմանայ...
—Մըսրայ Թագաւոր ինձ ի՞նչ կանի որ...
Ես ի՞նչ եմ հարցնում Մըսրայ Թագաւոր.
Մըսրայ Թագաւոր թող Մըսըր կենայ,
Իմ հօր սարերում ի՞նչ գործ ունի նա...
Վեր կաց, հօրեղբայր, նետ-աղեղըդ առ,
Կապարճըդ կապիր, գընանք որսասար:
Ելաւ Օհանը ճարը կըտըրւած,

Գրնացին տեսան՝ էլ ի՞նչ որսասար.
Անտառը ջարդած, պարխտպն տւերած,
Բուրգերը արած գեանին հաւասար...

IX

Գիշերը հասաւ, մրնացին էնտեղ:
Ձէնով Օհանն էր, իր նեան ու աղեղ
Գրբաւ գըլխի տակ, հանգիստ խըռմփաց.
Դաւիթը մրնաց մըտքի ծովն ընկած:
Մին էլ նըկատեց, որ մութը հեռոււմ
Մի թէժ, փայլփլուն կըրակ է վառոււմ:
Էն լուսը բըռնած՝
Վեր կացաւ, գընաց,
Գրնաց ու գընաց, բարձրացաւ մի սար,
Բարձրացաւ, տեսաւ մի մեծ մարմար քար
Կէսից պատըռւած
Ու միջից վառւած
Բըխում է լուսը պա՛րզ, քուլա-քուլա,
Բարձրանում, իջնում ետ քարի վըրա:
Վար իջաւ, Դաւիթ էնտեղից կըրկին,
Վար իջաւ, կանչեց Ձէնով Օհանին:

—Ե՛լ, հօրեղբայր, քանի՛ քընես,
Ե՛լ էն պայծառ լուսը մի տես:
Լուս է իջել բարձրը սարին,
Բարձրը սարին, մարմար քարին,

Ե՛լ, հօրեղբայր, անուշ քընից,
Էն ինչ լուս է բըխում քարից:

Ելաւ, խաշ քաշեց Օհանն կրեսին.
—Է՛յ, որդի, ասաւ, մեռնեմ իր լուսին,
Էն մեր Մարութայ սարն է գօրաւոր:
Էն լուսի տեղը կանգնած էր մի օր
Սասմայ ապաւէն, Սասմայ պահապան
Մեր սուրբ Տիրամօր վանքը Չարխափան:
Մըշտական, կըր որ կըռխ էր գընում,
Էնտեղ էր քու հէլն իր աղօթքն անում:
Քու հէլը մեռաւ, Աստուծ խըռովեց,
Մըսրայ Թագաւոր գօրքեր ժողովեց,
Մեր վանքն էլ եկաւ քանդեց էն սարում,
Բայց դեռ սեղանից լուս է բարձրանում...

X

Դաւիթը էս էլ կըր որ իմացաւ,
—Անուշ հօրեղբայր, հօրեղբայր, ասաւ,
Որը եմ ու անտէր աշխարքի վըրա,
Հէր շունիմ՝ գու ինձ հէրութիւն արա:
Էլ չեմ իջնիլ ես Մարութայ սարից,
Մինչև չըլինեմ մեր վանքը նորից:
Քեզանից կուզեմ հինգհարիւր վարպետ,
Հինգհարար բանուր մըշակ նըրանց հետ,
Որ գան՝ էն շարաթ կանգնեն ու բանեն,

Առաջւան կարգով մեր վանքը շինեն:
Գրնաց Օհանը ու բերաւ իր հետ
Հինգ հազար բանուոր, հինգհարիւր վարպետ:
Վարպետ ու բանուոր եկան կանգնեցին,
Չըրըխկ հա թըրըխկ, նորից շինեցին,
Առաջւան կարգով, վառքով փառաւոր
Բարձրը Մարութայ վանքը Տիրամօր:
Յըրւած միաբանք ետ նորից եկան,
Նորից թընդացին աղօթք, շարական.
Ու երբ շէն արաւ հօր վանքը նորից՝
Յած իջաւ Դաւիթ Մարութայ սարից:

XI

Համբաւը տարան Մըսրայ Մելիքին.
—Հապա՛ չես ասիլ՝ Դաւիթը կըրկին
Հօր վանքը շինել, իշխան է դառել,
Դու օխտը տարւան խարջը չես առել:
Մելիք դայրացաւ.
—Գրնացէք, ասաւ,
Բաղին, Կողբաղին,
Սիւղին, Չարխաղին,
Սասմայ քար ու հող տակն ու վեր արէք,
Իմ օխտը տարւան խարաջը բերէք:
Քառսուն կոյս աղջիկ բերէք արմաղան,
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառսունն էլ երկար, որ ուղտեր բառնան,

Իմ տանն ու դըռան դարաւաշ դառնան:
Ու Կողբաղին առաւ զօրքեր.
—Գըլխիս վըրա, ասաւ, իմ տէր.
Գրնամ հիմի քանդեմ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով դեղին սսկի,
Տեղը ջընջեմ Հայոց աղգի:
Ասաւ, Մըսրայ աղջիկ ու կին
Պար բըռնեցին ու երգեցին.
—Մեր Կողբաղին գընաց Սասուն,
Կանայք բերի քառսուն-քառսուն,
Քառսուն բեռնով սսկի բերի,
Մեր ճակատին շարան շարի,
Կարմիր կովեր բերի կըթան՝
Գարնան շինենք եղ ու չորթան.
Ջան Կողբաղին, քաջ Կողբաղին,
Սասմայ Դաւիթին դարկեց գետին.»
Ու Կողբաղին փըքւած, ուռած,
—Չնորհակալ եմ, քոյրեր—գոռաց,—
Մինչև գալըս դեռ համբերէք,
Էն ժամանակ պիտի պարէք...

XII

Էսպէս երգով,
Ջօռով-զօրքով
Դու Կողբաղին մըտաւ Սասուն.
Օհան լըսեց՝ կապուց լեզուն:

Աղ ու հացով,
Լաց ու թացով
Առաջն ելաւ,
Խընդէրք արաւ.

—Ինչ որ կուզես՝ առ տանք, աման,
Վարդ աղջիկներ, կանայք Սասման,
Դառը դադած գեղին սսկին,
Միայն թէ գըթա մեր խեղճ աղգին,
Մի կոտորիր, մի տար մահու,
Վերե՛ Աստուած, ներքեր՝ դու...

Ասաւ, բերաւ շարան-շարան
Վարդ աղջիկներ, կանայք Սասման:
Ու Կողբաղին կանգնեց, ջոկեց,
Մարագն արաւ, գուռը փակեց,
Քառսուն կոյս աղջիկ, սիրուն, արմաղան,
Քառսուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառսուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրայ Մելիքին դարաւաշ դառնան.
Դէզ-գէզ կիտեց գեղին սսկին,
Սե սուգ կալաւ Հայոց աղգին:

XIII

21
Հէյ, սըր կս, Դաւթի, Հայոց պահապան,
Քարը պատըռուի—զնւրս արի մէյդան:
Քանդած հօր վանքը որ շինեց նորից,
Յած իջաւ Դաւիթ Մարութայ սարից,

Ժանգոտած, անկոթ մի շեղբիկ գըտաւ,
Գընաց՝ պառաւի շողգամը մըտաւ:
Պառաւն էր. եկաւ՝ անէ՛ծք, աղաղակ.
—Վայ, խելնա Դաւիթ, շողգամի տեղակ
Դու կըրակ ուտես, ցաւ ուտես, ասաւ,
Քու աչքն աշխարքում մենակ ինձ տեսաւ.
Կորեկըս արիւր գետնին հաւասար,
Էս էր մընացել ձըմեռւան պաշար,
Էս էլ կըտըում կս,
Էլ մնց ապրեմ կս:
Թէ կըտըիճ կս դու, աղեղգ առ, գընա՛
Քու հօր աշխարքին տիրութիւն արա,
Քու հօր գանձը կեր.
Թողել կս անտէր,
Մըսրայ Թագաւոր զըրկել է՝ տանի:
—Էլ ինչ կս վըրէս բարկանում, նանի,
Էզ ինչ կս ասում, կս շեմ հասկանում,
Մըսրայ Թագաւոր մեր ինչն է տանում:
—Մըսրայ Թագաւոր մեր ինչն է տանում...
Մըսրայ Թագաւոր քու աչքն է հանում,
Դանդալօշ Դաւիթ. զըրկել է հըրէն,
Եկել են Սասմայ քաղաքի վըրէն
Քաղին, Կողբաղին,
Սիւղին, Չարխաղին,
Թալան են տալի բովանդակ Սասում.
Քառսուն բեռ սսկի խարաջ են ուղում,
Քառսուն կոյս աղջիկ սիրուն, արմաղան,

Քառասուն կարճ կընիկ, որ երկանք աղան,
Քառասուն էլ երկար, որ ուղտեր բառնան,
Մըսրայ Մելիքին դարաւաշ դառնան:
—Ի՞նչ ես, այ պառաւ, էլ ինձ անիծում:
Յոյց տուր ինձ հասպա—սրտեղ են ուզում:
—Ո՞րտեղ են ուզում... Մահըս տանի քե՛ղ,
Դո՛ւ պէտք է էն հօր զաւակը լինե՛ս...
Եկել ես՝ էստեղ շաղգամ ես լափում...
Ոսկին Կողբաղին ձեր տանն է շափում,
Աղջիկներ փլլիկ մարագն են լըցրած:
Չաղգամը թողեց Դաւիթը՝ գընաց:
Տեսաւ՝ Կողբաղին իրենց տան միջին
Չափում է ոսկին թեղած առաջին,
Սիւղին, Չարխաղին պարկերն են բըռնել,
Ձէնով Օհանն էլ չըլինքը ծըռել,
Կանգնել է հեռու, ձեռները ծոցին:
Տեսաւ, աչքերը արնով լըցւեցին:
—Վեր կաց, Կողբաղին, հեռու կանգնիր դու,
Իմ հօր ոսկին է—ես եմ շափելու:
—Կողբաղին ասաւ.—է՛յ, Ձէնով Օհան,
Կըտաս—տո՛ւր խարջը էս օխտը տարւան,
Թէ չէ՛ կը գընամ, արեւս վըկայ,
Մըսրա-Մելիքին կը պատմեմ, կը գայ՝
Ձեր Սասմայ երկիր քար ու քանդ կանի,
Տեղը կը վարի, բօստան կը ցանի:
—Կորէք, գընացէք, գուք Մըսրայ շըներ,
Որոտաց Դաւիթ, ասես ամպ լինէր.

Մեռած էք կարծում դուք մեղ, թէ՛ չըւար,
Եկել էք Սասուն գընէք խարջի տակ...
Ասաւ, չափն առաւ էնպէս շըպըրտեց,
Տըւաւ Կողբաղնի գըլուխը Չարդեց,
Չափի փըշընքը պատն անցաւ, գընաց,
Մինչև օրս էլ դեռ գընում է թըռած:
Ու ելան՝ թափած ոսկին թողեցին,
Հայոց աշխարքից փախան գընացին
Բաղին, Կողբաղին,
Սիւղին, Չարխաղին:

XIV

—Վայ, վայ, հօրեղբայր, ի՛նչ ասեմ ես քեզ.
Մենք ունինք էստեղ գեղին ոսկու դէզ,
Դու արել ես ինձ քաղաքի ծառան,
Դու թողել ես ինձ օտարի գըռան...
Հօրեղբայրն ասաւ—այ խնթ, խելագար,
Ոսկին պահել եմ Մելիքի համար,
Որ քաղցըր լինի աչքը մեղ վըրայ:
Չըտըլիր, հիմի որ դօրք առնի՛ գայ,
Սասմայ քար ու հող հեղեղի, տանի,
Ո՞վ դէմը կերթայ, ո՞վ կըռիւ կանի:
—Դու կայ, հօրեղբայր, թող գայ, ես կերթամ,
Կերթամ ես նըրան պատասխան կըտամ:
Ու մութ մարագի գըռանը զարկեց,
Փակած աղջիկներ հանեց, արձակեց.

—Գընացէք, ասաւ, աղատ անպրեցէք,
Սասունցի Դաւթին արև խընդըրեցէք:

XV

Էսպէս ջարդած, արիւնիլըայ
Փախան, ընկան հողը Մըսրայ
Բագին, Կողբաղին,
Սիւզին, Չարխաղին:
Մըսրայ կանայք հեռւից տեսան,
Հեռւից տեսան՝ ուրախացան
Ու ծափ տըւին կըտերներին.

—Եկան, եկան, բերին, բերին...

Մեր Կողբաղին գնաց Սասուն,
Կանայք բերաւ քառսուն-քառսուն,
Կարմիր կովեր բերաւ կըթան,
Դարնան շինենք եղ ու շորթան...

Յէնց մօտեցան, նըկատեցին,
Ծափ ու խընդում ընդհատեցին,
Քըրքըջացին
Ու կանչեցին.

—Է՛յ, Կողբաղին մեծարերան,
Էդ սրտեղից լերան-լերան,
Լերան-լերան կըզաս փախած,
Հաստ գըլուխըդ կիսից ճըզած:
Էն դո՞ւ շատիր՝ գընամ Սասուն,
Կանայք բերեմ քառսուն-քառսուն,

Բառսուն բեռնով սսկի հանեմ,
Հայոց երկիր աւեր անեմ:
Դացիր Սասուն քանց գէլ գաղան,
Ետ ես գալի քանց շուն վաղան...

Ու Կողբաղին խիստ բարկացաւ.

—Սնւ կացէք դուք, լըրբեր, ասաւ.
Չեր մարդիկն էք տեսել դուք դեռ,
Դուք չէք տեսել Սասմայ ծըռեր:
Սասմայ ծըռեր լերան-լերան,
Նետեր ունին մի մի գերան.
Սասմայ երկիր քաց ու կապան,
Դըթար սարեր, ձոր ու ծապան.
Նըրանց խոտեր—ինչպէս կեռ թուր,
Զօրք ջարդեցին երեր հարիւր...

Ասաւ ու էլ չառաւ դադար,
Վըռագ-վըռագ, գըլխապատառ
Վաղեց իրեն թագաւորին:
Խընդաց Թագաւորն իր աթոռին:
—Ապրին, ապրին, քաջ Կողբաղին,
Արժէ կախեմ ես քու ճըտին
Մեր դուզդունի մեծ նըշանը—
Պարգև քու մեծ յաղթութեանը:
Ո՛ւր են, հապա առաջըս բեր
Սասմայ սսկին ու աղջիկներ:
Ասաւ Մելիք, ու Կողբաղին
Գըլուխ տըրաւ մինչև գետին.
—Ապրանձ կենաս, մեծ Թագաւոր,

Ջօուով փախայ ես ձիաւոր,
Ո՞րեց բերէի Սասմայ ոսկին:
Մի խենթ ծընեց չայոց աղգին,
Ոչ ահ գիտի, ոչ տէր ու մեծ,
Գըլուխս էսպէս տըւաւ, ջարդեց.
— 2եմ տալ, ասաւ, իմ հօր ոսկին,
2եմ տալ կանայքն իմ չայ աղգին,
Սասմայ երկիր ձեզ բան չըկայ...
Քու թագաւոր, ասաւ, թնդ գայ,
Թող գայ՝ ինձ հետ կըլու անի,
Թէ դստդ է՝ դօուով տանի»:
Կատաղեց, վըրվըեց Մըսրայ թագաւոր.
— Կանչեցէք, ասաւ, իմ զօրքը բոլոր.
Հաղար հաղար մարդ նորելուկ մանուկ,
Հաղար հաղար մարդ անբեղ, անմօրուք,
Հաղար հաղար մարդ բեղը նոր ծըլած,
Հաղար հաղար մարդ նոր թախտից ելած,
Հաղար հաղար մարդ թուխ միրուքաւոր,
Հաղար հաղար մարդ սիւտտակ ալեոր,
Հաղար հաղար մարդ, որ փողեր հընչեն,
Հաղար հաղար մարդ, որ թըմբուկ դարկեն...
Կանչեցէք, թող գան, հագնեն զէնք, զըրան,
Կըլու աի գընամ ես Գաւթի վըրա,
Սասունն աւերեմ,
Հեղեղեմ, բերեմ:

էսպէս անհամար զօրքեր հաւաքեց,
Եկաւ Սասմայ դաշտ՝ բանակը դարկեց
Ու ծանրը նըստեց Մըսրայ թագաւոր:
Էնքան ահագին բազմութիւնն էն օր
Բաթմոնայ ջըրին եկաւ ու չոքեց.
Ով եկաւ, խըմեց—գետը ցամաքեց,
Սասմայ քաղաքում մընացին ծարաւ:
2էնով Օհանին զարմանքը տարաւ:
Քուրքը ուսն առաւ, սարը բարձրացաւ.
Սարը բարձրացաւ՝ տեսաւ, ինչ տեսաւ,
ձերմակ վըրանից դաշտը ճերմակել,
Ասես էն գիշեր ձըմեւը եկել՝
Սպիտակ ձիւնով պատել էր Սասուն:
Լեզին ջուր կըտըեց, կապ ընկաւ լեզուն,
Հարայ կանչելով՝ փախաւ, տուն ընկաւ.
— Վայ, փախէք, եկաւ... հայ, հարայ, եկաւ...
— Ի՞նչը, հօրեղբայր, ինչը, ինչն եկաւ...
— Ցաւն ու կըրակը Գաւթի պինչն եկաւ.
Մըսրայ թագաւոր ելել է, եկել,
Եկել՝ մեր դաշտին բանակ է դարկել,
Թիւ կայ աստղերին, թիւ չըկայ զօրքին...
Վայ մեր արեին, վայ մեր աշխարքին...
Ե՛կ ոսկին տանենք, աղջիկներ տանենք,
2ոքենք աւաջին, պաղատանք անենք,
Գուցէ թէ գըթայ,

Մեզ սըբի չըտայ...

—Դու կնոց, հօրեղբորս, դու գարդ մի անիր.

Գընա՛ քու օգու՛մ դու հանգիստ քընիր.

Հիմի ես կեղնեմ, Սասմայ դաշտ կերթամ,

Մըսրա-Մեղիքին պատասխան կըլամ:

Ու գընաց Դաւիթ ծանօթ պառուին.

—Նանի ջան, ասա, ժանգոտած ու հին

Երկաթի կըսոր, անթարոց, շամփուր,

Ինչ ունիս—չունիս՝ հաւաքիր, ինձ տուր,

Մի էչ էլ վըրսի, որ վըրէն նըստեմ,

Կըսիւ եմ գընում Մըսրայ գօրքի դէմ:

—Վա՛յ, Դաւիթ, ասա, մահըս տանի քեզ.

Դո՛ւ պէտք էն հօր դաւակը լինե՛ս...

Քու հէրն ունէր կըսի համար

Հըրեղէն ձի, սսկի քամար,

Զըրահ շապիկ, կապէն հագի,

Աջ թեկն խաշ պատարագի,

Կուռ սաղաւարտ, Կայծակի-Թուր,

Իսկ դու կուզես էչ ու շամփուր...

—Աման, նանի, չեմ լըսել դեռ,

Ո՛ւր են հիմի իմ հօր դէնքեր:

—Հօրեղբօրք գընա հարցուր.

Ո՛ւր են, ասա, հանիր, բեր՝ տուր.

Բան է, թէ որ չըտայ սիրով,

Աչքը հանիր՝ խըլըր գօռով:

Դաւիթ գընաց հօրեղբօր մօտ.

—է՛յ հօրեղբայր, կանչեց ցասկոտ,

Իմ հէրն ունէր կըսի համար

Հըրեղէն ձի, սսկի քամար,

Զըրահ շապիկ, կապէն հագի,

Աջ թեկն խաշ պատարագի,

Կուռ սաղաւարտ, Կայծակի-Թուր.

Կըտաս՝ բեր տուր...

—Վա՛յ, Դաւիթ ջան,

Ահից գոռաց Ձէնով Օհան,

Քու հօր մահւան տարուց, օրից

Դուրս չեմ հանել ձին ախոռից,

Ոչ սընդուկից Թուր-Կայծակին,

Զըրահ շապիկ, սսկի գօտին...

Ինձ թող, աման, մի սպանիր,

Կուզես—հըրէն, գընա հանիր:

Հագաւ Դաւիթ դէնքն ու գըրահ,

Կապեց գօտին, Թուր-Կայծակին,

Խաշն էլ իր յաղթ բաղկի վըրահ,

Ելաւ հեծաւ Առիւծ հօր ձին:

Հօր ձին հեծաւ ու մըտրակեց.

Ձէնով Օհան լալով երգեց.

—Ափսոս, հաղանք ափսոս հըրեղէն, մեր ձին,

Ա՛խ, հըրեղէն մեր ձին.

Ափսոս, հաղանք ափսոս, մեր ոսկի գօտին,

Ա՛խ, մեր ոսկի գօտին.

Ափսոս թանգ կապէն, որ հաղին տարաւ,

Ա՛խ, որ հաղին տարաւ...

Դաւիթ բարկացաւ,

Ձին քըշեց, դարձաւ,

Օհանը վախեց,

Իը երգը փոխեց.

«Ափսոս, նորեղուկ Դաւիթըս կորաւ,

Ա՛խ, Դաւիթըս կորաւ:

էս որ իմացաւ՝

Դաւիթ մեղմացաւ,

Իջաւ՝ Օհանի ձեռքը համբուրեց,

Ձէնով Օհանն էլ, ինչպէս հայր ու մեծ,

Օրհնեց, խըրատեց նըրան հայրաբար,

Դէպի Սասմայ դաշտ դըրաւ ճանապարհ:

XIX

Սասունցի Դաւիթին ունէր մի քեռի,

Անունը Թորոս, ահեղ աժդահա:

Սա էլ իմացաւ համբաւը կըռուի,

Մի բարդի ուսին գալիս է ահա:

Գալիս է՝ հեռւից բարձըր գոռայով.

— Ի՛նչ էք վէր եկել էս դաշտի միջում,

Քանի գըլխանի մարդիկ էք կամ սով,

Սասունցի Դաւիթին որ չէք ճանաչում...

Բա չէք իմանում, որ էստեղ է նա

Գալու խաղացնի իը ձին թեաւոր.

Հեռացէք, հիմի ուր որ է՝ կըզայ,

Եկել եմ սըրբեմ մէյդանը էսօր:

Ասա ու քաշեց իը ուսի բարդին,

Սըրբեց բանակից մի քըսան վըրան...

Դաւիթն էլ ահա սարի գագաթին

Կանգնած՝ գոռում է վիշապի նըման.

— Ով քնած էք՝ արթուն կացէք,

Ով արթուն էք՝ ելէք, կեցէք,

Ով կեցեր էք՝ դէնք կապեցէք,

Ձէնք էք կապել՝ ձի թամբեցէք,

Ձի էք թամբել՝ ելէք, հեծէք.

Յեառյ շասէք՝ թէ մենք քընած--

Դաւիթ գող-գող եկաւ, գընաց...

էսպէս կանչեց, աստանդակեց,

Ու՛ ինչ ամպից կայծակ զարկի՝

Մըսըայ գօրքի մէջ տեղ զարկեց

Չողացնելով Թուր-Կայծակին:

Ջարդեց, փըշրեց մինչև կէսօր.
Կէսօր արինն կլաւ հեղեղ,
Քըշեց, ապաւ հաղարաւոր
Մարդ ու զիակ ողջ միատեղ:

Կար զօրքի մէջ մի ալևոր,
Աշխարք տեսած ու բանաղէտ.
—Տըղերք, ասաւ, ճամբայ տըւէք,
Գընամ խօսեմ ես Գաւթի հետ:

Գընաց՝ կանգնեց Գաւթի առաջ,
Էսպէս խօսեց էն ծերունին.
—Դալար կենան, կուռըդ, սիլ քաջ,
Սուրըդ կըտրուի միշտ քու ձեռին:

Մի ծերունուս խօսքին մըտիկ,
Տես, քու խելքը ինչ է կըտրում.
Ի՞նչ են արել քեզ էս մարդիկ,
Հէ՛ր ես սըրանց դու կոտորում:

Ամեն մինը մի մօր որդի,
Ամեն մինը մի տան ճըրագ.
Որը կինն է թողել էնտեղ
Աչքը ճամբին, խեղճ ու կըրակ,

Որը մի տուն լիք մանուկներ,
Որը ծընող աղքատ ու ծեր,

Որը լացով, քօղն երեսին
Նորապըսակ ջահիլ հարսին..

Թագաւորը դօրով-թըրով
Հաւաքել է՝ էտեղ բերել,
Խեղճ մարդիկ ենք՝ պակաս օրով,
Մենք քեզ վընաս ինչ ենք արել:

Թագաւորն է քու թըշնամին,
Կըսիւ ունիս—իբ հետ արա,
Հէ՛ր ես քաշում Թուր-Կայծակին
Էս անճարակ խալիսի վըրա:

—Լաւ ես ասում դու, ծերունի,
Ասա Գաւթին ալևորին,
Բայց Թագաւորն սուր է հիմի,
Որ սե կապեմ նըրա օրին:

—Մեծ վըրանում քընած է նա,
Է՛ն, որ միջից ծուխը կելնի.
Էն ծուխն էլ հօ ծուխ չի, որ կայ,
Գուրըշին է իբ բերանի:

Ասին, դէպի մեծ վըրանը
Ասպանդակեց Գաւթին իբ ձին,
Քըշեց, գընաց ու զըռանը
Գուաց կանգնած արարներին.

—Ո՞ւր է, ասաւ, ի՞նչ է կորել,
Դուրս կանչեցէք, գայ ասպարէզ,
Թէ մահ չունի՞ մահ եմ բերել,
Գլընոյ չունի՞ գլընոյն եմ ես...

—Մեղիքն, ասին, քուն է մըտել,
Օխտը օրով պէտք է քընի.
Երեք օրն է դեռ անցկացել,
Չորս օր էլ կայ, քունը առնի:

—Ի՞նչ, բերել է աղքատ ու խեղճ
Խալխին լըցրել ծովն արիւնի,
Ինքը մըտել վըրանի մէջ
Օխտը օրով հանգիստ քընի՞ր...

Քընիւ-մընիւ չեմ հասկանում.
Վեր կացրէք շո՛ւա, դուրս գայ մէյդան.
Էնպէս գըրան ես քընացնեմ,
Որ չը դարթնի էլ յաւիտեան:

Ելան՝ մարդիկ ճարահատած՝
Չամփուր գըրին թէժ կըրակին
Ու դարկեցին խոր մըրափած
Մըսրա-Մեղի բաց կըրընկին:

—Օ՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
էս անիծւած լըւի ձեռից,
Խոր մըրընչաց հըսկան հանգարտ
Ու չուռ եկաւ, քընեց նորից:

Ելան, բերին մեծ գութանի
Խոփը՝ գըրին թէժ կըրակին,
Ու կաս-կարմիր, կէժ կըրծալի
Չիկնած արւին մերկ թիկունքին:

—Օ՛ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ
էս անիրաւ մոծակներից.
Աչքը բացաւ հըսկան հանգարտ,
Ուզում էր ետ քընել նորից,

Տեսաւ Դաւթին: Գըլուխն ահեղ
Վեր բարձրացրեց մըրընչալով,
Փըչեց վըրէն, որ թըրցընի
էն աժղըհին մի փըչելով:

Տեսաւ, տեղից ժաժ չի գալի.
Զարմանքն ու ահ պատեց հոգին.
Արնոտ աչքերն ըսպառնալի
Յառեց խոժոռ Դաւթի աչքին:

Նայեց թէ չէ՞ դգաց՝ իր մէջ
Տասը գոմչի ուժ պակասեց:
Պառկած տեղից վրա նըստեց
Ու ժըպտալով հետը խօսեց:

—Բարձիվ, Դաւթ, յոգնած ես դեռ.
Ե՛կ, մի նըստի՛ր, խօսենք կարգին,

Յետոյ դարձեալ կըռիւ կանանք,
Եթէ կըռիւ կուզես կըրկին...

Իր վըրանում բըռնակալը
Քառասուն գազ խոր հոր էր փորել,
Յանցով փակել մութ բերանը,
Վըրէն փափուկ խալի փըռել:

Ում որ յաղթել չէր կարենում,
Չողոմելով կանչում էր նա,
Նըստեցնում էր իր վըրանում
էն կորըստեան հորի վըրա:

Իջաւ Դաւիթ ձիուցը ցած,
Գընաց, նըստեց... ընկաւ հորը:
—Հն, հն, հն, հն, քահ քահ խընդաց
Մըսրայ դաժան Թագաւորը:

—Դէ թող հիմի գընա՝ խաւար
չորում փըթի, էնքան մընայ:
Ու ահագին մի ջաղացքար
Բերաւ, գըրաւ հորի վըրա:

XX

Քընեց էն գիշեր Ձէնով Օհանը:
Գիշերն երազում երեաց ծերին՝
Մըսրայ երկընքում արե ճառագած,
Սե ամպ էր պատել Սասմայ սարերին:

Սաստիկ վախեցած վեր թըռաւ տեղից.
—Վնյ, կընիկ, ասաւ, մի ճըրագ արն,
Գընաց մեր անփորձ Դաւիթը ձեռից,
Սե ամպ էր իջել Սասունի վըրա:

—Հողեմ գըլուխդ, ասաւ կնիկը,
Ո՛վ դիտի՝ Դաւիթն սւր է քէֆ անում...
Դու էլ քեզ համար քու տանը քընած՝
Ուրիշի համար երազ ես տեսնում:

Քընեց Օհանը: Վեր կացաւ դարձեալ.
—Կընիկ, Դաւիթը նեղ տեղն է ընկած.
Մըսրայ փառ ասողը շողում էր պայծառ,
Մեր ասողը հլւանդ ցոլքում գալկացած:

—Ի՞նչ եղաւ քեզ, մնրդ, գիշերւան կիսին.
Բարկացաւ վըրէն կընիկն աղմուկով.
Խաչ քաշեց էլ ետ Օհանն երեսին,
Չուռ եկաւ՝ քընեց խըլոված հողով:

Մի ուրիշ պատկեր աւելի ահեղ.
Տեսաւ երկընքի բարձը կամարում
Վառում էր Մըսրայ ասողը փառահեղ,
Սասմայ ասողիկը սուղեց խաւարում:

Չարթնեց վախեցած:—Տունըդ քանդելի, կին,
Ես ս՛նց լըսեցի քու էզ կարճ խեղբին.
Կորաւ մեն մենակ մեր ջահիլն անաէր.
Վեր կաց, շնտ արա, գէնքերըս մի բեր...

XXI

Ելաւ Օհան, գոմը մըտաւ,
 Զարկեց ճերմակ ձիու մէջքին.
 —Է՛յ, ճերմակ ձի, մինչ կրբ, ասաւ,
 Կըհասցընես Դաւթի կըռւին:

—Մինչև լուսը կըհասցընեմ.
 Ու ձին տըլաւ փորը գետին.
 —Մէջքըդ կտարի—լուսն ինչ անեմ,
 Լաշին հասնեմ ես, թէ՛ նաշին:

Կարմիր ձիու մէջքին զարկեց.
 Սա էլ երես փորը գետին:
 —Ջան կարմիր ձի, մինչ կրբ դու ինձ
 Կըհասցընես Դաւթի կըռւին:

—Մի ժամի մէջ, կարմիրն ասաւ,
 Կըհասցընեմ Դաւթի կըռւին:
 —Լևդի դառնայ, սև մահ ու ցաւ,
 Ինչ տըլել եմ քեզ էն գարին:

Հերթը եկաւ, սեին հասաւ.
 Գետին չերես փորը սև ձին:
 —Է՛յ, ջան Սևուկ, մինչ կրբ, ասաւ,
 Կըհասցընես Դաւթի կըռւին:

—Եթէ ամուր մէջքիս մընաս,
 Ուրդ գընես ասպանդակին,
 Մինչև մէկէլ ոտըդ շուռ տաս՝
 Կըհասցընեմ, ասաւ սև ձին:

XXII

Սև ձին քաշեց ձէնով Օհան,
 Զախը գըրտաւ ասպանդակին,
 Աջն էլ մինչև շուռ տար վըրան՝
 Կանգնեց Սասմայ սարի գըլխին:

Տեսաւ՝ Դաւթի նըժոյզն անտէր
 Սարերն ընկած խըրխընջալով.
 Ներքի Մըսրայ գօրքը չորած,
 Ինչպէս անծայր ծըփուն մի ծով:

Օխտը գոմշի կաշի հագաւ,
 Որ չըպատուի իրեն զօռից,
 Կանգնեց Օհան՝ ամպի նըման
 Գոռաց Սասմայ սարի ծէրից:

—Դաւիթ, գոռաց, ս՛րտեղ ես դու.
 Յիշի՛ր խաշը պատարագի,
 Սուրբ Տիրամօր անունը տո՛ւր,
 Լս՛յսը գուրս ե՛կ արեգակի:

Ձէնը գընաց դըմրդըմրալով՝
Դաւթի ականջն ընկաւ հորում.
—Հայ-հայ, ասաւ, հօրեղբայրս է,
Սասմայ սարկոց ինձ է գոռում:

Ո՛վ, Մարութայ Ասուածածին,
Ո՛վ անմահ խաչ պատարագի,
Ձեզ եմ կանչել,—հասէք Դաւթին...
Կանչեց, տեղից կանգնեց սաքի,

էնպէս զարկեց ջաղացքարին,
Քարը եղաւ հազար կըտոր,
Կըտորները երկինք թըռան,
Ու գընում են մինչև էսօր:

Ելաւ հօրից, կանգնեց անեղ.
Սարսափ կալաւ դէ Մելիքին:
—Դաւիթ ախպէր, եկ դեռ էստեղ,
Սեղան նըստե՛նք, խօսենք կարգի՛ն...

—Էլ չեմ նըստիլ ես քու հացին,
Դու արմարդի, վախկոտ ու նենգ.
Չնւտ, դէնքըդ առ, հեծիր քու ձին,
Դուրս եկ մէյդան, կըռիւ անենք:

—Կըռիւ անենք, ասաւ Մելիք,
Իմն է միայն զարկն առաջին:

—Քոնն է, զարկիր, կանչեց Դաւիթ,
Դընաց, կեցաւ դաշտի միջին:

Ելաւ, կանգնեց Մըսրա-Մելիք,
Իր գուրգն առաւ, հեծաւ իր ձին,
Քըշեց, գընաց մինչ Դիաբոէքիւր
Ու էնտեղից եկաւ կըրկին:

Երեք հազար լիդը էր քաշում
Հըսկայական իր մըկունդը.
Եկաւ, զարկեց. կորաւ փոշում
Ու երեքաց երկրի գունդը:

Երկիր քանդուեց կամ ժաժք եղաւ,
Ասին մարդիկ շատ աշխարքում:
—Ձէ, ասացին, արնի ծարաւ
Հըսկանեքն են իրար զարկում:

—Մեռաւ Դաւիթ էս մի զարկից,
Ասա Մելիք իրեն զօրքին:
—Կենդանի եմ, ամալի տակից
Դոռաց Դաւիթ Մըսրա-Մելքին:

—Հայ-հայ, մօտիկ տեղից եկայ,
Տես, ս՛րտեղից հիմի կըզամ:
Ու վերկացաւ, կանգնեց հըսկան,
Իր ձին հեծաւ երկրորդ անգամ:

Երկրորդ անգամ քրչեց Հալաբ
Ու բայ թողեց ձին Հալաբից,
Բուք վերկացաւ. տեղ ու տարափ,
Արար աշխարհ դողաց թափից:

Եկաւ, դարկեց. դարկի ձէնից
Մօտիկ մարդիկ ողջ խըլացան:
—Գընաց Դաւիթ Սասմայ տանից,
Գուժեց գոռող Մըսրայ Արքան:

—Կենդանի՛ հմ, կանչեց Դաւիթ,
Մին էլ արի՛—հերթն ինձ հասաւ:
—Հնյ-հնյ, մօտիկ տեղից եկայ,
Կանչեց Մելիք ու վերկացաւ:

Երրորդ անգամ հեծաւ իր ձին,
Գընաց մինչև հողը Մըսրայ,
Ու էնտեղից, գուրզը ձեռին
Քրչեց, եկաւ Դաւիթի վըրա:

Եկաւ, դարկեց բոլոր ուժով,
Ծանըր դարկով հըսկայական.
Փռչին ելաւ Սասմայ դաշտից,
Բըռնեց երեսն արեգական:

Երեք գիշեր ու երեք օր
Փռչին կանգնեց ամպի նըման,

Երեք գիշեր ու երեք օր
Բօթը տըւին Դաւիթի մահաւան:

Երբ որ անցաւ երեք օրը,
էն ամպի պէս կանգնած փռչում
Կանգնեց Դաւիթ, ինչպէս սարը,
Դըրգուս սարը մէզ-մըշուշում:

—Մելիք, ասաւ, սմն է հերթը՝
Սարսափ կալաւ գոռ Մելիքին,
Մահաւան դողը ընկաւ սիրտը
Ու տապ արաւ գոռող հոգի՛ն:

Գընաց, խորունկ մի հոր փորեց,
Իջաւ, մըտաւ վիհն էն խաւար,
Վըրէն քաշեց քառսուն կաշի
Ու քառսուն ջաղացի քար:

Մըռընչալով ելաւ տեղից
էն առիւծի առիւծ որդին,
Իր ձին հեծաւ ու փոթորկեց,
Խաղաց, շողաց Թուր-Կայծակին:

Առաջ վազեց մաղերն արձակ
Մելքի պառաւ մայրը ջադու.
—Դաւիթ, մաղըս առ ոտիդ տակ,
էդ մի գարկը ինձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ թուրը քաշեց,
էս անգամ էլ եկաւ քուրը.
—Դաւիթ, եթէ կուզես, կանչեց,
Իմ սրբախն զանրկ երկրորդ թուրը...

Վերջին զարկի ժամը հասաւ,
Ելաւ Դաւիթ երրորդ անգամ.
—էս մի զարկն ու Ասաւած, ասաւ,
էլ մարդ չըզայ, պէտք է որ տամ:

Ասաւ, ելաւ ու փոթորկեց,
Թըռաւ, ցոլաց Դաւիթի հուր ձին,
Ձին փոթորկեց, փայլատակեց
Ու ցած իջաւ Թուր-Կայծակին:

Անցաւ քառսուն գոմշի կաշին,
Անցաւ քառսուն քարերը ցած,
Միջից կըտրեց ժանա հըրէշին,
Օխտը գազ էլ դէնը գընաց:

—Կենդանի՛ եմ, մին էլ արի՛,
Գոռաց Մելիք հորի տակից:
Դաւիթ լըսեց, շատ զարմացաւ
Իրեն զարկից, Թուր-Կայծակից...

—Մեղք, ասաւ, թնփ տուր մի քեզ:
Ու թափ արւաւ Մելիքն իրեն,

Միջից եղաւ ճիշտ երկու կէս,
Մէկն ընկաւ դէմն ու միւսը դէն:

էս որ տեսաւ Մըսրայ բանակ,
Ջուր կըտըրուեց ահ ու վախից:
Դաւիթ կանչեց.—Մի վախենար,
Ականջ արէք հալա դեռ ինձ:

Գուր ըռանչար մարդիկ, ասաւ,
Ջուրկ ու խաւար, քաղցած ու մերկ,
Հազար ու մի կըրակ ու ցաւ,
Հազար ու մի հոգսեր ունէք:

Ինչ էք առել նեա ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր.
Չէ որ մենք էլ ունինք տուն-տեղ,
Մենք էլ ունինք մանուկ ու ծեր...

Ձանձրացել էք խաղաղ ու հաշտ
Հողագործի օր ու կեանքից,
Թէ՛ զըզւել էք ձեր հանդ ու դաշտ,
Ձեր հունձ ու փունջ, վար ու ցանքից...

Դարձէք եկած ճանապարհով
Ձեր հայրենի հողը Մըսրայ.
Բայց թէ մին էլ գէնք ու դռով
Վեր էք կացել դուք մեզ վըրայ:

Հորում լինին քառսուն դադ խոր,
Թէ ջաղացի քարի տակին,
Կելնեն ձեր դէմ, ինչպէս այսօր,
Սասմայ Դաւիթ, Թուր-Կայծակին:

Էն ժամանակ, Աստած գիտի,
Ով մեզանից կըլնի փռշման.
Մենք, որ կելնենք ահեղ մարտի,
Թէ դուք, որ մեզ արիք դուշման...

1902.

ՊՕԷՏՆ ՌԻ ՄՈՒՍԱՆ.

ՊՕԷՏՆ ՈՒ ՄՈՒՍԱՆ

Նըստած եմ մի օր ու միտք եմ անում.
Միտք եմ անում, մի՛տք, ու չեմ կարենում
Մի հընար գըտնեմ՝ ցաւերըս հոգամ...
Վեր կենամ, ասի, մէկի մօտ գընամ,
Կըրկին պարտք անեմ, գլուխը քարը,
Մինչև որ տեսնենք ինչ կըլնի ճարը.
—Ողջո՛յն Պառնասի գըլխից սըրբազան...
Ետ նայեմ՝ տեսնեմ՝ իմ ծանօթ Մուսան:
—Վեր կաց, բանաստեղծ, կանչում է այսպէս,
Վեր կաց, ներշնչելիք, դուրս արի հանդէս.
Տանջում են ասա կըբարբըզ թըշառ,
Հեծում, հալածում աշխարհից աշխարհ:
Երկինք են հասել արցունք ու արիւն...
Ահա՛ քեզ համար բերել եմ աւին,
Յոյս տուր վըհատին, ըսփոփիլ սըբին,
Ոյժ տուր պանդուխտին իր երկար ճամբին:
Նայիր՝ աղջիկը ի՛նչպէս ծագել է.
Աչքերի մըթնից պայծառ ծագել է
Կեանքի արեք ու սիրտ է յուզում,
Անձնըէր սիրոյ երգեր է ուզում...
Ուրախ ու անհոգ գարունն էլ ասա
Բաղմել է կանաչ սարերի վըրա,

Ձորերը լըցւել, փըռւել հովիտում.
Հաւքերն երգում են, ծաղկունքը փըթթում...

Գու էլ ըսթավւիլը, երգիր քեզ նըման,
Ողջունիր շըքեղ գալուստը գարնան:

— Հերիք էր, Մուսն, երկինքը վըրկայ,
էլ համբերելու սիրտ ու տեղ շըրկայ,
Այնպէս կանեմ քեզ, որ դու մոռանաս
Արին ու գարուն, սլօէտ ու Պառնաս:
Անլիծւած լինին այն օրն ու տարին,
Երբ գերի դառայ ես քու քընարին.
Քեզ հետ մըտերիմ դառնալու օրից
Ջըրկւած մընացի կեանքում բոլորից...

— Այն տաղանդը, այն ձիւրքն հապա,
Որ տըւել եմ...

— Այ խարերայ,

Ահա ես էլ այդ եմ լալիս.
Ինչո՞ւ այս ձիւրքն էիր տալիս:
Ձըգիտէլիր միթէ այնժամ,
Թէ ինչ աշխարք պիտի ես գամ:
Թող լինէի մի կեղեքող,
Հաւաքէի միշտ փող ու փող.
Առաջ թէն «գաղան» ու «ցեց»,
Կըղառնայի շուտով ես մեծ,
Վեհ բարերար
Ազգի համար,
Մեռած օրս էլ պըսակ տային.
— «Իր որբ աղգից—միակ հային»:

Կամ թէ տէրտէր լինէի թող,
Խաշը վըզիս մեռել թաղող,
Սուփրի վերն միշտ նըստէի,
Իմ ապըուստը դըրըստէի,
Ազգն էլ աշքը տընկէր վըրաս.

— Իմ փըրկողը դու ես, որ կաս:

Ահա այսպէս բան լինէր մարդ,
Գընար ապրէր լի ու հանդարտ,
Կամ սընգուրւած մի ճոխ յիմար,
Որ ապըում է լոկ իր համար,
Ուտում-քընում, ելնում-ուտում.
Լի՛, գո՛հ, ինչպէս աղբակոյտում
Հանգիստ ապրող որդը պարարտ:
Կըլինէի յարգի մի մարդ,
Նոյն իսկ եթէ գըլուխս այնժամ
Գատարկ լինէր հաղար անգամ
Քան թէ հիմա իմ գըրպանը:
Ահա կեանքում այս է բանը.
Թէ չէ՛ լինել ի ծնէ գերի
Մերկ մուսայի ու երգերի,
Որդիք ու կին
Թողած բախտին,
Մերձաւորի ծաղըր ու ծանակ,
Ուժից ընկնել անժամանակ—
Թէ պօէտ եմ... օ՛, ս՛, Մուսն.
Մի անարդար պատիժ է սա:
Եւ ինձ մօտիկ

Փորձեա՛ծ մարդիկ
Դեռ շատ վաղուց նըկատեցին,
Կըռիւ արին, խըրատեցին,
Թէ աշխարքին մըտիկ արա.
Չատն էլ խնդաց խելքիս վըրա...
Իսկ ես, ա՛խ, ես,
Միշտ խենթ այսպէս,
Գիշեր-ցերեկ թերթում գըրքեր,
Չինում էի դատարկ երգեր,
Միշտ քու քամով էի թըռչում
Ու միշտ բախտից հեռու վախշում.
—Այ, ապերանխտ, ի՛նչ ես ասում.
Այն ս՛ր բախտն ես դու ափսոսում,
Որ չեմ տըւել քեզ իմ ձեռքով.—
Ասուածային հըզօր ձիւքով
Այս ցած կեանքից հեշտ ու անթի
Թըռչել երկինք, վերե՛ւ, վերե՛ւ,
Ցաւեր, հոգսեր ողջ մոռանալ,
Դըժոխք իջնել, դըրախտ գընալ,
Անհուն ըզգալ, թովիչ երգել...
Ո՞ր բախտից եմ ես քեզ գըրկել:
—Օ՛, ս՛ր բախտից.. ա՛յ, սեւերեւ,
Ահա շարեմ, յիշի՛ր ու անս:
Ինձ մի անգամ առան տարան
հաշտպահի ուսումնարան,
Չատ խօսեցին,
Համոզեցին,

Թէ կաւարտես այս դպրոցում,
Ատտեստատը յետոյ ծոցում,
Ուր որ գընաս,
Տեղ կունենաս,
Լա՛ւ փողով տեղ բուղբալտէրի.
Խաղէինդ էլ տարէցտարի
Միշտ կաւելցնի քու ոտձիկը,
Վերջը վըրան ե... աղջիկը:
Բայց դու եկար միտքըս մըտար,
Ինձ չըթողիր տեղըս դադար,
Դաւթարն աչքիս դարձաւ դաժան,
Թիւ, կոտորակ, թըւանըչան
Ուղեղիս մէջ դարձան սրղեր,
Քիչ էր մընում սիրտըս պայթ էր.
Եւ ես խրտնած, խենթ երեխայ՝
Փող ու աղջիկ թողի, փախայ,
Թէ չեմ կարող, ես չեմ կարող,
Ես գըրող եմ, գըրո՞ղ, գըրո՞ղ:
Սակայն էլի բախտըս ժըպտաց.
Ձեռըս բըռնեց տարաւ յանկարծ
Ու պիսերի տըւաւ պաշտօն:
Ոչ լի օր կար ինձ և ոչ տօն:
Մեծաւորըս այնքան սիրեց,
Հին գըրչակոթն ինձ նըւիրեց,
Ընկերներս էլ ինձ դաս տըւին—
Ոնց պըլոկել խընդըատըւին:
Բայց դու էլի եկար գըտար,

Խաղաղ գործիս մէջը մըտար,
Ես էլ՝ յիմարս՝ խփոյնեթ
Վէճ բաց արի ամենքի հետ,
Թէ ի՞նչ բան է՝ խեղճ զիւղացուն
Գերի շինել՝ ողջ տարին բուն
Տանել, բերել ու թալանել,
Այրու պղինձն աճուրդ անել...
Այս բոլորը քիչ էր կարծես,
Այնքան արիւր, սատանի պէս,
Որ գըրեցի մեծիս պարսաւ.
Նա էլ—կորի, կորի, ասաւ,
Մենք ենք տալի քեզ փող ու վարձ,
Դու՝ Մուսայի խելքով ընկած՝
Վեր ես կենում մեր դէմ խօսում.
Այդպէս պիտեր մենք շենք ուղում:
Սակայն Աստած մեծ է գութով.
Յայտնի կանտօր ընկայ շուտով:
Լաւ էր, ասի, այսուհետեւ
Կապրեմ ազատ, գործըս թեթեւ:
Հետըս եկար, մըտար կանտօր,
Գործերս արիւր խառնուփրնթոր,
Քու երեսից հէնց նոյն տարին
Իմ պաշտօնից ինձ գուրս արին:
Այսպէս եղայ ես խայտառակ,
Համ էլ ընկայ պարտքերի տակ.
(Նօ պօէտի պարտքն էլ գիտես.
Այդ լոկ պարտք չի ուրիշի պէս,

Այլ ազգային մի մեծ առակ,
Վէճ ու վրճիւ ծանր ու բարակ):
Ո՛ր մէկն ասեմ, որը թողնեմ.
Երբոր տեսան շընորհք չունեմ,
Այնուհետեւ քանի անգամ
Ծանօթ, ընկեր, լաւ բարեկամ՝
Տէրատէրութեան տըւին խորհուրդ.
—Այ քեզ մեծ ժամ, լաւ ժողովուրդ,
Փարթամ քելեխ, յարզ, մեծարանք,
Հարստութիւն, հանգիստ, հեշտ կեանք...
Իսկ ես՝ անփորձ, անխելք, յիմար,
Ողջ մերժեցի լոկ քեզ համար,
Պատրաստ կեանքից, բախտից փախած,
Գանձանակի թեփչին թողած,
Քընարն առայ,
Պօէտ դառայ,
Երգ ու տաղով մըտայ հանդէս.
—Հէյ, Մուսայի ընկերն եմ ես,
Ձայն տըւի ես ոգևորած:
—Հա՛, հա՛, հա՛, հա՛, բիրտ հըրհըռաց
Ժողովուրդը միաբերան,
Թըռցրել է խելքն այս խեղճ տըղան:
Հեռու կորի, խենթ պատանի,
Որ անպիտան գործի, բանի,
Ուշք ու միտքը տըւել երգին՝
Մի չես նայում էս աշխարքին...
Մենք մարդիկ ենք—գործ ենք անում,

Խենթ-մենթ բաներ չենք հասկանում:
Ես գոչեցի.—Խաւար ամբոխ,
Պաշտում ես դու լոկ փայլ ու փող,
Չես հասկանում դու պօէսին.
Ե՛ս, երկընքի քընքոյշ որդին,
Երգում եմ սէ՛ր, ճըշմարտութիւն...
Ու գընացի խըմբագրատուն:
—Տէր խըմբագիր, պօէս եմ նոր,
Բերել եմ ձեզ ոտանաւոր,
Ահա կարգամ ականջ դըրէք,
Ձեր հանդիսում տեղաւորէք.

«Սևորակ աչքեր, սևորակ աչքեր,
Հալածում էք ինձ դուք օր ու գիշեր,
Նայում էք անթարթ իմ հոգու խորքում...
Ինչո՞ւ չէք քընում, ինչո՞ւ չէք փակում.
Բանաստեղծն արդէն տանջանքից յոգնել՝
Ուզում է քընել, յաւիտեան քընել...
Դուք էլ քընեցէք, սևորակ աչքեր,
Ցերեկս անցել է, գիշեր է, գիշեր...»

—Ոչինչ, կոկիկ է: Խօսելով անկեղծ՝
Դուք վատ չէք գըրում, պարոն բանաստեղծ.
Ամեն մի տողում տասն են վանկերը.
Բայց ինձ աղքատ են թըլում յանգերը:
Հապա մի արւէք, ուղղեմ ես հիմա,
Տեսէք՝ թէ որքան սահուն դուրս կը գայ:

Ուզում եմ ես միշտ մեր պօէսներին,
Այսպէս եմ պօէս շինել բոլորին:

«Սևորակ աչքեր, սևորակ աչքեր,
Հալածում էք ինձ դուք ինչպէս քաջքեր...»

Ես խեղոյն ինչպէս հալածւած քաջքից՝
Փախայ խըմբագրից ու իրեն աչքից,
Երգերըս ուղիղ տարայ արպարան:
Դուրս եկաւ այսպէս մի նոր երգարան:
Այնժամ մըտրակող մի թունդ պուրլիցիստ,
Յայտնի քըննաղատ, բաղմագէտ ու խիստ,
Սաստիկ վըրդովւած, անաչառ հոգով
Ծաղրի առաւ ինձ իրեն «ակնարկով»:
—Ես դէմ եմ, ասաւ, բանաստեղծութեան,
Ջըղեցնում է ինձ այդ երգի մուսան:
Ոչ մըտքեր են պէտք, ոչ ձիրք և ոչ խելք,—
Բառեր ու յանգեր—և ահա քեզ երգ:
Հէնց նոր դուրս եկած այս խակ տըղան էլ
Գրլխից այս տեսակ բաներ է հանել:
Ուրի՛շ բան էին հին պօէսները...
Նըրանք էլ մեռան, տարան հետները
Տաղանդ ու երգեր... ամէ՛ն, ամեն բան
Մըտաւ նըրանց հետ խաւար գերեզման...
Դարձաւ անապատ... էլ ո՞վ է մընում...
Էլ ուրիշ պօէս մենք չենք ընդունում...
Որքան ծաղրում ենք, նըրանք չեն լըռում,
Ոչ էլ մեր ուզած բաներն են գըրում:

—Ո՛վ բըրէտների, կոյրերի խրկիր:
Գու մի հաւատար, իմ հէգ որդեգիր...
Ես այն հանգուցեալ լաւերից նոյնպէս
Լըսել եմ յաճախ գանգատներ պէս-պէս:
Սպանում են դեռ ծաղրով ու թոյնով,
Ապա պըճնըում նըրանց անունով,
Լափում են նըրանց վաստակը արդար,
Ու նորից... նոյն հին կըռիւր վատթար...
Երգում եմ ահա ճառագող օրով,
Վառ Աւրօրայի մաքուր շողերով,
Խօսում ես դու այն շքերի մասին,
Որ միշտ անտեղեակ առաջին լուսին,
Ձեռն հըրճում նըրա ծագման հանդիսով,
Միայն կէսօրին, ապուշ երեսով
Ելնում են մըռայլ, տեսնում քընէած՝
Գըլխների վերև արևը կանգնած,
Ու ծունկ են չորում,
Օրհներգ են երգում,
Հի՛ն օրհներգութիւն ու հի՛ն հըրէչներ...
Բայց միթէ նըրանք ապրում են անմեռ,
Եւ այդպէս անհաշտ այսօր էլ քեզ հետ...
—Ի՛նչ հըրէչ, Մուսա, ինչ կոյր ու բըրէտ,
Ի՞նչ բաներ ես դու քեզնից հընարում...
Ես այն եմ ասում, թէ մեր աշխարհում
Պօէտները ողջ տըխրել են, ցաւել,
Որ իրենց երգի քընար ես տըւել...
Ես էլ... ինչ ասեմ... մեղաւոր եմ ես,

Ծուլ ու անշընորհք, անպէտք, սևերես...
Մեր խեղճ տանըցիք ս՛րբան նախատում—
Բայց ես՝ միշտ յամառ, չէի հաւատում,
Մինչև լըսեցի մի մեծ պարոնի,
Մեր մէջ շատ խելօք ու շատ անւանի:
Մի օր ինձանից արաւ հարց ու փորձ.
—Ունի՞ս, հարցըրեց, մի պաշտօն կամ գործ:
—Բանաստեղծ եմ ես, ասացի հըպարտ:
—Գըժւար է, ասաւ, երբ անգործ է մարդ:
—Բանաստեղծ եմ ես, կըրկնեցի մէկ էլ:
—Հասկացանք, ասաւ, պարտալ ես եղել...
Եւ խեղճ ընկերըս երբոր՝ սըրտացաւ՝
Սա էլ պէտքական մի մարդ է, ասաւ,
Այնպէս ծիծաղեց մեր աղան փառփառ,
Որ և հասարակ և մեծ վեհափառ,
Ով որ իմացաւ,
Ծիծաղը պըրժաւ:
Բայց վերջն աւելի պարզեց խընդիրը,
Երբ յօգւած գըրեց մեր լըրագիրը:
Բանաստեղծն, ասաւ, թող մի գործ չինի,
Որ հացի վարձի դառնայ արժանի.
Թէ չէ յամառի ու մընայ պօէտ՝
Ի՞նչ հաշիւ ունի ազգը նըրա հետ.
Ազգը հօ նըրան չի խընդըում գըրի,
Թերթն էլ փող չունի՝ թէ որ վըճարի...
Թող գընայ ապրի իրեն գըրիչով...
Այսպէս ենք դատում մեր մաքուր խըղճով:

Ներշնչման համար
Այսպէս է յարմար.—
Ով սովից մեռել՝
Նա է լաւ գըրել:
Կարող ենք մենք էլ
Այսպէս մըտրակել
Ու ծաղրել մի-մի,
Որ առաջ գիմի...»

—Ո՛վ ախոս-երկիր, մըտրակի մարդիկ...
Դէ եկ, սիրելիս, տանեմ քեզ երկինք,
Այնտեղ երջանիկ ոգիների հետ
Զըւարթ կը խընդաս ու կերպես յաւէտ.
Կամ կուզես թրուցնեմ, հանեմ Ոլիմպոս,
Որ նեկտար քմպես, ճաշակես ամբոս:
—Իմ ազնիւ Մուսա,
Ա՛յ էդպէս խօսա:

Իրաւ, այս կեանքից ես շատ եմ դըզել:
Ի՞նչ երանութիւն՝ երկընքում սուզել,
Այն շըքնաղներին, որոնք, անկասկած,
Նըման շեն իսկի մեր հայոց կանանց—
Լինել միշտ ընկեր
Ու սիրոյ երգեր
Յօրինել,
Զօնել,

Երկրային շընչին հոգսերը թողած,
Կամ, ոտներն հանդիստ ժայռերից կախած,
Նըստել Պառնասի երջանիկ գըլխին

Ու բարձրից նայել այս յիմար խալխին:
Բայց ես ունիմ կին, շատ երեսաներ,
Նըրանց բանն այնտեղ ինչպէս կը լինէր...
—Օ՛հ, երբ Պառնասի գագաթ վերանաս,
Զաւակներ ու կին պիտի մոռանաս:
—Ո՛վ դու անիրաւ, ի՞նչ եմ արել քեզ,
Որ ինձ իմ տանից այդպէս բաժանես:
Զէ, լաւ է կըրկին, որ երկրում մընամ,
Ծաղրի, նեղութեան մի կերպ դիմանամ...
—Քու կամքը լինի, ազատ բանաստեղծ.
Ընտրիր ուր կուզես՝ երկինք թէ երկիր,
Բայց միշտ, ամեն տեղ եղիր դու անկեղծ,
Մաքուր, սըրտալի քու երգը երգիր:

Կանգնիր միշտ վերև,
Ու՛ ինչպէս արև՝
Նայիր լուսաւոր,
Պայծաւ ու հըզօր.
Քու կոչումն է դա.
Եւ, ինձ հաւատա,

Բոլոր գանձերը, գոհարներն անգին
Զարժեն կարճատե քու ներշնչանքին:
—Ա՛յ, դու սատանայ, էլ կուզես խարել,
Մեծ-մեծ խօսքերով աչքերըս կապել.
Ա՛յ, դու կեղծաւոր, սիրուն անպիտան.
Ես լաւ եմ տեսնում այժըմ ամեն բան:
Դու ինձ ես մենակ միամիտ գըտել.
Հապա դէ խօսիր ուրիշի մօտ էլ,

Այ, թէկուզ մեզ մօտ, հէնց իմ կընկանը—
Ասա՛ թէ մենակ փողը չի բանը...
Բայց ի՛նչ եմ ասում, չայոց գըրողը
Վաղուց է արդէն ճանաչել փողը.
Եւ երկար, երկար մեր ողջ հանճարով
Մըտածել ենք մենք զըժար օրերով,
Գըրողի պըսակ,
Թէ փողի քըսակ...
Եւ լաւ ենք վըճուել...
Դէհ, գընա՛, Մուսա՛.

Գըրագարանըս շինում եմ կասսա,
Թըրում եմ և քեզ և քու պըսակին,
Երկըրպագում եմ փողի քըսակին:
«Փողի քըսակը, փողի քըսակը,
Բարձրացընում է մարդու հասակը,
Գեղեցկացնում է հըրէշ տըգեղին,
Սըրբագործում է գարշն ու աղտեղին.
Նըրա ոյժն է՝ որ դարձընում է լոկ
Անասուններին յարդի ու խելօք,
Կոյսին, զառամին մօտեցնում իրար,
Չարին, վաշխաուլին շինում բարերար,
Գըճնում ճակատը լիրբ աւազակի,
Կանգնեցնում արձան անվախճան փառքի:
Նա է միշտ շարժում դատողի լեղուն,
Նա է հասցընում աղօթքն Աստըծուն,
Նըրա վըրա է՝ աշխարքը կանգնած,
Նա մեր հոգին է, մեր երկրորդ Աստուած:

Գօէտն էլ բընաւ թէ խօսել է վատ,
Տուժել է սաստիկ, զըղջացել է շատ,
Եւ այժըմ ահա խելքի է եկել,
Սկսել է նըրան օրհնութիւն երգել:»
Երգըս որ լըսեց իմ գըժբախտ Մուսան,
Իսկոյն հաւաքեց իր փասա-փուսան.
—Դէհ, մընաս բարեաւ,
Անսիրտ, անիրաւ,
Ես այսքան տարի
Ինչոր քեզ արի,
Բոլորն ուրացար,
Փողապաշտ դարձար...

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ Ի Բ Գ Ո Ւ Ս Ի

Կուղէի հալւել, ձուլւել իմ երգին
Ու այս տողերում թաղնը եւ ծածուկ,
Որ երբ կարգայիր մի օր, իմ անգին,
Կարող լինէի անտես, կամացուկ,
Ամեն հընչիւնի, ամեն խօսքի մէջ
Դիպչել շուրթերիդ, համբուրել անվերջ...

Ա Ն Չ Ո Ւ Կ

Ջիզեր

Ա՛խ, վայրենի, սառն ու խաւար
Այս հովիտի խորքերից
Թէ գրանէ՛ի մի ճանապարհ
Ու ապրէ՛ր ես նորից...

Ահա հեռուս ճոխ բլուրներ
Մըշտագարուն, ծաղկազարդ:
Ինչո՞ւ, ինչո՞ւ չունիմ թևեր
Այնտեղ թըռչեմ ես ազատ:

Քընարն այնտեղ ուրախ հընչում,
Խօսում է ձայնն երկընքի,
Ջեփիւռները մեղմով շընչում,
Բոյր են խընկում գարունքի:

Պերճ սաղարթում շողշողում են
Պրատուղները ոսկեվառ,
Չըկան այնտեղ բուք ու ձըմեռ,
Ու ծաղկուները միշտ դալար:

Ա՛խ, ի՛նչ լաւ է՝ այն անխըռով
Ջինջ օրերի լուսի մէջ,
Այն անթառամ ծաղկանց բոյրով .
Հարբել անվե՛րջ ու անվե՛րջ...

ՆԻՒՆԳ ԵՄ, ՄԱՅՐԻՎ

Հիւանդից

Հիւանդ եմ, մայրիկ, նանիկ ասա ինձ,
Որ ասում էիր երբեմն օրրանում,
Իմ մաշած կրթքին խաչ քաշիր նորից
Ու նանիկ ասա, քունըս շի ամնում:

Թող վայր զընեմ ես գըլուխս յոգնած.
Գիշեր է արդէն, ծաղիկը հանդում,
Վաղուց է անտուն պանդուխտն էլ քընած,
Միայն քու հիւանդ զաւակն է ամնում:

Քու հէգ թըռչնակը վախցած է բուրից...
Ա՛խ, ես դեռ մանկուց շատ ցաւեր տեսայ,
Քունն էլ, հանգիտան էլ վախան իմ աչքից...
Մայրիկ ջան, մայրիկ, ինձ նանիկ ասա...

Մ Ա Ն Ո Ր Կ Ն Ե Ր Ի Ն

(Լօնգֆելդից)

Եկէք, սիրուն իմ մանուկներ,
Վաղէք, եկէք շուտ ինձ մօտ,
Վիշտ ու կասկած դուրս վանեցէք
Իմ ծեր լանջից հիւանդոտ:

Ձեր սըրտերում-չող ու թըռչուն,
Ձեր մըտքերում-վըտակներ,
Ինձ տիրում է արդէն աշուն,
Չուտով կըգայ և ձըմեռ:

Տաղ կանչեցէք, սիրունիկներս,
էն տաղերը խընդագին,
Որ թըռչուններն հրգում են ձեզ
Գարնան պայծառ օրերին:

Ոչինչ բան է խելքը մարդի,
Եւ դատարկ է և շընչին
Ձեր մանկական անմեղ շուրթի
Ժըպիտների առաջին:

Ձեզանից լաւ՝ երգ շի տեսել
Գարնան օրը ոսկեփայլ,
Դուք էք երգն էլ, խաղն էլ, լոյսն էլ,
Ու աւանց ձեզ — ողջ մըռայլ:

Պ Ո Ւ Յ Կ Ի Ն Ի Յ

Եթէ իրաւ է, որ գիշերները,
Երբօր հանգչում են՝ մարդիկ ներքիում,
Երկընթից իջնում լուսնի շողերը,
Գերեզմանների վըրա զողգողում:

Եթէ իրաւ է, որ այն ժամերին
Դատարկում են լուռ գերեզմանները,
Յ՛, ես կըկանչեմ իմ սիրելիին,
Գըկանչեմ նըրա նըսեմ ըսուերը:

—Արի, յայանըլիք, սիրելի՛ պատիկեր,
Ինչպէս և էիր անջատման ժամին,
Սառն ու դալկագէմ, ինչպէս ձմրան օր,
Խանդարած, խեղած ատնջանքով վերջին:

—Ա՛խ, արի՛, ինչպէս ասողիկ հեռուօր,
Ինչպէս թոյլ հընչիւն թեթեւ գեփիւռի,
Կամ թէկուզ ինչպէս տեսիլ ահաւօր,
Ինձ համար մին է... արի՛, միայն արի՛...

Լուս ու ծրխոտ խըրճիթում:
Ողջ քընած են: Անքուն պառկած
Միտք է անում գիւղացին...
Բուքն ունում է... մին էլ յանկարծ
Լուսամուտը բախեցին...

—Ո՞վ ես:—Ներս թճղ, այ տանտէր, ներս...
—Ա՛յ ներս ու քեզ շօռ ու ցաւ.
Ի՞նչ ես շըրջում Կայէնի պէս,
Ո՞ր սատանէն քեզ բերաւ:
Ի՞նչ անեմ քեզ, ասա, հիմի.
Տեղըս նեղ է, տունը մութ,
Ու ծոյլ ձեռքով, տըրտընջալով՝
Բաց է անում լուսամուտ:

Ցոլում է լոյսն ամալի տակից.
Ահա կանգնած... մի մերկ մարդ.
Ջուր է հոսում նըրա միւրքից,
Բաց են աչքերն ու անթարթ:
Կախ են ընկած բազուկները,
Ողջ կարկամած սոսկալի,
Ուռած մարմնին քառչանգները
Կըպած՝ սեին են տալի...

Ահից մարեց՝ ճանաչելով
Իր մերկ հիւրին նա յանկարծ.
Փեղկը դարկեց: Նա դողալով
—Ա՛յ դու ճաքես, քըրթ մընջաց:

Ամբոխեցին մըտքերը մութ.
Մինչև լոյսը նա դողում,
Մինչև լոյսը լուսամուտ
Բախում էին ու բախում...

Ամբոխն ահեղ զըրոյց ունի,
Թէ այս դէպքից գիւղացին
Ըսպատում է ամեն տարի
Միշտ նոյն օրը խեղդածին:
Խառնում է օրն առաւօտից,
Գիշեր գալի բուք ու մութ,
Ու խեղդածը ամբողջ գիշեր
Բախում դուռն ու լուսամուտ:

Օ Լ Է Գ Ի Ե Ր Գ Ը

Պոռչկիեից

Ենում է ահա հըզօր Օլէզը
Խենթ խաղարներից վըրէժ առնելու,
Նըրանց համարձակ յարձակման համար
Գիւղերը սըրի-հըրի մատնելու:
Եւ իր համհարգով, հաղած կուռ զրահ,
Գընում է նա սէգ նըժոյգի վըրա:

Մըթին անառից նրա յանդիման
Գալիս է ահա վըհուկ ծերունին,
Մութ գալիքների մեկնիչն ու հըման,
Կեանքում հնազանդ միայն Պերունին,
Աղօթք ու հմայքով ողջ դար անցկացըած:
Եւ Օլէզ ծերին ընդառաջ գընաց:

—Ասանձ, գուշակ, ծերդ անմահների,
Կեանքիս մէջ ինձ հետ ի՞նչ է լինելու,
Եւ, ի խընդութիւն չար ոսոխների,
Չուտով եմ արդեօք շիրիմ իջնելու:
Բաց մեկնիր բոլորն, ինձնից չըքաշուես,
Վարձըդ քու սիրած ձին կըտամ ես քեզ:

—Ձեն վախում գէտերն երկրի մեծերից,
Եւ պէտք չի նըրանց պարզեն իշխանի,
Նըրանց իմաստուն լեզուն՝ վերեից
Աղղւած՝ խօսում է կամքը երկընքի.—
Անյայտ են գալոց տարիքն ու մըթին,
Բայց կարդում եմ գիրդ ես քու ճակատին:

Դէ միտքըդ պահիր իմ խօսքն այսօրից:
Փառքն է կեանքի մէջ խընդում հերոսին.
Յաղթութեան վառքով հըռչակւած ես դու,
Վահանդ Բիւզանդիոյ բարձըր դարպասին:
Հընազանդ են քեզ և՛ ցամաք, և՛ ծով,
Նայում է ոսոխըդ բախտիդ նախանձով:

Եւ կապոյտ ծովի յեղյեղուկ ալիք,
Ահեղ փոթորկի ժամին կատաղի,
Եւ նետ, և՛ պարսէտ, և՛ նենգող դաշոյն,
Խընայում են միշտ կեանքը յաղթողի:
Վէրք չես առնիլ դու քո կուռ գըրահում.
Հըզօրին անտես ոգի է պահում:

Ոչ մի վըտանգից չի վախում քու ձին,
Տիրոջ կամքը միշտ հասկանում է դա.
Մերթ կանգնում է հեզ նետերի տակին,
Մերթ թըռչում ռադմի դաշտերի վըրա.
Եւ ցուրտ, և՛ կըռիւ ոչինչ են դըրան,
Բայց... դա կըլինի պատճառ քու մահան:

Օլէզը խնդաց. և սակայն մըթնեց,
Մըռայեց յանկարծ չարագոյժ մըտքից.
Լուռ ու մըտախոհ թամբիցը բըռնեց,
Ներքև է իջնում սիրած նըժոյզից,
Ու վերջին անգամ իր հին ընկերին
Փայփայում, շոյում, փարում է վըզին:

— Դէհ, մընաս բարեաւ, վաղեմի ընկեր.
Ժամանակն եկաւ մեր բաժանելու.
Հանգիստ կաց հիմա, էլ ոտքս բընաւ
Քու ասպանդակի մէջ չեմ դընելու:
Դէհ, գընա՛, բայց միշտ յիշիր Օլէզին:
Է՛յ, մանկլաւիկներ, հեռու տարէք ձին:

— Ծածկեցէք սըրան թաւարծի գորգով,
Սանձիցը բըռնած մարգերըս տարէք,
Լողացրէք, պահէք ընտրած հատիկով,
Աղբիւրի վըճիտ ջըրով ջըրեցէք:
Եւ մանկլաւիկներն իսկոյն ձին տարան,
Մի ուրիշ նոր ձի մօտ բերին նըրան:

Յընծում է խմբով անմահ Օլէզը
Զըւարթ ձայներով լիք բաժակների.
ձերմակ է նըրանց գըլտի ալիքը,
Ինչպէս վաղորդեան ձիւնը լեռների...
Յիշում են նըրանք օրերն անցկացրած,
Եւ կըռիւնները միասին վարած:

— Բայց իմ ընկերը, գոչեց Օլէզը.
Ո՛ւր է, ինձ ասէք, սիգապանծ իմ ձին.
Առնող է արգեօք, այնպէս սըընթաց,
Այնպէս կըրակոտ, աշխոյժ տակաւին...
Եւ լըսում է, որ սեպ բըլըրի վըրա
Մահու սև քընով վազ է քնել նա:

Խոնարհեց գըլուխն Օլէզը հըզօր,
Եւ միտք է անում.— Ի՞նչ եղաւ հըման.
Սըտախօս կախարդ, անխելք ալեոր,
Թէ չէի լըսել ես քու սըտութեան,
Կարէի մինչ օրս իմ ձին ես հեծնել:
Եւ ձիու ոսկերքն ուզում է տեսնել:

Գընում է Օլէզն անա պալատից,
Նըրա հետ Իգօրն և հիւրերը հին.
Տեսնում են ձիու ոսկերքը թափած
Բըլուրի վըրա, Գընէպրի ափին:
Փոշին ծածկում է, անձրեն ողորում,
Ու սէզը վըրէն քամին օրօրում:

Ոտն գգոյշ գըրաւ իշխանը գանգին
Ու կանչեց.— Քընի՛ր, միայնակ ընկեր,
Քեզինից շատ ապրեց քու տէրն ալեոր.
Թարմ շիրմիս վըրա գու շեւ մահաբեր
Տապալրի տակին սէզը ներկելու,
Քու տաք արիւնով աճիւնս յարգելու...

—Ահա թէ ուր էր օրհասըս պահւած.
Այո չոր ոսկորն էր ինձ մահ սպառնում:
Այն ինչ՝ անկենդան գանգիցը յանկարծ
Փրշշալով սողաց մի օձ չարաթոյն,
Սև թօկի նրման փաթաթւեց ոտքին,
Իշխանն օձահար գոռաց ցաւագին:

Փըրփրուն թասերը շըրջան են առնում
Օլէգի մահւան տըխուր յարգինքին,
Իգօրն ու Օլգան բըլուրի վըրա,
Նըստած է խումբը Դընէպրի ափին—
Յիշում են քաջերն օրերն անցկացրած
Եւ կըռիւները միասին վարած:

ԳԵՂՋՈՒԿԻ ՄՏՈՐՄՈՒՆՔԸ

(Գօլ'ցով)

Նըստել եմ շըւար
Ու միտք եմ անում,
Թէ ինչպէս մենակ
Ապրեմ աշխարհում:
Ոչ ջահիլ կընիկ
Ունիմ իմ կողքին,
Ոչ թե ու թիկունք
Մըտերիմ ընկեր,
Ոչ մի տաք անկիւն,
Ոչ արծաթ-ոսկի,
Ոչ սարքած գութան,
Ոչ նըթոյգ մի ձի...
Պակաս օրի հետ
Միմիայն մի գանձ—
Քարի նըման ուժ
Տըւաւ ինձ հէրըս.
Բայց, ախ, հէնց էն էլ
Օտար գըռներում
Կերան, մաշեցին
Գարդ ու ցաւերըս...

Նըստել եմ շըւար
Ու միտք եմ անում,
Թէ ինչպէս մենակ
Ապրեմ աշխարհում...

Ն Ա Գ Ս Օ Ն Ի Յ

Մեռաւ իմ մուգան... սակաւ ժամանակ
Նա լուսաւորեց օրերըս մենակ.

Ծագիւունքըս ընկան, հուրերըս հանգան,
Անթափանց գիշեր, ինչպէս գերեզման:

Յաւից, տանջանքից յովնած սըրտիս մէջ
Իզուր եմ զըւարթ ձայներ ես փընտրում.
Ճըմլած է, ոտքած իմ պըսակը պերճ,
Կըւում եմ աներգ ու աներգ տըրտմում:
Բայց իմ սենեկում—կար մի ժամանակ—
Որքան հըրաչքներ էին կատարում.

Ուզէի թէ չէ՝ դըմբէթն երկընթի
Բացում էր գըլխիս լոյսերի ծովում,
Ձըզում էր հեռու լըճակն արծաթի,
Փայլում էր շըքեղ պալատ սիւնադարգ,
Ու վեր բարձրանում ծոցում կապոյտի
Սուր ժանիքներով լեռներ ձիւնապատ...

Այժըմ—մենակ եմ: Դատարկ ու մութը,
Տըխուր անկիւնըս աչքիս է նայում.

Բըքոտ գիշերը՝ իմ լուսամուտը,
Ինչպէս սե թըռչուն, երկիւղով բախում:
Պերճ պալատներըս ցընդեցան օդում,
Վհապանծ լեռներն աճիւն կըտընցին,

Չիշտ ու վէրքեր են սիրտըս կեղեքում,
Ու թոյլ արցունքներ աչքերիս միջին...
Մեռաւ իմ մուգան... սակաւ ժամանակ
նա լուսաւորեց օրերըս մենակ.
Ծաղկունքըս ընկան, հուրերըս հանգան,
Խաւարչտի՛ն գիշեր—ինչպէս գերեզման...



ԳԵՏԻՄ ԼՅՐԵՐԻՈՍ *)

Եւ խայտաճամուկ միմոսի շորով՝
Կեսարի կանչին՝
Լաբերիոսն ահա կանգնեց կըրկէսում,
Հռոմի առաջին:
Թընդաց Հըռոմը, և աթոռներից
Վեր կացան յանկարծ
Ազնւականներն ու ժողովուրդը
ահից սարսափած.
Ու դըղըրգացին արձակ կըրկէսում
շըփոթ ու շըշունջ,
Հազիւ լըսելի խառնակ աղաղակ
ու դըժգոհ տըրտունջ.
«Լաբերիոսն այստեղ... և ինչպէս միմոս...»
Այստեղ օրէնքով
Գերիններն իրենց կուռ շըղթաների
շըռընչիւններով,
Սըրի շաչիւնով անմահ Հըռոմի
հըրճւանքի համար
ձըգնում են ըմբշի և կամ միմոսի
պըսակ ստանալ...

*) Անցքը պատահել է Յուլիոս Կեսարի օրով:

Նոր նըշան տըւաւ: Եւ ահա երկչոտ
ու անհամարձակ
Բարձրացաւ ձայնը... Ժերի դողդոջուն,
չոր մատների տակ
Գոված քընարի ոսկի լարերը
հընչեցին յանկարծ.
Խորին լըռութեան ժամին առաջին
երգը որոտաց:
Եւ սթափեցաւ չռոմը նորից.
մարդիկ շարժեցին
Եւ աշխատում են պարզորոշ լըսել
զայրացած երգչին:
Իսկ ալևորը—անխեղճ անսպառած
հին քաղաքացին
Տակաւին հըպարտ, արհամարհանքով
նայում է չռոմին,
Նա երգում է անբաւ փառքը,
մեծութիւնը Կեսարի,
Բարձր խելքն ու տէրութիւնը,
իշխանութիւնը բարի.
Երգում է փայլը նրա յաղթութեան
և մաղթում է կեանք,
Եւ ուղարկում է հըղօր Կեսարին
յարգ ու մեծարանք.
Փառաբանում է նա ճոխութիւնը
ու փառքը չռոմի,

Եւ աղաչում է, որ բաժին անեն...
խինդը միմոսի...
Թախանձում է նա, որ ողջ մըտածեն
ինչպէս որ ինքը,
Կեսարի շըրթան վըրա ճանաչեն
իրենց օրէնքը,
Որ հին օրերի ազատ երգերը
ընդմիշտ լըռէին,
Ու միշտ Կեսարի թըշնամու ջանքերն
իզուր ցըրէին.
Հայրերի գոռոզ չըռոմը գըլուխ
խոնարհի նըրան,
չըռոմում մարդիկ մըտածեն այնպէս...
միմոսի նըման...
Յանկարծ վիրաւոր պօէտը ցընցեց
գըլուխն ալեղարդ,
չընչող լարերին կատաղի ձեռքով
զարկեց յուսահատ,
Քնարը ձըգեց սւ գոռաց ցասկոտ
ձայնով ահարկու.
—Բարձրացի՛ր, չըռոմ, իրաւունքներըդ
կորցընում ես դու...

Ա Ք Ի Լ Լ Է Ս

Միգում կորաւ Իդա սարը,
Մըռայեցաւ Տրովադան,
Լուռ է ռազմի հարթավայրը,
Քընած բանակն Ատրիդեան:
Խաղաղ են շուրջ: Աւկայծում են
Խարոյկները բանակի,
Երկա՛ր ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մէկմէկի:

Ծագեց պայծառ լուսնեղջիւրը
Ծովի վըրայ էգէյեան,
Բարձրը փեերն ու աստղերը
Ծովի խորքում ցոլացան:
Դատարկ դաշտում երևում է
Մենակ կառքը Պրիամի.—
Տանում է իր Հեկտորի դին
Գոռ բանակից յոյների:

Ահա կանգնեց ծովի փիլին
Աքիլլէսը ահարկու.

—Ըրնկաւ, ծերնկ, քո Հեհատրը,
Հանգաւ լոյսը քո հոգու:
Անդրոմաքէն ու Հեկարէն
Դարպասներում անգաղար
Քեզ են մընում... դարձիդ բոպէն
Կեանք ու մահ է նրանց համար:

Եւ տըխրարեր արշալուսին
Կըբուրէ խունկ հաշտարար,
Թաղման երգով կըհեծեծեն
Ամեն մի տուն ու տաճար:
Հայր, մայր, այրի՝ մաղթանքներով
Սափոր կածեն թանգ վոշին,
Ու, դըժսխում, աղօթքներով
Հանգիստ կըտան հերոսին:

Խեղճ ալևոր, խոնարհեցիր
Գըլուխըդ իմ առաջին,
Եւ այս ձեռքը համբուրեցիր,
Որ լաց տըւաւ քո աչքին...
Որդուդ մասին էր քո աղերս.
Օ՛, մի տըտմիր, ալեգարփ,
Մի բաղդ վըճուեց երկինքը միդ,—
Ինձ էլ ընկճեց Արամաղդ:

Մօտ է ժամըս. պատըաստած է
Նետը անգութ օրհասի,
Եւ պարկուհին ընդհատել է

Արդէն օրերն իմ կեանքի:
ձրուրնչում է դժոխքի դուռը,
Գուժում է ձայնն ահուելի.
—Վերջացած է, հանգաւ ջհրը
Պելիգէսի օրերի...

Ո՛վ, այս ափից ետ չի գալու
Եւ քու որդին անվընաս.
Չուտո՞վ, շուտով պիտի և դու,
Ո՛վ Պելէոս, որբանաս:
Կանցնի ուղմի արհաւիրքը,
Աքիլլէսիդ կը սպասես,
Կը դարդարես արքունիքը—
Չուք ու փառքով ընդունես:

Մըտիկ կանես դատարկ ծովին
Ափից արևուր ու արբտում,
Թէ չէն գալիս արդեօք նաւեր,
Առագանստ չի երևում...
Նաւեր կը գան Իլիոնից,
Ես չեմ լինի ոչ մէկում,
Ես չեմ գարթնի մահւան քընից,
Ու կըմընամ այս հովտում...

Իգուր վերջին տագնապի մէջ
Դու քո որդուն կըխնդրես
Ու կարկամող բազուկներով
Նրան կողքիդ կը փընտրես:

Սիրած երկրից ժամն անջատման
Չի քաղցրացնիլ նա այն օր,
Ու մինչ ափերն մոռացութեան
Չի տարածւի ձայնը հօր:

Իմ հայրենիք, վըճիտ ջրեր,
Չըքնա՞ղ վայրեր հարազատ,
Եւ ձիթ ենիք ու դափնիներ,
Հովիտների շուք ու գարդ,
Ձոխ ծաղկեցէք, փըթըթեցէք,
Ինչպէս առաջ, անըման,
Ինչպէս առաջ—միշտ թընդացէք
Միայն ձայներով խընդութեան:

Բայց Աքիլլ ու Պատրոկլէս
Էլ չէք տեսնի դուք բնաւ...
Սպերքի ջրեր, բազուկըս ձեզ
Գըլսիցըս մաղ խոստացաւ,
Բայց զըլուխըս փոթորկալի
Պատերազմում ահագին
Պատրոկլէսին ես դոհեցի,—
Էլ չըսպասէք իմ տուրքին:

Պատրաստել է նետը արդէն
Ասուլոնը անողոր,
Ըսպատում է նոր եկտրին
Քարոնը սև Ստիքսի մօտ:
Եւ ափերից մոռացութեան,

Պատրուկէսը գիշերով
Եկաւ ինձ մօտ թե՛ թե, անձայն,
Որպէս երազ թըռչելով:

Որպէս շունչը մեզմ գեփիւռի
Նա շըշընջաց ինձ վըրա,
Նրա ձայնը ես լըսեցի,
Վեր նայեցի ու տեսայ՝
Քընքոյշ գէմբին հեաք արասորի
Եւ անջատման խորին ցաւ...
Ձեռքըս իրեն տարածեցի...
Դատարկ մըթնում շըքացաւ...

Սկիւրոսից նէսպաօլէմ
Դէպի հեռու կը լողայ,
Մի անծանօթ ափ կը տեսնի
Կանաչ բըլըակին իր վըրա:
Նաւավարը այնժամ կտսի՝
Դարձած կողմը բըլըակի.
— Ահա շիրիմն Աքիլլէսի՝
Այն էլ տեղն է բանակի...

— Այնտե՛ղ, պարսպից նա գիշերով
Երևում էր մեզ տհեղ,
Անտանելի հուրն աչքերում,
Սաղաւարտով ճաճանչեղ.
Եւ, եռակի որոտալով,
Ահ էր աղբում քաղաքին,

Ու Տըոյացին դունատ գէմբով
Ձէնքը ձըգում էր գեալին:

— Այնտե՛ղ ձեռքը Աարիգէսին
Տալով դաշը հաստասեց...
Այնտե՛ղ կառքով նա մոլեգին
Քաղքի վըրայ յարձակեց...
Այնտե՛ղ հողում իր ետևից
Քարչ տաւ դին չեկտորի,
Յառեց աչքերն ըսպառնալից
Վերան լըքած Տըրոյի...»

Ու իր նաւից նէսպաօլէմ
Կիջնի ափը սըրբազան,
Որ միայնակ բըլըի վըրա
Դընի կ' սուր, կ' վահան:
Չուրջը արդէն դատարկել է...
Խաղաղ Միմոյս ու Քըսանտ,
Բաղեղ ու փուշ պատատել են
Տըոյիային քարուքանդ:

Կանցնես դաշաը պատերազմի,
Ուր Աքիլլէսն է կըռւած,
Կը տեսնես հօրանն երէնեբի
Չիրմաց շուրջը մոռացած.
Ու բեզանից վերև յանկարծ
Կըլըսես ձայն թևերի...

Մենք կըլինինք,—թե թեի տւած
Ընկերներըս հին օրերի...

Այնժամ յիշիր Աքիլէսին.
Երկրից արագ նա անցաւ.
Բախտը նըրան անփառունակ
Այստեղ մի դար խոստացաւ,
Բայց, մերժելով դատարկ կեանքը,
Փառքի ըռպէն ընտրեց նա,
Ու ընկերի համար մեռաւ,
Հաւատարիմ մինչև մահ:

Լըսեց Աքիլ... Մութն է Իգան,
Իլիոնը դեռ տըխուր,
Քընած բանակը Ատրիդեան,
Պատերազմի դաշտը լուռ:
Ու ծըխալով առկայծում են
Խարոյկները բանակի,
Երկա՛ր ու ձիգ ձայնարկում են
Պահնորդները մէկմէկի:



ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱԻՈՐԸ

ԲԱՅԲՕՆ

Շ Ի Լ Ի Ո Ն Ի Կ Ա Լ Ա Ն Ա Ի Ո Ր Ը

Սօսե՛ս Ձիլիսնին

Ո՛վ աղատութիւն, շունչ յաւերժական,
Բանտերում ես դու շքեղ ճաճանչում,
Այնտե՛ղ, ուր սիրտը՝ քեզ բընկարան
Եւ քո սէրըն է միայն ճանաչում:

Եւ երբ որդիքըդ դարկած շղթայի,
Անլոյս բանտերում նահատակելով՝
Փառաւորում են երկիրն հայրենի,
Ծաւալում ես դու հողմի թևերով:

Ձիլիսն, քո բանալ սըրբավայր է միշտ,
Եւ քո տըխրալի յատակը՝ սեղան.
Բոնիվարն այնտեղ տանջեց բազմավիշտ,
Թողեց հետքերը քարերի վըրան.

Եւ թող միշտ մընան նըրանք անջընջում,
Որ բըռնութիւնից Ասուած են կանչում:

I

Գորշ են մազերըս, բայց ոչ տարիքից,
Ոչ էլ մի գիշեր

Դարձայ այսպէս ծեր,

Որ պատահում է յանկարծ երկիւղից:

Ձեռք ու ստներս էլ այսպէս շորացան
Ոչ թէ բաներուց, այլ դարչ հանգըստից,
Խաւարչախն բանտին երբ աւար դարձան,
Ջրըկւած արևից, աշխարքից, օղից:

Իմ հայրը այրւեց խարոյկի վըրա,
Չուզեց իր պաշտած հաւատն ուրանայ,
Իրեն որդիքն էլ նոյն բանի համար
Օթեան գըտան բանտումը խաւար:

Եօթ հոգի էինք, մընացել եմ ես:
Մէկը տարևոր, վեցն երիտառարդ,
Ինչպէս սկըսան, վերջացրին այնպէս,
Հալածանքների սաստկութեամբ հըպարտ:

Մինը կըրտուում, երկուսը կըռուում
Կընքեցին իրենց հաւատն արևնով,
Իրենց հօր նըման մեռան անկոտորում,
Թըչնամու մերժած Աստծու անունով:
Վերջին երեքը բանտն էին ձըգւած,
Որոնցից ես եմ մընացել հիմի—
Հիւանդ բեկորըս մեր անբախտ սոհմի:

II

Այնտե՛ղ, հին ու խոր բանտում Ջիլիոնի,
Եօթը հատ սիւներ գոթական ձևի,
Եօթը հաստ սիւներ, ծանր ու գորշագոյն,
Երևում են թոյլ մի շողով արժգոյն,

Որ, տես իրեն ճամբան մոլորել,
Պատի արանքից պատահմամբ ընկել՝
Խոնաւ յատակին խաղում է տըխուր,
Ինչպէս ճահճային աղօտ մոլեհուր:

Ամեն սիւնի մէջ այնտեղ մի օղ կայ,
Եւ ամեն օղակն ունի մի շըղթայ:
Սոսկալի բան է երկաթի շըղթան.
Ուտում են նըրա ժանդ-ժանիքները.
Նըրանք մաշելով մարմնիս մէջ մըտան,
Ու չեն ջընջւելու երբէք հեաքերը,
Մինչև շը թողնեմ օրւան լոյսը վառ,
Ծանը՛ր, ատելի՛ աչքերիս համար,
Որոնք շը գիտեմ, թէ քանի տարի
Ձեն տեսած պայծառ երեսն արևի:
Այդ տարիներն չեմ յիշում թիւը.
Թողեցի նըրանց տըխուր հաշիւը,
Այն օրից, ինչոր եղբայրըս վերջին
Թոչնեց ու մեռաւ աչքիս առաջին:

III

Նըրանք սիւներին մեղ շըղթ այեցին:
Մենք ջոկ ջոկ էինք՝ թէև միասին:
Մենք չէինք կարող ոչ մի քայլ անել,
Ոչ իրար երես խաւարում տեսնել:
Աղօտ, կապտաւուն այն լոյսն էլ որ կար,
Մեղ մեր աչքերում դարձըրեց օտար:
Այսպէս միասին, բայց ջոկ ջոկ կապած,

Աշխարքի ամեն բարիքից զըրկած,
Մի մըխիթարանք միայն ունէինք,
Որ իրար ձայներ իմանում էինք:
Ու սըրտով կըրպած, ձեռքերով հեռու,
Մենք ըսկըսեցինք սիրա տալ իրարու
Նոր նոր յոյսերով կամ թէ հին վէպով,
Կամ հերոսական անվեհեր երգով:
Սըրանք էլ սակայն պաղեցան վերջում.
Տըխուր էին մեր ձայները հընչում,
Տըխուր ու խըռպոտ, խուր ու ահուկի,
Պաղ արձագանգը բանտի քարերի...

IV

Մեր փոքրը, որին հայրըս սիրում էր,
Որ մեր հանգուցեալ մօր ճակատն ունէր
Ու աչքերն՝ լինչպէս կապոյտը երկնի,
Նա էր իմ հոգին տանջում աւելի:
Իրաւ, տեսնելիս մարդ շէր դիմանում—
Այնպիսի՛ թըռչնակ այնպիսի՛ բընում...
Գեղեցիկ էր նա, պայծառ ու մաքուր,
Եւ ուրախ, զըւարթ սըրտով բընատուր:

V

Միւսն էլ նըրա պէս հոգով անարատ,
Ծընւած էր սակայն հուժկու տըղամարդ:
Ուրախ ու պատրաստ ամեն ժամանակ

Աշխարքի ընդդէմ խիղախել մենակ,
Միայն թէ շըհեծէր շըղթայի տակին.
Չըղթայի ձայնից մարում էր հոգին:
Նա լուռ, անմըռունչ ընկնում էր արդէն:
Ես էլ թերեւ ընկճըւած նոյնքան՝
Ճիգ էի անում, որ սըրտապընդեն
Վերջին յոյսերը թանգագին մեր տան:
Իգուր. նա ընկաւ, նա մեռաւ... տեսայ...
Եւ տանջում էի թէև, աշխատում,
Չըղթաս կըրծոտում, շըղթաս կըտրատում,
Տագնապի ժամին իրեն շըհասայ...
Նա մեռաւ... Եկան, կապանքը վերցրին,
Հէնց այնտեղ, բանտում, աչքիս առաջին
Մի փոս փորեցին սառն ու երեսանց...
Աղաչանք արի, խընդրեցի նըրանց,
Որ շընորհ անեն՝ թաղեն այնտեղում,
Ուր որ արեւի ճաճանչն է խաղում...

Այս խենթ, խելագար տըղամար մի միտք էր,
Բայց այն ժամանակ գըլուխս էր մըտել,
Թէ աղատ ծընւած, ազատ սովորած
Իմ կըրօր հոգին, թէկուզ և մեռած,
Չէր հանգըստանալ գերութեան բանտում...
Ջուր էի սակայն այնպէս պաղատում.
Նըրանք ինձ վըրա քահ քահ խընդացին,
Եւ մեր սիրելի կըրայրը կըրկին
Այն պաղ, անդալար հողում է թաղւած,
Ու գըլխի վերև անբաժան կախւած

Բընակալներին վայել յուշարձան—
Եղբորըս կըրած ու թողած շըղթան:

VI

Իսկ մեր ծաղիկը, փոքրը մեղանից,
Ամենքից սիրւածն իր ծընւած ժամից,
Իր սիրուն դէմքով մեր մօր պատկերը,
Մեր գերդաստանի մանկական սէրը,
Նահատակ մեր հօր ցնորքը նւիրական
Եւ իմ հոգսերի վերջին առարկան,
Որի համար միայն ինձ պահում էի,
Որ նըրան ազատ գէթ մի օր տայի.
Նա, որ դեռ հոգին պահել էր այնպէս
Տակաւին զըւարթ, գուցէ առերես,
Նա էլ խորտակեց, օրէցօր և նա
Սկըսաւ թօշնել ցօղունի վըրա:
Քայց այնքան խաղաղ էր նա թառամում,
Լսւո, մեղմիկ հալում, ուժերը քամում,
Առանց արցունքի, քնքոյշ ու բարի...
Ինձ համար էր միայն հոգում ու ցաւում...
Եւ ոչ մի արբաունջ, մի «նախ» չարաւ նա
Իրին վաղաժամ օրհասի վըրա:
Մի փոքրը խօսեց մեր լաւ օրերից,
Մի քիչ ըստիկեց, յոյսեր տըւաւ ինձ,
Քանզի ևս անհուն վըշտից քարացել,
Կորուստիս առջև լուռ էի կացել.
Ապա թառանջը, որ զըսպում էր նա,

Արդէն երկարեց, նըւազեց տնա...
Ականջ դըրի ես... չէր լաւում խօսաւ.
Չայն արևի նըրան անից խելագար...
Կանչեցի... կարծես մի ձայն լըսեցի...
Ուժգին ցընցումով շըղթաս կըտըեցի,
Ընկայ նըրա մօտ. նըրան չըզըտայ...
Ես էի մենակ մըթնումը շարժում,
Ես էի ապրում, ես էի շընչում

Անիծւած օղը մեր լընաւ բանալի:
Սա գեանի վըրա, նա գեանի տակին,
Երկու եղբայրս էլ վախճանւած էին:
Ընկած չոր ձեռքը բընեցի, աւաղ,
Նըրա պէս հոյնիսկ իմ ձեռքն էլ էր պաղ:
Ոյժ չըկար շարժւեմ կամ մի ճիգ անեմ,
Քայց զգում էի, որ դեռ ապրում եմ...
Կատաղի մի վիշտ, երբ գիտենք՝ որ նա,
Ում սիրում էինք՝ այլևս չըկայ...
Չըզիտեմ ինչպէս
Չէի մեռնում ես.
Երկրում ինձ համար
Էլ ոչինչ չըկար...

VII

Իսկ յետոյ այնտեղ ինձ ինչ պատահեց,
Այդ ես չըգիտեմ, ու չեմ իմացած.
Ինչ օղը հատաւ, լոյսը պակասեց,
Ապա թէ մութը չըբացաւ յանկարծ:

Զգացում ու միտք—էլ ոչինչ չըկար:
Չէի հասկանում՝ ինչ էի զգում,
Քարերի միջին կանգնած մի լեռ քար,
Մի լերկ ապառաժ գագաթը միգում...
Ամեն բան դատարկ, մըռայլ ու գորշ էր:
Ոչ ցերեկ էր այն և ոչ էլ գիշեր,
Եւ ոչ իմ բանտի նըսեմ յոյսը կար,
Այնքան ատելի աչքերիս համար:
Մի տարածութիւն—դատարկութեամբ լի,
Եւ հաստատութիւն—առանց մի տեղի...
Չըկային աստղեր, ժամանակ, աշխարհ,
Ոչ փոփոխութիւն, ոչ բարի, ոչ չար.
Խորին լըռութիւն, և կանգնած օդում
Ոչ մահւան նըշոյլ, ոչ կեանք էր նկատում.
Այն անգործութեան մի ծով էր կանգուն,
Անշարժ ու համըր, խաւար ու անհուն...

VIII

Բայց ահա մի շող ցոլաց իմ գըլխում.
Այն մի գեղեցիկ թըռչունի ձայն էր:
Մերթ լըռում էր նա, մերթ նորից երգում:
Այնպէս քընքոյշ երգ լըսած չէի դեռ:
Մինչ լըսումէի կախարդւած հոգով՝
Լըցեցին աչքերս ուրախ արցունքով,
Եւ ես միառժամ չէի նըկատում
Թըլւառութիւնըս այն խաւար բանտում:
Բայց շուտով միտքըս սովոր ընթացքով

Երբ վերադարձաւ, իրական աչքով
Զուրջըս, վերեւս ես տեսայ կըրկին՝
Պատերն, օճորքը, նըկուղը մըթին,
Առաջայ նըման ուր որ հազիւ հազ
Արևի շողքը ընկնում էր նըւազ:
Բայց և այն ճեղքում, որ ընկնում էր նա,
Աւելի հանգիստ քան ծառի վըրա,
Նըստած էր թըլնակն ուրախ ու անփայթ,
Մի սիրուն թըռչնակ, թեքը կապոյտ:
Հազար զանազան բաների վըրա
Գեղգեղում էր նա,

Ու ինձ էր ասում կարծես բոլորը:
Դեռ ոչ մի անգամ՝ մինչև այն օրը
Նըրա նըմանը տեսած չէի ես,
Ոչ էլ կը տեսնեմ: Նա էլ էր ասես
Ինձ նըման մենակ, ընկերից զըրկւած,
Սակայն ինձ նըման յոյսը չէր հատած:
Նըրա համար էր նա եկել մենակ,
Որ մըլտիթարի ինձ որը ժամանակ.
Եւ՝ ծըլըլալով մութ բանտիս ծայրից՝
Լըցնում էր կեանքով իմ սիրաը նորից:
Բայց սով էր ինքը, իմ հիւրը երգիչ.
Արդեօք երկընքի ազատ բընակիչ,
Թէ՛ իր վանդակից հէնց նոր ազատել,
Եկել էր իմիս վերեւ նըստել...
Չը գիտեմ, միայն քաշած գըրութիւն—
Չէի ցանկալ քեզ նոյնը, իմ թըռչուն:

Սակայն թերևս թըռչնի կերպ առած
Մի այցելու էր, դըրբախալից թըռած...
Այս միաբը այնժամ, թող ներէ ինձ Տէր,
Պատճառեց անշափ խինդ ու արցունքներ:
Մըտածում էի՝ թէ նա իմ կարօս
Եղբօր հոգին էր, եկել էր ինձ մօտ...
Բայց յանկարծ թռաւ, և հս իմացայ,
Որ մի հողեղէն արարած էր նա.
Մի՛թէ կարող էր եղբայրըս թըռնել,
Ինձ կըրկին մենակ թողնել այն բանտում՝
Ինչպէս պատանում փաթաթած մեռել,
Ինչպէս մի սև ամպ պայծառ կապոյտում:

IX

Փոխեց վիճակըս այն ժամանակից.
Պահապաններըս դարձան կարեկից:
Չը գիտեմ ինչու մեղմացան նըրանք,
Որ սովոր էին տեսնել շարշարանք,
Բայց այսպէս եղաւ: Ոչ ոք իմ կըտրած
Ըրդթան չը կապեց, ու մընաց միշտ բաց,
Եւ շըջում էի իմ բանտում ազատ
Ողջ երկարութեամբ, մի պատից մի պատ,
Բայց երբ թըռում էր՝ անըզոյշ քայլով
Կոխեցի նըրանց հանգիտաը տըխուր,
Դողդոզում էի սաստիկ հեալով,
Ու սիրտըս ցաւից ճըմլում էր ամուր:

X

Ես ոտնատեղեր փորեցի պատում.
Սակայն փախչելու չէի աշխատում.
Ես թաղել էի արդէն բոլորին,
Որոնք աշխարքում ինձ սիրում էին,
Եւ այնուհետեւ աշխարքն ինձ համար
Մի բանա էր նոյնպէս, բայց մեծ ու անծայր:
Էլ ոչոք չըկար այնտեղ ինձ մօտիկ,
Հայր, մայր կամ եղբայր, ընկեր կամ ուրդիք...
Ես ուզում էի միայն բարձրանալ
Վանդակով փակած լուսամուտներին,
Այնտեղից հանգիտտ, մի անգամ դարձեալ
Նայել հըրճւանքով բարձրը սարերին:

XI

Ես տեսայ նըրանց. դարձեալ նոյնն էին
Եւ չէին փոխել նըրանք ինձ նըման.
Կըրկին դարևոր ձիւնը գըլիններին,
Ներքե մեծ լիճը, կապտաջուր Ռօնան...
Ջըրերը դըւարթ աղմըկում էին
Մացառուտներում, ժայռերի միջին,
Արևում փայլում ճերմակ քաղաքը,
Եւ լըճում հանդարտ սահում նաւակը,
Թեթեւ՝ ձիւնափայլ առագաստը բաց:
Ապա այնտեղ ցած

Մի փոքրիկ կրդղի մենաուր, կանաչ,
ժըպտում էր՝ ասես իմ աչքի առաջ:
Բանտիս յատակից մի քիչ մեծ կրկար,
Բայց բուսել էին վրբան երեք ծառ:
Լեռնային հովը շքնչում էր այնտեղ,
Ափերին վրճիտ ջրերը ծրփում,
Զբմբուխս դալարի միջում գունագեղ,
Քընքոյշ վառվրուռն ծաղիկներ ծաղկում:
Բանտի պատի տակ ձրկան մի վրաառ
Լողում էր անշափ ուրախ ու կայտառ,
Թագաւորում էր արծիւն վերևում,
Ու թափն աւելի ուժգին էր թըւում,
Երբոր նա յանկարծ ուղղում էր դէպ ինձ:
Աչքերս արցունքով լըցւեցին նորից,
Եւ այնպէս թախիծ արեց իմ սրբախն,
Ասես ցաւեցի, որ լուսամուտին
Եկայ մօտեցայ՝ իմ շրջթան թողած:
Չտապով իջայ դարձեալ դէպի ցած,
Ու մըռայլ բանտիս խաւարը ահա
Ծանրը ճընշելով շոքեց ինձ վըրա:

XII

Ամիսներ, տարիք, թէ օրեր անցան,
Ես ոչ հաշուել եմ և ոչ իմացել.
Մութն էր իմ բանտը, տըխուր մըշտական,
Ու երբէք պայծառ յոյս չեմ ունեցել:
Եկան վերջապէս ինձ աղատելու.

Ձէի հասկանում՝ ս'ւր եմ գընալու,
Ոչ էլ հարցըրի՝ էր են աղատում.
Մին էր ինձ համար, աղատ թէ բանտում:
Եւ այն ժամանակ իմ բանտի միջին
Երբոր ձրգեցին կապանքըս վերջին,
Այնպէս էր թըւում, թէ նըրանք եկել՝
Ուղում էին ինձ բաժանել, զըրկել
Իմ երկըսրդ տանից: Ես մինչև անգամ
Այնտեղ սարդերին դարձայ բարեկամ.
Ու միշտ ուշադիր հետևում էի,
Երբոր լըջօրէն՝ նըրանք ձանձրալի
Իրենց արհեստով էին ըզբաղում.
Կամ դիտում էի, որք մուկն էր խաղում
Լուսնի լուսի տակ: Ինչո՞ւ նըրանց պէս
Ինձ էլ մեր տանը շըզգայի և ես...
Մենք՝ բընակիչներ ամենքըս մի տան,
Ու ես նըրանց մէջ մի պետ անսահման,
Կեանքի ու մահւան վըճիռն իմ ձեռքում.
Բայց այնպէս խաղաղ էինք բընակում...
Նոյն իսկ շըջթայիս դարձայ ես ընկեր...
Այսպէս՝ մընալով օրեր, տարիներ,
Սովորում է մարդ իրեն վիճակին,
Եւ... ես ցաւեցի իմ բանտի շէմքին:

Մ ծ Ի Ր Ի

ԼԵՐՄՈՆԵԱ

Մ ծ ի Ր ի *)

I

Սըրանից առաջ մի քանի տարի,
Այնտեղ, ուր Սրազ ու Կուր գետերի
Ջրերն աղմուկով խառնըում իրար,
Գըրկում են երկու քոյրերի նըման,
Կար մի մենաստան: Կարող է այժմ էլ
Անցորդը սարի ուտերից տեսնել
Քանդած դռների կանգուն սիւները,
Վանքի կամարն ու աշտարակները:
Բայց անուշահոտ ծուխը բուրվառի
Էլ չի վերանում կամարի տակին
Եւ ոչ լսում է աղօթողների
Երգը գիշերույ ուշ ժամանակին:
Այժմ մեն-մենակ զառամեալ մի ծեր,
Աւերակ վանքի պահնորդ կիսամեռ,
Ընկած մտքիցը մարդկանց ու մահի,
Սրբում է փոշին շիրմաքարերի,
Որոնք պատմում են անցած դարերի,

*) Մծիրի — ՁՊՕՕՕ, վրացերէն կը նշանակի նմղեհ, եկուր, անապա-
տական:

Անցած փառքերի ու նրբա մասին,
Թէ ինչպէս ճնշւած իր թագի տակին,
Այս ինչ թագաւորն, այս ժամանակին
Իր ժողովուրդը յանձնեց ուսին:

II

Մի ուս գեներալ Կովկաս լեռներից
Մի անգամ գէպի Թիֆլիզ էր գալիս:
Իր հետ նա գերի մի մանուկ ունէր.
Սա արկարացաւ, շրկարաց տանել
Նեղութիւնները հեռաւոր ճամբի:
Հաղիւ թէ լինէր հինգ վեց տարեկան,
Այծեմնիկի պէս երկչոտ, վայրենի.
Եւ թոյլ ու ճրկուն եղէպնի նրման:
Սակայն նրա մէջ ցաւը տանջալի
Զօրացրեց այնժամ իրեն հայրերի
Աննկուն հոգին: Վրշաք լուռ տանում,
Եւ գէթ մանկական իրեն շրթունքից
Մի թոյլ հառաչանք նոյն իսկ չէր հանում:
Հացը նըշանով մերժում էր նա գէն
Ու խողաղ, հպարտ մեռնում էր արդէն:
Կարեկցութիւնից մի ծեր վանական
Հիւանդին խնամեց, տւաւ տպաստան.
Եւ այսպէս՝ վանքի յարկի տակ մնաց
Բարեկամական ձեռքով աղատւած:
Բայց, զուրկ մանկական զւարթ հաճոյքից,
Փախչում էր առաջ նա ամեն մէկից.

Թախառում էր լուռ, մենակ, սրտաբեկ,
Թառանչով նայում գէպի արևելք,
Մաշեկով մի լուռ, անմեկին վըշտից—
Իրեն հայրենի երկրի կարօտից:
Գերութեան սակայն շուտ ընտելացաւ,
Օտարի լեզուն կամաց հասկացաւ,
Հայր սուրբը կընքեց, տւաւ սուրբ հաղորդ,
Եւ դեռ աշխարհքի կեանքին անձանօթ,
Ուղում էր արդէն ծաղիկ հասակում
Արեգայական ընդունել կոչում,
Երբոր միանգամ աշնան գիշերով
Անհետ շըքացաւ: Զուրջը սարերով
Զգում էր անծայր անառը մըթին:
Երեք օր այնտեղ իզուր փնտրեցին,
Վերջապէս գաշտում անդղայ գտան
Ու առան կըրկին բերին մեռածան:
Նա սաստիկ զունտա, թոյլ էր ու նիհար.
Կարծես աշխատել, տանջել էր երկար,
Կամ հիւանդութիւն ու սով էր քաշել:
Զէր պատասխանում հարցմունքներին նա
Թօշնում էր, ընկնում օր օրի վըրա:
Այսպէս մօտեցաւ ժամը իր մահւան:
Այնժամ նըրա մօտ եկաւ արեղան
Յորդորանքներով և աղերսելով:
Հիւանդը, հպարտ նրան լըսելով,
Նստեց, մնացած ուժը հաւաքեց,
Եւ այսպէս երկար խօսել սկսեց.

«Ջրնորհակալ եմ, հայրիկ, որ եկար
 Իմ խոստովանքը լըսելու համար:
 Միշտ լաւ է դարձեալ, որ սիրտս ցաւստ
 Ես թեթեալն էի խօսքով մէկի մօտ:
 Սակայն ես մարդկանց շարիք չեմ արել,
 Իմ արարքները նորա համար էլ—
 Ի՞նչ օգուտ, եթէ խոստովանէի.
 Իսկ հոգին միթէ պատմել կըլինի...
 Ես քիչ եմ ապրել և այն էլ գերի.
 Այսպէս երկու կեանք մի աղմըկալի,
 Եսուն կեանքի հետ, որ տեսել եմ, ծեր,
 Ես կը փոխէի թէ հընար լինէր:
 Ես միայն մի մըտքի ուժ եմ իմացել.
 Մի, բայց բոցավառ կիրք եմ ունեցել.
 Նա ինչպէս մի սրդ ապրել է իմ մէջ,
 Կըրծել է հոգիս, մաշել մինչև վերջ:
 Իմ ցնորքները թուցրել, տարել է
 Այս նեղ խցերից անդսրը աղօթքի
 Այն վեհ աշխարհը կըռւի, աղմուկի,
 Ուր որ ժայռերը թագչում ամպերում,
 Ու մարդիկ այնպէս աղատ են ապրում...»

«Ծերունկ, շատ անգամ իմացել եմ ես,
 Որ դու իմ կեանքը մահից փրկել ես.»

Ինչո՞ւ փրկեցիր: Մենակ ու դաժան,
 Փոթորիկ պոկած տերևի նըման,
 Մըռայլ պատերի միջում մեծացայ,
 Հոգով դեռ մանուկ, բախտով արեղայ:
 Չը կարողացայ ոչոքի ասել
 «Հայրիկ» ու «մայրիկ» սրբադան խօսքեր:
 Հարկաւ, քո միտքը այն էր, ծերունի,
 Որ մենաստանում ես խորթ անայի
 Այսքան քաղցրալի այս անուններին.
 Զո՞ւր. հետըս են նրանց ձայները ծնւել:
 Ես տեսնում էի, որ ուրիշներին
 Հայրենիք, աուն, ընկեր, ծնող ունէին,
 Մինչդեռ չունէի ևս նրանց նըման
 Թէ ոչ սիրելիք—այլև գերեզման:
 Ես էլ այն օրից իդուր չողբացի,
 Այլ հոգուս միջում այսպէս ուխտեցի,
 Որ երբևիցէ, թէկուզ մի վայրկեան,
 Այս իմ բոցավառ կուրծքը մանկական
 Սեզմեմ կարօտով մի ուրիշ կըրծքի,
 Թէկուզ անծանօթ—միայն հարազատի:
 Բայց, աւճղ, հիմայ երազներըս այն
 Կսրել են իրենց պերճանքով համայն,
 Ու՛ ինչպէս օտար երկրում ապրեցի,
 Մեռնում եմ դարձեալ ևս սրբ ու գերի:

«Ինձ չի վախեցնում գերեզմանն անեղ,
Տանջանքն, ասում են, քընում է այնտեղ
Սառն, յաւերժական լըռութեան միջում:
Կեանքից զրկելին է ինձ մենակ տանջում:
Ջահե՛լ եմ, ջահե՛լ... ունեցել ես դու
Յնորմունքները անհոգ պատանու:
Դու չես ունեցել կամ չես յիշում էլ,
Թէ ոնց ես մի օր ասել ու սիրել,
Ինչպէս է սիրտըդ բարասել ու ժպին
Կանաչ դաշտերին, վառ արեգակին
Անկիւնի բարձր բուրգից նայելիս,
Ուր թարմ է օդը, և ուր մերթ գալիս
Ու բարձր պատի խորունկ ձեզբւածում,
Բուքից վախեցած, կուչ կկած նստում,
Պատըսպարւում է փոքրիկ աղաւնին—
2ըքնաղ դաւակը անյայտ աշխարհի:
Ուր մընաց՝ արդէն դառամ ես, թոյլ ես,
Սիրուն աշխարհը կըշտացրել է քեզ.
Սրտումդ անկատար էլ շունիս ըղձեր...
էլ ի՞նչ ես ուզում, ապրել ես դու, ծեր,
Աշխարքում ունիս մոռնալու մի բան.
2է՛ օր կապրէի ես էլ քեզ նըման...

«Գուզնս իմանալ՝ աղատութեան մէջ
Ես ինչեր տեսայ.— դաշտեր տեսայ պերճ.
Բըլուրներ տեսայ, ուր կանաչ ծառեր,
Ինչպէս շուրջարբի բըռնած եղբայրներ,
Չորս կողմից դալար պըսակ կապելով
Չըշընջում էին թարմ խըմբակներով:
Տեսայ գէղերը մըռայլ ժայռերի,
Երբ բաժանում էր վըտակը նրանց,
Նրանց մաքերը հասկանում էի,—
Վերեկից էր այս շնորհքն ինձ աւած:
Վաղս՛ւց, շատ վաղուց օդում տարածւած
Այն քարէ գրկերն ամեն մի վայրկեան
Փափազում են լուռ իրար հանդիպման,
Բայց օրեր անցնում, տարիք են անցնում,
Եւ նրանք երբէ՛ք իրար չեն հասնում...
Բարձրը լեռների շարքեր տեսայ ես
Վեհ, հըրաշալի ցընորքների պէս,
Երբ արշայուալի ժամին վաղորդեան
Նրանց գըլխները սեղանի նըման
Ծխում են հանդարտ կապոյտ երկնքում,
Ու ամպը ամպի ետեից ձըզւում,
Թողնելով վաղանի իր օթեանը,
Ինչպէս տարագնաց ըսպիտակ հաւքի
Հեռու կողմերից չըւող երամը,
Ուղղում է իր շուն կողմն արեկիքի:

Անօսը մշուշի արանքից, հեռում,
Դոհարի նրման փայլող ձիւներում,
Տեսայ ալեւը Կովկասն անսասան.
Եւ ես շըգիտեմ թէ ընչիցն էր այն,
Բայց թեթեալ սիրտս նոյն ժամայն.
Ըսկոնց գաղանի մի ձայն ինձ ասել,
Թէ երբեմն այնտեղ ապրել եմ ես էլ...
Ու հեարզհետէ բացեցաւ խաւար
Անցեալն իմ մտքում պայծառ ու պայծառ . .

VII

«Եւ ես յիշեցի մեր տունն հայրական,
Յիշեցի մեր ձորն ու մեր շըրջական
Չըւաքում ցրած գիւղի տըները.
Հսեցի ըրգւան ձէն ու ձուները
Դէպի տուն վաղող երամակների,
Հեռու հաջոցը ծանօթ շըների:
Միտս եկան թուխ թուխ ծերունիները,
Հուսնեակի լուսով իրիկունները
Իմ հօր սըրահի, շէմքի դէմուդէմ
Նստոտած խոհուն և խոթուադէմ.
Ու խանչալների պղընձապատած
Պատեանների փայլն... ու բոլորն յանկարծ
Խառը շարքերով, երազի նրման
Աչքիս առաջից եկան անցկացան:
Հապա իմ հայրը. պատերազմական
Իր զգեստներով, ինչպէս կենդանի

Աչքիս երեսց, ու միտըս եկան
Զրահի շունդ, փայլն հըրացանի,
Նրա հայեացքը հարմրտ, աննկճւն,
Եւ իմ քոյրերը մատաղ, սիրասուն...
Չողերը նրանց աղու աչքերի
Եւ հնչիւնները երգի, խօսքերի,
Որ ասել էին օրբանիս վըրա...
Այն ձորի միջով վտակ էր վազում,
Աղմկող էր նա, սակայն ոչ խօրին,
Նըրա ոսկեգոյն, մանրիկ աւազում
Խաղալու էի գընում կէսօրին,
Եւ նայում էի աչքերըս յառած,
Երբ ալիքներին, անձրևից առաջ,
Դիպչում էր թեով սև ծիծեռնակը:
Յիշեցի և մեր խաղող տընակը,
Օջաղի առջև իրիկունները
Արած այն երկար պատմութիւնները,
Թէ ոնց են ապրել մարդիկ վաղեմի,
Երբ գեռ աշխարքը ճոխ էր աւելի:

VIII

«Կուղես իմանալ, թէ ես ինչ արի
Այն երեք օրում:—Աղատ ապրեցի,
Եւ կեանքըս առանց այն լաւ օրերի
Քո ուժից ընկած ծերութիւց էլ գեռ
Աւելի արժգոյն, արխուր կըլինէր:
Մտքումըս վաղճւց, վաղուց գըրել եմ»

Միանդամ արձակ դաշտերին նայեմ,
Տեսնեմ՝ աշխարհը սիրմուն է արդեօք,
Ինչո՞ւ եմք, տեսնեմ, դալի մենք աշխարհ,
Ազատ ասրելով թէ բանտի համար:
Եւ այն գիշերւոյ սոսկալի ժամին,
Որոտմունքն հրբոր վախեցրել էր ձեզ,
Սեղանի առջև երբոր խըմբովին
Ընկել էիք դուք խըռնըւած այնողէս,
Ես վանքից փախայ: Օ՛, ինչպէս եղբայր
Կուզէի զըրկել մըրբիկն հողմադայր.
Աչքերս ամպերի ետեից տանում,
Զեռքով շանթ էի բռնել ցանկանում...

Գէ ասա, հայրիկ,

Ինձ այս պատերում ինչ պիտի տայիք
Իմ փոթորկալի սըրտի և ահեղ
Այն որոտմունքի մտերմութեան տեղ...

IX

«Երկար վաղեցի, թէ ուր կամ որտեղ,
Այդ ես չըզիտեմ: Եւ ոչ մի աստըզ
Իմ դժւար ճամբան չէր լուսաւորում:
Միայն բերկրութեամբ շունչ էի առնում
Իմ վաստակարեկ ու յոգնած կըծքով
Այն անտառների թարմութիւնը զով:
Երկար վաղեցի. վերջապէս յոգնած
Բարձր խոտերում ընկայ ու պառկած
Ականջ զըրի ես. հետեող չըկար:

Որոտմունքն ընկաւ. լոյսը մի երկար
Տժգոյն ու դալուկ շերտով բացւելով
Զգեց երկնքի—երկրի արանքով,
Եւ նըրա վերա ես որոշեցի
Սուր ժանիքները հեռու լեռների:
Անձայն ու անշարժ ես պառկած էի:
Երբեմն երբեմն շախկալը կիրճում
Երեխի նըման լալիս էր, ճըշում,
Եւ, հարթ ու փայլուն թեփով փայլելով,
Սողում էր օձը քարերի միջին.
Զէր ճնշում սակայն երկիւզն իմ հոգին.
Ես էլ գայլի պէս խորթ էի մարդոց,
Եւ սողում էի, թագչում ինչպէս օձ:

X

«Ներքև անդընդում, ինձանից շատ ցած,
Վըտակն հեղեղից սաստիկ յորդացած,
Ազմըկում էր խուլ, ինչպէս բարկացած
Մարդկային խօսուն ձայնիւր անհամար:
Թէպէտե անխօսը—սակայն ինձ համար
Պարզսրոչ էր միտքն այն խօսակցութեան,
Անլուռ աղմուկը, վէճն յաւերժական,
Հարւածը յամառ ժայռերի կըրծքին:
Մեղմանում էր նա ու դարձեալ ուժգին
Խաղաղ ձորի մէջ յանկարծ որոտում:
Եւ ահա վերև—աղջամուղջ օդում
Հաւրերն երգեցին: Արեւածաղի

Երկինքը շիկնեց: Մի թիթե քամի
Նամ աերկենքը շարժեց ու գնաց
Ու ծաղիկները շնչեցին քնէած.
Նրանց պէս օրին դիմաւորելու
Ես էլ գլուխըս բարձրացրի վերե...
Մըտիկ արեցի, և չեմ թագցընում,
Սուրսափն ինձ պատեց.—անյատակ ու սև
Անդունդի եզրին էի ես պառկած,
Ունում էր ներքե ջուրը փրփրած:
Այնտեղ է տանում ժայռն աստիճաններով,
Բայց շարը միայն իջաւ նրանով,
Երբոր երկնքի բարձրից գահավէժ,
Կորաւ ստորին այն մութ վըհի մէջ:

XI

«Ծաղկում էր շուրջըս եղեմն Արարչի.
Զըւարթ ու դալար դարձը կանաչի
Պահպանում էր դեռ արցունքն երկնային,
Եւ խօսողները խաղողի որթի
Ծառերի միջով գալարում էին
Պճնած կանաչով քնքոյշ սաղարթի.
Իսկ նրանց վրա ճսխ կախած էին,
Ինչպէս աղանջի գլինդեր թանկագին,
Լիքը ողկոյղները, և մերթ նրանց մօտ
Թըռչում էր հաւքի երամբ երկշոտ,
Դարձեալ պառկեցի,
Ականջ դըրեցի

Այն օտարոտի թովիչ ձայներին.
Նրանք թփից թուփ ծըլըլում էին
Եւ խօսում էին կարծես միասին
Երկնքի—երկրի գաղանձքի մասին:
Այնտեղ բնութեան ձայները քօլոր
Միացած էին: Այն հանդիսաւոր
Փառարանութեան երգի ժամանակ
Մարդու գոռ ձայնը չէր լսում մեհակ:
Ինչ որ այն ժամին զգում էի ես,
Անհետացել են մտքերս այն բոլոր,
Բայց կուղենայի պատմել նրանց քեզ,
Որ գտնէ մտքով ապրեմ նորից նոր:
Այն առաւօտը կամարն երկնքի
Այնքան էր յստակ, որ հըրեշտակի
ձախը սուր աչքը բռնել կարող էր.
Այնքան թափանցիկ ու այնքան խոր էր,
Այնքան էր լեցուն ջինջ կապուտակով,
Որ ես նըրա մէջ հայեացքով, հոգով
Սուղեցի, կորայ, մինչև իր շողով
Իմ ցնորքները կէսօրը ցըրեց,
Եւ ինձ ծարաւը ասնջել սկսեց:

XII

«Այնժամ բռնելով ճկուն թփերից,
Դէպի հեղեղատն անդունդի եզրից,
Մի սալից մի սալ, սրբան ուժըս կար
Սկըսայ իջնել: Երբեմն մի քար

Ոսներիս տակից պոկւելով յանկարծ,
Գլորւում էր ցած.
Թռչում էր ներքև դգորդ հանելով,
Եակից ահօս ու թող անելով
Ու կուլ էր գընում ջրի ալիքին:
Ես կախած էի—անդունդն իմ տակին:
Բայց ջահելութիւնն ուժով է լինում,
Մահւան երկիւղը ինձ չէր վախեցնում:
Հէնց իջայ տակը այն սեպ-սեպ ժայռի,
Երեսիս վըչեց լեռնային ջրը
Ջով թարմութիւնը, և իսկոյն ազահ
Նըրա սառնորակ ալիքին ընկայ:
Յանկարծ մի շըշուկ, սանաձայն թեթեւ...
Իսկոյն թաղչելով թըփերի ետև,
Ամբողջ բռնըած ահամայ դողով,
Երկչոտ հայեացքս վեր քաշած վախով
Ես ալանջ դընել սկսեցի ազահ.
Եւ մօտենալով հընչում էր ահա
Մատաղ վըացուհու ձայնը պատանի,
Այնպէս ընտկան, այնպէս կենդանի,
Այնպէս քաղցը, ազատ, որ կարծես թէ նա
Սիրելի մարդկանց անւան հընչիւննիր
Միայն կանչելու սովորած լինէր:
Այն մի հասարակ երգ էր լեռնային,
Խոր տպեց սակայն իմ մտքի միջին,
Եւ իմ ալանջին—հէնց մութն ընկնում է—
Մի անտես, անյայտ սգի երգում է.

«Սափորն ուղիղ բռնած ուսին
Նեղ շաւիղով վըրացուհին
Ջուրն էր իջնում: Երբեմնակի
Քարերի մէջ սայթքում էր նա
Ծիծաղելով իրեն վըրա:
Այնպէս աղբատ ու պարզ հագած,
Չղարշի ծալքերն հտև ձըգած,
Թեթեաքայլ գընում էր նա:
Թէժ արևը, շոգն ամառւայ
Նրա գէմքն ու կուրծն այրելով
Պատեղ էին սսկեայ սոււերով:
Տաղ էր շնչում գէմքը բոլոր,
Եւ աչքերի մութն այնքան խոր,
Այնքան սիրոյ գաղտնիքով լի,
Որ մտքերըս վեթորկալի
Չըփոթւեցին: Յիշում եմ խոր
Կըժի ձայնը, ջուրը երբ որ
Մէջն էր թափում մեղմաքըրիչ,
Ու սօսափիւնն... ուրիշ ոչինչ:
Երբ որ ուշքի եկայ կըրկին,
Ու հտ քաշեց սրախ արինն,
Չտա էր արդէն նա հեռացած,
Եւ գնում էր թեթեւ, կամաց,
Չիտակ իրեն բեռան տակին,
Որպէս դաշտի շըքեղ բարդին...»

Մի քիչ հեռու, սառը միզում,
Որպէս ընկեր, ժայռի գըրկում
Բուսել էին երկու տընակ.
Հարժ կըտուրի վրայից մէկի
Ծուխըն ելնում էր կապուտակ:
Ես տեսնում եմ այժմ էլ, ասես,
Ինչպէս նըրա դուռը բացուեց
Ու կամացուկ փակեց դարձեալ...
— Դո՛ւ, ես գիտեմ, չես հասկանալ
Իմ տխրութիւնն, իմ վիշտն անհաս.
Եւ կը ցաւեմ թէ հասկանաս.
Թող յիշատակն այն վայրկենի
Ինձ հետ, իմ մէջ մընայ — մեռնի:

XIV

«Յոգնած գիշերայ նեղութիւններից
Պառկեցի սուերում: Զուտով սփոփիչ
Քունը աչքերըս փակեց ահամայ
Եւ ես միւս անգամ երազում տեսայ
Չըքնաղ պատկերը այն վըրացուհու,
Եւ մի անսովոր, գիւրեկան թախիծ
Անուշիկ ճմլեց իմ սիրաը նորից:
Ես ճգնում էի շունչըս քաշելու,
Յանկարծ արթնացայ: Արդէն երկնքում
Փայլում էր լուսինն, ու մինակ մի ամպ
Սողում էր նրա ետեից թագուն,
Բաց արած իրեն գիրկն ագահութեամբ.

Կարծես թէ իրեն որսը լինէր այն:
Լուռ էր ու խաւար աշխարհը համայն.
Գագաթները միայն ձիւնոտ սարերի,
Ինչպէս արծաթեայ ծոպեր ահուելի,
Պըսպղում էին առաջիս—հեռում,
Հեղեղատը խուլ ճըղփում ավերում:
Ծանօթ խրճիթում երբեմն վառում
Ու մերթ հանգչում էր աղօտ մի կըրակ.
Այնպէս է հանգչում գիշեր ժամանակ
Պայծառ աստղիկը երկնքում փայլող:
Ես ուզում էի... բայց չէի կարող
Ես այնտեղ մտնել: Ես այն ժամանակ
Հոգումս ունէի լոկ մի նպատակ—
Համեւ հայրենիք. ու համբերեցի
Քաղցի, ծարաւի, որքան կարացի:
Եւ ահա անձայն ու երկչոտ ընկայ
Ես ուղիղ ճամբայ:
Բայց շատ չըքաշեց, անտառի խորքում
Սարերը դարձեալ աչքիցըս ընկան,
Եւ ըսկսեցի կորցընել ճամբան:

XV

«Անդուսպ կատաղած երբեմն իզուր
Պոկ էի տալի ես յուսակըտուր
Իրար խըճըճւած բաղիզ ու մացառ.
Զուրջըս անտառ էր, անեղբր անտառ,
Հետդհետէ խոր, խիտ ու ահուելի.

Եւ բաղմութիւնով սե սե աչքերի
Գիշերւայ մութը հետևում էր ինձ
Ամեն մի թըփի, ճիւղի արանքից:
Գըլուխս սկսաւ արդէն պըտըտել.
Ծառեր բարձրացայ, ուղեցի գիտել,
Բայց մինչև անգամ երկնի եղերքում
Նոյն ժանիքաւոր անտառն էր ձգւում:
Այնժամ յուսահատ վայր ընկայ կըրկին,
Հեկեկում էի, լալիս դառնազին
Եւ հողի խոնաւ կուրծքն էի կըծում,
Արտասուքներըս վայր էին հոսում
Նըրա երեսին տաք ցօղի նըման...
Բայց յօժար չէի մարդոց օգնութեան.
Խորթ էին ընդմիշտ ինձ համար մարդիկ:
Եւ եթէ յանկարծ կարճատև մի ճիւղ
Ինձ դաւաճանէր, գիտցիր, ծերունի,
Լեզուս արմատից պէտքէ պոկէի:

XVI

«Մանուկ ժամանակ, քո միտն է գալիս,
Ես չըգիտէի երբէք արտասուել,
Բայց այնտեղ չէի ամաչում լալիս:
Ո՞վ էր տեսնելու, մըթին ծմակը,
Մին էլ երկնքում սահող լուսնեակը:
Լուսաւորւած նըրա լուսով,
Ծածկւած մամուլ ու աւազով,
Խիտ ծըմակով շըջափակւած»

Բացասն էր իմ առջևն ընկած:
Յանկարծ այնտեղ անցաւ մի սոււեր,
Եւ հըրեղէն երկու կայծեր
Պըսպղացին... ապա թէ այն
Մութ թաւուտից ինչոր գազան
Մի ոստիւնով թռաւ, պառկեց,
Աւազի հետ խաղալ սկսեց:
Այն անտպատի մշտական տէրը—
Հուժկու յովազն էր: Հում հում ոսկորը
Կըծոտում էր նա, ուրախ մըրմուռում,
Երբեմն արիւնոտ հայեացքը յառում
Ու փաղաքշարար պոչը շարժելով՝
Նայում լըացած լուսնեակի վրան,
Եւ փայլում էր մազն արծաթի նման:
Սպասում էի ես մի ճիւղ բըռնած
Կուլի վայրկենին. ու սիրտս յանկարծ
Բոբըռեց արեան, կուլի ծարաւով...
Հն՛, բոլորովին այլ ճանապարհով,
Այլ շաւիղով էր ինձ բախտը տանում,
Բայց համողւած եմ այժըմ նըրանում,
Որ մեր աշխարքում
Ես էլ կըլնէի քաջերի շարքում:

XVII

«Սպասում էի: Արդէն գիշերւայ
Մըթնում թշնամու հոտն առիւ էր նա,
Եւ մոնչիւնը երկնք, սըրտահեծ,

Որպէս հառաչանք յանկարծ տարածւեց...
Աւազը թաթով կատաղած փորեց,
Ծառս եղաւ, յետոյ փորըսող արեց,
Եւ մի ցատկելով սակաւ էր մընում
Իսկոյն ինձ մահի բաժին էր անում.
Բայց հանդիպեց իմ հարւածին:
Ծանրը ճիւղը ինչպէս կացին
ձեղքեց նորա ճակատը լայն...
Նա հառաչեց մարդու նման
Ու շուռ եկաւ: Սակայն նորից,
Թէև նըրա խոր վէրքերից
Հոսում էր յորդ արիւնն այնքան—
Վառւեց կռիւն օրհասական:

XVIII

«Ընկաւ կրծքիս. բայց շտապով
Նըրա կոկորդն ես կոխեցի,
Երեք անգամ պըտըտեցի
Միակ ղէնքըս... նա հառաչեց,
Իրեն բոլոր ոյժն հաւաքեց,
Եւ մենք, ինչպէս օձեր, կըպած,
Ընկերներեց ամուր գըրկւած
Գլորեցինք, ու խաւարում
Գետնի վրա էինք կըուում:
Այն վայրկենին ես էլ էի
Ինչպէս յովաղ շար, կտտաղի.
Ես վառւում էի, ժնգժնգում իր պէս,

Ես ինքս էլ ծնւած լինէի կարծես
Յովազների ու զայլերի միջին,
Թարմ անտառների հովանու տակին:
Մարդկային բարբառն, այնպէս էր թւում,
Մոռացել էի, և հէնց իմ կրծքում
Այն սարսափելի կռիւնն էր ծնւել,
Կարծես թէ լեզուս ծնընդից ի վեր
Ուրիշ ձայների անսովոր լինէր...
Բայց իմ թշնամին սկսաւ թուլանալ,
Գէս դէն երեբայ ու ծանրը հեւլ.
Վերջին անգամ հուպ տուա ինձ,
Կանգնած աչքերն սպառնալից
Փայլկըտեցին, ապա հանգան
Ծածկւած քընով յաւերժական:
Բայց յաղթանակող թշնամու դիմաց
Կանգնած հանդիպեց նա իր օրհասին,
Ինչպէս վայել է կուում հերոսին...

XIX

«Իմ կրծքի վրա տեսնում ես դեռ նոր
Նըրա ճանկերի հետքերը խոր խոր.
Չեն առողջացել նրանք տակաւին,
Գեռ չեն ծածկըւել, բայց հողի տակին
Նորից կըբացւեն ու կըթարմանան,
Եւ կառողջացնի մահը յաւիտեան...
Մոռացել էի ես այնժամ նրանց,
Եւ իմ մնացած ոյժը հաւաքած

Գնում էի միշտ թաւուտ անտառում...
Սակայն բաղդիս հետ դուր էի կուում—
Նա ծաղրում էր ինձ և արհամարհում:

XX

«Գուրս եկայ կրկին բերանն անտառի.
Օրը բացեցաւ, արժգոյն աստղերի
Բոյլը չբացաւ նըրա շողերում:
Ըսկաւ ծըխալ աուլը հեռում
Եւ մութ անտառը շըրշել արթնացած:
Ներքև հովիտում հողմի հետ յանկարծ
Մի ժըխոր անցաւ... վրա նստեցի.
Բայց նա հողմի հետ լըռեց վերստին:
Իմ չորս կողմերը ես աչքըս ածի.
Կարծես այն տեղերն ինձ ծանօթ էին:
Սարսափելի էր այս միտքն ինձ համար,
Եւ չէի ուզում հաւատալ երկար,
Թէ կրկին բանտս եմ ես վերադարձել,
Թէ այնքան օրեր դուր եմ մտածել,
Փայփայել գաղտնի միտքը նւիրական,
Տառապիլ, տանջւել, համբերել այնքան.
Եւ բոլորն ինչո՞ւ.—որ այս հասակում,
Դեռ նոր բացարած աչքըս աշխարքում,
Թաւ անտառներում շունչ ու կեանք առած,
Աղատ աշխարքի, կեանքի սովորած,
Ինձ հետ միասին տանեմ գերեզման
Այրող կարօտը սուրբ հայրենիքիս,

Խիստ նախատինքը խաբած յոյսերիս
Եւ ամօթանքը ձեր կարեկցութեան...
Սակայն տակաւին կասկածներով լի
Կարծում էի թէ՛ հրազում էի,
Երբ յանկարծակի խաղաղ օդի մէջ
Զանգի դօղանջը հեռւից տարածեց.
Այստեղ ինձ համար բոլորը բացեց...
Օ՜ֆ, ճանաչեցի իսկայն ես նըրան.
Չատ է փախցըրել նա իմ մանկական
Կարօտ աչքերից վառ երազներիս
Թանգ տեսիլքները,—հարազատներիս,
Աղատութիւնը վայրի դաշտերի,
Եւ նժոյգները թեթեւ, կատաղի,
Եւ կռիւները ժայռերի միջին,
Ուր յաղթում էի մենակ ամենքին...
Անլաց, ուժասպառ լըսում էի ես:
Սրտիս միջիցն էր դուրս գալի, ասես,
Կարծես թէ մէկը անընդհատ դարկով
Զարկում էր կըրծքիս ծանըր երկաթով:
Եւ ես անորոշ այնժամ հասկացայ,
Որ այնուհետև դէպի հայրենիք
Երբէք ինձ համար էլ ճամբայ չըկայ:

XXI

«Հն՛, արժանի եմ վիճակիս, հայրիկ.
Հըղօր նժոյգը օտար դաշտերում
Իր վատ հեծւորին վայր է գլորում,

Հեռու աշխարհից դէպի հայրենիք
Գտնում է ուղիղ ու կրճատ ուղի...
Ի՞նչ եմ նըրա մօտ:—Ձուր է սիրտս լի
Այսքան թախիժ, տենչ ու փափագ.
Այս ջերմ է լոկ թոյլ ու դատարկ,
Ցնորքի մի խաղ, խելքի խանգարում:
Ինձ վրա բանտը իրեն կընկըը
Թողել է արդէն... Այսպէս է լինում
Անլոյս խաւարում բուսած ծաղիկը.—
Քարերի միջին դալուկ ու մենակ,
Թերթիկները փակ, երկար ժամանակ
Մընաց արևի շողերին զըւարթ:
Օրեր անցկացան, ու բարի մի մարդ
Կարեկցութիւնից հանելով նըրան
Փոխում է պարտէզ, վարդին հարևան:
Ամենայն կողմից փարթամ ու շքեղ
Կեանքի քաղցրութիւն շնչում է այնտեղ...
Բայց ի՞նչ դուրս եկաւ. հենց օրը բացւեց,
Եւ արշալուսի ցոլքը տարածւեց—
Նըրա վառվռուն շողերն այրեցին
Խաւարչտին բանտում սովորած ծաղկին...

XXII

«Ինձ ևս այնպէս, ինչպէս և նըրան
Այրում էր տապը անողորմ օրւան:
Իզուր էի ես ծածկել աշխատում
Ցոգնած զըլուխս չորացած խոտում,

Փուշ պսակի պէս նրա տերերը,
Խճըճւում էր իմ ճակտիս վերերը,
Երկիրն երեսիս կըրակ էր շնչում,
Եւ պըսպղալով կայծերը օդում
Պարտում էին: Ենում էր շոգին
Սիպտակ ժայռերից: Ասածոյ աշխարքին
Կաշկանդել էր խուլ, գերեզմանական
Ծանրը մըրափը յուսահատութեան:
Գէթ լորամարգին ճուռոգէր, խօսէր,
Կամ թէ ճըպուռի ճըռոցը լսէր,
Կամ թէ մանկական թոթովն առևակի...
Հէնց օձն էր մենակ, որ աշնան մարգի
Չորացած խոտը դէս դէն շարժելով,
Դեղնաւուն մէջքով փայլկըտին տալով՝
Փխրուն աւաղը ախօսում, տողում,
Ջգոյշ սողում էր, քնքշալով խաղում,
Եռակի ոլրում, օղ շինում ազին
Ու մին էլ, յանկարծ, կարծես թէ շանթած,
Իրեն նետում էր, թռչում սըրնթաց,
Թագչում հեռաւոր թըփերի տակին...

XXIII

«Եւ ողջ երկնքում մեզմ էր ու պայծառ:
Մըշուշի միջից հեռում երկու սար
Սեին էին տալիս: Մէկի ետեից
Մեր մենաստանը ժանիքները ցից
Իրեն պարըսպով երևում էր ինձ:

Կուրն ու Արագւան ներքե, հովիտում
Իրենց արծաթեայ երիզով պատում
Թարմ կըզղիների ըստորտաները,
Ու լըւանալով շրշուն թըփերը,
Սուր հոսում էին ընկած իրարու...
Նրանք ինձանից շատ էին հեռու:
Ասի վերկենամ— սահայն առաջիս
Ամեն բան արագ պտոյտ էր գալիս.
Ասի թէ կանչեմ— լեզուս ցամաքած
Առանց հնչիւն էր, անշարժ, կարկամած...
Մեռնում էի ես: Տանջում էր մահւան
Չառանցանքը ինձ: Այնպէս էր թւում,
Թէ խոր գետի նամ յատակում
Պառկած էի— և իմ բոլոր
Չուրջըս մուսլ խորհրդաւոր:
Եւ, յագեցնելով ծարաւս անյագուրդ,
Ջըրի հոսանքը, սառցի նըման ցուրտ,
Խոխոջ հանելով կուրծքըս էր մանում...
Ես միայն քնելուց էի վախենում—
Այնքան դիւրեկան, այնքան էր քաղցըր...
Իսկ իմ վերեր, ինձանից բարձրը,
Խըռնում էին ալիքն ալիքին.
Արևը նրանց բիւրեղի միջից
Լուսնից էլ անուշ նշողում էր ինձ...
Եւ խայտաճամուկ պարը ձկների
Մերթ մերթ խաղում էր այն լուսի տակին:
Եւ յիշում եմ ես նրանցից մէկին.

Նա, ուրիշներից քաղցըր աւելի,
Փաղաքչում էր ինձ մտերիմ սիրով.
Մէջըր ծածկըւած ոսկեայ թեփերով,
Խայտում էր գլխիս վերե, խլըրտում,
Եւ խորն էր այնքան, քնքոյշ ու տրտում
Հայեացքը նըրա կանաչ աչքերի...
Եւ ես անկշտում հիացած էի:
Արծաթահնչիւն նըրա ձայնիկը
Ինձ զարմանալի բաներ էր պատմում.
Նա մէկ լուում էր, մէկ նորից երգում:
Նա— ասում էր.

«Իմ պատանի,
Այստեղ ինձ հետ կաց միասին.
Սառն ու հանգիստ միշտ կըլինի
Ազատ կեանքը ջըրային:

«Իմ քոյրերին ես կըկանչեմ,
Մենք, միասին պար բըռնած,
Կը խնդացնենք մուսլ գէմբըզ
Եւ քո հոգին վաստակած:

«Քնի՛ր, մահիճդ ահա փափուկ
Ու վերմակըզ թափանցիկ...
Կանցնեն տարի՛ք, կանցնեն դարե՛ր
Երազներում գեղեցիկ:

«Օ՛, պատանի, սիրում եմ քեզ,
Ահա իմ ողջ գաղտնիքը,
Սիրում—ջրբի ալիքի պէս,
Սիրում—ինչպէս իմ կեանքը...»

Եւ երկամբ, երկար ես լսում էի.
Եւ կարծես հնչուն ալիքը ջրբի
Խառնում էր իրեն մրմունջը խորին
Այն սսկեթեփուկ ձրկան բառերին:
Այստեղ ինձ կտրցրի: Աչքերըս մթնեց.
Ջառանցանքն հատաւ ու տեղի տւեց
Տկարութեանը վաստակած մարմնիս...

XXIV

«Այսպէս գտան ինձ ու վերցրին...
Մնացածն արդէն յայտնի է քեզ:
Ես վերջացրի: Այժմ կուզես
Մի հաւատար, այդ չեմ հարցնում,
Մի բան է միայն ինձ տխրեցնում,
Որ իմ դիակն այստեղ—հեռու,
Իմ մայր հողում չի փրթելու,
Եւ ցաւերիս վէպքը տըրտում
Ձեռն պատմելու խուլ խրճիթում,
Որ մէկն ուշքով լսի ու լայ
Իմ տխրալի անւան վըրս:

XXV

«Մնաս բարեաւ, հայր... քո ձեռքը սուր ինձ.
Տեսնում ես, իմըս ինչպէս այրում է...
Այս բոցն, իմանան, մանուկ օրերից
Իմ կրծքի տակին ծածկւած մընում է.
Բայց հիմա արդէն էլ սնունդ չըկայ,
Եւ իրեն բանտը ողջ լափել է նա:
Վերադառնում է նրա մօտ կրկին,
Որ օրինաւոր կարգով ամենքին
Տալիս է տանջանք և հանգստութիւն...
Բայց ինչ եմ անում. թէկուզ դրախտում,
Ամպերից վերեւ—այն սուրբ աշխարքում
Իմ հոգին իրեն հանգիստ ունենար...
Ա՛խ, միայն մի քանի վայրկենի համար,
Մռայլ, վիթխարի այն ժայռերի մէջ,
Ուր անց եմ կտցրել օրերս մանկութեան,
Կըտայի ես ողջ—դրախտ, յաւիտեան...»

XXVI

Երբոր, ծերունի, մեռնելու լինեմ,
Եւ գիտեմ—երկար չըպիտի ապրեմ,—
Դու հրամայիր դիակս տանելու
Մեր կանաչ այգին, այնտեղ, ուր երկու
ձեռմակ հակակի թփեր են ծաղկում...
Խոտն այնպէս խիտ է նրանց արանքում,

Եւ անուշաբոյր թարմ օդը այնպէս,
 Այնպէս թափանցիկ, այնպէս ոսկեշող
 Տերեւն արեւի տակին խաղացող...
 Դու հըրամայիր ինձ այնտեղ թաղին:
 Պայծառ ցերեկի փայլով ոսկեղէն
 Վերջին անգամը կարբենամ գէթ ես:
 Կովկասն այնտեղից կերեայ նոյնպէս:
 Կարելի է հով դեփիււնների հետ
 Ուղարկի նա ինձ վերջին հըրածեշա
 Իր բարձունքներից հզօր, աննըւաճ...
 Ու իմ ականջին, օրհասից առաջ
 Կըհնչի դարձեալ հարադատ մի ձայն:
 Եւ կըմտածեմ, թէ ընկերս է այն,
 Կամ թէ եղբայրըս վրաս կտրացած՝
 Զգոյշ ձեռքերով դէմքիցս կամաց
 Մահւան սառնամած քրտինքն է սրբում
 Ու մեր տան մասին կիսաձայն երգում...
 Եւ ես այս մըտքով խաղող կըհանգչեմ,
 Էլ չեմ գանգատուի սշոքի ընդդէմ...»



Ց Ա Ն Կ.

Ե Բ Գ Ե Բ

	Երէ-
Նախերգանք.	7
Գութանի երգ.	9
Հին օրհնութիւն	11
է՛յ, աստղեր	13
Համերգ.	14
Մի որոնիր.	15
Ա՛խ, ես կըանի	16
Սարերում.	17
Ուրու.	19
Իմ սէրը.	20
Կարօտ.	21
Վատ օրեր	22
Իմ երգը.	23
Երկու սև ամպ.	24
Այլազովսկու նկ. առջև.	25
Ժպտուն աչքեր.	26
Եթէ մի օր	27
Անդարձ ճամբորդներ.	28
Երկար գիշերներ	30
Տրամութեան սաղմոս I	31
» » II	32
Տխուր գիշեր	33
Ինչո՞ւ այդպէս	34
Մեր նախորդներին	36
Ընկերիս.	37
Դու քո ճամբէն.	38
Պանդուխտ եմ, քոյրիկ.	40

Լ Ե Գ Ե Կ Գ Ե Բ

	Երէս
Չունն ու Կատուն	45
Արթամար	48
Անրախտ վաճառականներ	52
Անիծած հարսը	58
Արծիւն ու Կաղնիին	62
«Պօղոս-Պետրոս»	64
Լուսաւորչի կանթեղը	68
Փարւանա	70

Պ Օ Է Մ Ե Բ

Մարօ	83
Անուշ	93
Լօւեցի Սարօն	131
Դէպի Անհունը	143
Սասունցի Դաւիթը	163
Պօէան ու Մուսան	205

Ք Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ր Ք Ի Ր Ե Ե Բ

Փիրղուսի	223
Անձուկ, Շիււերի	224
Հիւանդ հմ, մայրիկ, Հիմնասի	226
Մանուկներին, Լօնգֆելլօ	227
Եթէ իրաւ է, Պուշկին	229
Ջրահեղձը »	230
Օլէզի երգը »	234
Դեղջուկի մտորմունքը, Կայլցով	239
Մեռաւ իմ մուգան, Նադսօն	241
Դեցիմ Լաբերիոս	243
Աքիլէս	248
Չիլիոնի կալանաւորը, Բայրօն	257
Մծիբի, Լերմոնտով	273

$\frac{1}{3}$ 9/11/11

ՀՀ Ազգային գրադարան



NL0333604

32274